Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից	Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից	Իրականացնող՝ Իրավաբանների հայկական ասոցիացիա	Իրականացնող՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա	Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա՝ ի դեմս «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության

ՀՀ արդարադատության նախարարի հունվարի 22-ի թիվ 19-Ա հրամանով ստեղծված Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խումբ

ԵՐԵՎԱՆ,

Հունիս 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

Հակակոռուպցիոն մարմինների մոդելները 10

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն մարմինը 12

ԳԼՈՒԽ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ 17

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 17

1. 1 Ուկրաինայի հանրապետություն 17

1.2 Վրաստանի Հանրապետություն 24

1.3 Մոլդովայի Հանրապետություն 29

1.4 Լատվիայի Հանրապետություն 35

1.5 Լիտվայի Հանրապետություն 40

1.6 Էստոնիայի Հանրապետություն 47

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳՆ 52

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 52

2.1 Բոսնիա - Հերցեգովինա 52

2.2 Բուլղարիա 53

2.3 Խորվաթիա 54

2.4 Լեհաստան 56

2.5 Ռումինիա 58

2.6 Սերբիա 61

2.7 Սլովենիա 62

2.8 Չեխիայի Հանրապետություն 65

2.9 Հունգարիա 67

2.10 Մակեդոնիա 68

2.11 Կոսովո 69

2.12 Մոնտենեգրո 70

2.13 Ալբանիա 72

2.14 Սլովակիա 74

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ 76

3.1 Բրազիլիա 76

3.2 Կանադա 78

3.3 Արգենտինա 81

3.4 Պերու 83
3.5 Ամերիկայի Միացյալ Նահանգներ 84
4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳՆ 87
ԱՍԻԱՅՈՒՄ 87
4.1 Հոնգ Կոնգ 87
4.2 Սինգապուր 90
4.3 Հարավային Կորեա 92
4.4 Ինդոնեզիա 94
4.5 Մալազիա 97
4.6 Թայլանդ 99
4.7 Բութան 102
5. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳՆ 104
ՕՎԿԻԱՆԻԱՅՈՒՄ 104
5.1 Նոր Զելանդիա 104
5.2 Ավստրալիա 107
5.2.1 Արևմտյան Ավստրալիայի Կոռուպցիայի և հանցագործության դեմ պայքարի կոմիտե (WA Corruption & Crime Commission) 107
5.2.2 Հարավային Ավստրալիայի Կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողով (SA Independent Commissioner Against Corruption) 109
5.2.3 Նոր Հարավային Ուելսի Կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողով (NSW Independent Commission Against Corruption) 110
6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳՆ 113
ԱՖՐԻԿԱՅՈՒՄ 113
6.1 Բոտսվանա 113
ԳԼՈՒԽ II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՐՄՆԻ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 115
1. ՀՀ գործող հակակոռուպցիոն մարմնի ինստիտուցիոնալ թերությունները 115
2. ՀՀ հատուկ քննչական ծառայությունը՝ որպես պետական ծառայության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործություններ քննող մարմին 118
4. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով 120
5. Վերահսկիչ պալատ 123
6. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն մարմնի բարեփոխման առաջարկություններ 124
Օգտագործված գրականության ցանկ 136

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հակակոռուպցիոն մարմինը միջազգային հարթակում

Արտասահմանյան երկրների փորձը վկայում է այն մասին, որ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակով արտասահմանյան երկրների կողմից որդեգրված քաղաքականությունը զարգանում է մեկ ուղղությամբ՝ ձևավորել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ անկախ մարմին, որը համապարփակ ձևով կկանոնակարգի կոռուպցիայի նվազեցմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացումը։

Կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային առաջադեմ իրավական քաղաքակրթությունը մշակել է միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք սահմանում են կոռուպցիայի դեմ պայքարում արդյունավետ պայքարի միասնական կանոններ։

Այդպիսի փաստաթղթերից է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 31–ին Նյու Յորքում ընդունված Կոռուպցիայի դեմ կոնվենցիան։[1] Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցան դեռևս 2005 թվականի մայիսի 19–ին, իսկ վավերացրել այն՝ 2007 թվականի մարտի 8–ին։

Այդ Կոնվենցիայի նպատակներն են.

ա) կոռուպցիան կանխարգելելուն և դրա դեմ ավելի արդյունավետ և ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը և ուժեղացումը.

բ) կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում, այդ թվում՝ արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը և օժանդակումը.

գ) պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսումը։

Կոնվենցիան այդ նպատակների իրագործման ուղղությամբ սահմանում է այն առաջնահերթ միջոցառումները, որոնք պետք է նախաձեռնվեն կոնվենցիային միացող պետությունների կողմից, միևնույն ժամանակ՝ ներածությունում նշելով, որ այդպիսի

[1] Տե՛ս http://www.un.am/res/UN%20Treaties/XI_9.pdf

համապարփակ և համակողմանի մոտեցումն անհրաժեշտ է կոռուպցիայի արդյունավետ կանխարգելման և դրա դեմ պայքարի համար։

Այդպիսի միջոցառումներից է Կոնվենցիայի 36–րդ հոդվածի ներքո ամրագրված հակակոռուպցիոն մասնագիտացված անկախ մարմնի ստեղծումը։

Այսպես, այդ հոդվածում նշվում է.

«Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում՝ իրավապահ միջոցների օգնությամբ: Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթները առանց որևէ անհարկի ազդեցության: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների աշխատակիցները իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ եւ պաշարներով»:

Վերոհիշյալ հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ կոռուպցիայի դեմ պայքարող մասնագիտացած մարմինը պետք է օժտված լինի հետևյալ հատկանիշներով.

ա) անկախությամբ, որպեսզի իր գործառույթներն իրականացնի առանց որևէ անհարկի ազդեցության,

բ) պատշաճ որակակավորմամբ իր խնդիրների կատարման համար և

գ) պաշարներով։

Հարկ է նաև նշել, որ **Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի» կոնվենցիայի** 20-րդ հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ անձինք կամ կազմակերպությունները մասնագիտանան կաշառակերության դեմ պայքարում: Նրանք պետք է ունենան **անհրաժեշտ անկախություն**, այդ Կողմի իրավական համակարգի հիմնական սկզբունքներին համապատասխան, որպեսզի հնարավորություն ունենան իրենց գործունեությունն իրականացնել **արդյունավետորեն և առանց որևէ անհիմն ճնշման**: Կողմը պետք է ապահովի, որ նման կազմակերպությունների աշխատակազմերը իրենց գործունեության համար ունենան **բավարար պատրաստվածություն և ֆինանսական միջոցներ»:***

Կոռուպցիայի դեմ պայքարի հակակոռուպցիոն անկախ մարմնի ստեղծման անհրաժեշտության մասին խոսվում է նաև Կոռուպցիայի դեմ պայքարի միջամերիկյան կոնվենցիայում և Աֆրիկյան տարածաշրջանային մակարդակում գործող համապատասխան միջազգային փաստաթղթերում:

Բացի այդ, 2012 թվականի հակակոռուպցիոն մարմինների **Ջակարտայի սկզբունքների** համաձայն արդյունավետ և անկախ հակակոռուպցիոն մարմինների գործունեության հիմքում ընկած պետք է լինեն հետևյալ սկզբունքները՝

- *Մանդատ*: հակակոռուպցիոն մարմինները պետք է կոնկրետ մանդատով օժտված լինեն կոռուպցիայի կանխարգելման, կրթման, իրազեկման բարձրացման, հետաքննության միջոցով պայքարելու համար
- *Համագործակցություն*: հակակոռուպցիոն մարմինները չպետք է մեկուսի գործեն: Աշխատանքային արդյունավետ հարաբերություններ պետք է ձևավորվեն պետական տարբեր մարմիններին, քաղհասարակության, մասնավոր սեկտորի և այլ շահառուների հետ
- *Կայունություն*: նման մարմինների ստեղծումն ու գոյությունը պետք է հիմնվի հատուկ օրենքի կամ Սահմանադրության վրա, ինչը կերաշխավորի գոյության և գործունեության կայունությունը
- *Նշանակելիություն*: մարմնի ղեկավարը պետք է նշանակվի այնպիսի գործընթացում, որը ապաքաղաքականացված է, չեզոք և անկողմնակալ
- *Շարունակականություն*: մարմնի ղեկավարի պաշտոնանկության, թոշակի անցնելու կամ այլ դեպքում նրա գործառույթներն ու լիազորությունները պետք է իրականացվեն նույն մարմնի մեկ այլ անդամի կողմից՝ մինչև նոր ղեկավարի նշանակումը
- *Պաշտոնանկություն*: Հակակոռուպցիոն մարմնի ղեկավարները պետք է մշտական հիմունքներով աշխատեն և ազատվեն պաշտոնից միայն օրենքով նախատեսված ընթացակարգով
- *Էթիկապես ընդունելի վարքագիծ*: մարմինները պետք է վարքագծի կանոնագրքեր ընդունեն և իրենց աշխատանքները համապատասխանեցնեն էթիկայի ընդունված նորմերին ու ստանդարտներին

- *Անձեռնմխելիություն*: Մարմնի ղեկավարն ու աշխատակազմը պետք է իրենց մանդատի շրջանակներում իրականացրած գործառույթների համար քրեական և քաղաքացիական պատասխանատվությունից ազատ լինեն
- *Վարձատրություն*: մարմնի աշխատակազմը պետք է պատշաճ և բավարար մարդկային ու ֆինանսական ռեսուրսներ ունենա իր առջև դրված աշխատանքները իրականացնելու նպատակով
- *Մարդկային ռեսուրսների կառավարում*: հակակոռուպցիոն մարմինը պետք է բավարար լիազորություն ունենա անձամբ իր աշխատակազմը ձևավորելու, փոփոխելու և աշխատակիցներին ազատելու հարցում
- *Ֆինանսական անկախություն*: ստացված ֆինանսական հատկացումները պետք է ազատորեն տնօրինվեն անմիջապես այդ մարմնի կողմից
- *Ներքին հաշվետվողականություն*: մարմնի կողմից պետք է մշակվեն կանոններ և ընթացակարգեր, ներառյալ՝ մոնիթորինգ և կարգապահական պատասխանատվության հնարավորություն, որոնք կկանխեն լիազորությունների չարաշահումը
- *Արտաքին հաշվետվողականություն*: մարմինը իր գործունեությունը պետք է ծավալի իրավունքի գերակայության սկզբունքների ներքո և ենթարկվի լիազորությունների չարաշահման արգելքի ընդունված կանոններին
- *Հանրային հաշվետվողականություն*: առնվազն յուրաքանչյուր տարի մեկ անգամ մարմինը պետք է իր գործունեության արդյունքները ներկայացնի հանրությանը
- *Հանրային մասնակցություն*: պարբերաբար մարմնի աշխատանքներին պետք է ներգրավվեն հասարակության ներկայացուցիչները՝ հանրային վստահություն և արդյունավետ աշխատելառճ ապահովելու համար[2]

[2] Jakarta Statement on Principles for Anti-Corruption Agencies, 2012, available at http://www.undp-pogar.org/publications/ac/aciac/JAKARTA%20STATEMENT%20-%20Principles%20for%20Anti-Corruption%20Agencies%20-%2026-27%20November%202012.pdf

Կոռուպցիայի դեմ պայքարի համար ստեղծված մարմինների գործունեության հիմքում նույն սկզբունքների առկայությունն է արձանագրվել նաև **Թրանսպարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կոալիցիայի** կողմից[3]:

Նախարարների կոմիտեի 1997թ. Նոյեմբերի 6-ի ԵԽ Հանձնարարական 97 (24)-ոց սահմանվել են **Կոռուպցիայի դեմ պայքարի 20 ղեկավար սկզբունքները:**

Դրանցից են՝ անկախություն, ինքնավարություն, անպատշաճ ազդեցությունից զերծ, արդյունավետ միջոցների ապացույցների ձեռքբերման համար, աջակիցների պաշտպանություն, քննության գաղտնապահություն, մասնագիտացում, համապատասխան միջոցների տրամադրում և վերապատրաստումներ:

Եվրոպական գործընկերներն ընդդեմ կոռուպցիայի (EPAC) և Կոռուպցիայի դեմ պայքարի եվրոպական ցանցը (EACN) 2011թ նոյեմբերին ևս սահմանել են հակակոռուպցիոն մարմնի ստանդարտներ: Դրանք են՝ Օրենքի իշխանություն; Անկախություն; Հաշվետվողականություն; Օրինավորություն և անկողմնակալություն; Հասանելիություն; Թափանցիկություն և գաղտնապահություն; Ռեսուրսներ; Կարիերա և վերապատրաստումներ; Համագործակցություն; Կոռուպցիան կանխարգելելու և դրա դեմ պայքարելու հոլիստիկ մոտեցում:

Գլենիստերն ընդդեմ Հարավային Աֆրիկայի Հանրապետության և այլոց [4] գործում երկրի Սահմանադրական դատարանը գտել է. *Պետության կողմից բավականաչ անկախ հակակոռուպցիոն մարմնի չստեղծումը խախտում է մի շարք մարդու իրավունքներ, ինչպես օրինակ հավասարության, մարդկային արժանապատվության, վարչական արդարադատության իրավունքը, սոցիալ-տնտեսական իրավունքները ընդհուպ կրթության, առողջապահության և կացարանի իրավունքը:*

Հակակոռուպցիոն մարմինների և կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուտների գործունեության քաղաքական կոնտեքստը տարբեր է և յուրաքանչյուր երկրում յուրովի է հանդես գալիս: **Սակայն, յուրաքանչյուր պարագայում բոլոր հակակոռուպցիոն**

---

[3] Available at http://www.transparency.org/news/feature/fighting_corruption_the_role_of_the_anti_corruption_commission

[4] (CCT 48/10) [2011] ZACC 6; 2011 (3) SA 347 (CC); 2011 (7) BCLR 651 (CC). Պարբերություն 198.

մարմիններին բնութագրող հիմնական հատկանիշն ու կենտրոնական սկզբունքը վերաբերվում է *անկախությանը*:

Կոռուպցիայի դեմ ինստիտուցիոնալ պայքարի արդյունավետությունը պահանջում է, որ այդ պայքարը ընթանա իրավունքի գերակայության միջավայրում և ապահովված լինի կայուն սահմանադրաիրավական հիմքով: Եթե իրավունքի գերակայությունն ու նման հիմքը բացակայում են, ապա հակակոռուպցիոն մարմինները արդյունավետ չեն աշխատի:

Անկախության սկզբունքի դերակատարումն ու կարևորությունը ուղղակիորեն կապված է կոռուպցիայի բնույթի հետ, քանի որ կոռուպցիան հիմնականում հավասարազոր է լիազորությունների չարաշահմանը: Հանրային բնույթի կոռուպցիոն գործերում պատասխանատուներից առնվազն մեկը հանդիսանում է պաշտոնատար անձ, և ինչքան բարձր է պաշտոնը, այնքան մեծ է իրականացվող լիազորությունների շրջանակը: Հետևաբար, **կոնկրետ մարմնից պահանջվող անկախության ծավալը ուղղակիորեն կապված է կոռուպցիայի, արդյունավետ կառավարման և իրավունքի գերակայության հետ**: Այսինքն, այն երկրները, որոնք պայքար են մղում բարձրաստիճան պաշտոնյաների կողմից իրականացվող կոռուպցիոն ռիսկերի դեմ, և որտեղ կա արդյունավետ կառավարման և օրենքները կիրառելու խնդիր, **ապա կոռուպցիայի դեմ պայքարը կտապալվի, եթե <u>հակակոռուպցիոն մարմինը բավականաչափ ուժեղ և անկախ չլինի</u>:** Ընդ որում, այն մարմինները, որոնք օժտված են և կանխարգելիչ և հետաքննչական ֆունկցիաներով, առավելագույն անկախություն են պահանջում:

Հակակոռուպցիոն մարմինների անկախության հարցը կապված է մի քանի ֆակտորներից՝

Օրենսդրական հիմք- հակակոռուպցիոն մարմինը պետք է հստակ օրենսդրական հիմքեր ունենա, որով կսահմանվի մարմնի մանդատը, ինստիտուցիոնալ պատկանելիությունն ու կառուցվածքը, ղեկավարի նշանակումն ու պաշտոնից ազատումը, ներքին կառուցվածքը, գործառույթները, իրավասությունն ու պարտականությունները, բյուջեն, համագործակցությունը այլ մարմինների հետ և այլն:

Հաշվետվողականություն և թափանցիկություն: Անկախ նրանից, թե ինչ տեսակի մարմին է և ինչպիսի ինստիտուցիոնալ պատկանելիություն ունի, հակակոռուպցիոն յուրաքանչյուր մարմին պետք է ինտեգրված լինի զսպիչների և հակակշիռների համակարգում՝ ժողովրդավարական կառավարում ապահովելու համար: Հաշվետվողականության ձևը պետք է հարմարեցված լինի տվյալ մարմնի

մասնագիտացվածության աստիճանին, ինստիտուցիոնալ պատկանելիությանը, գործառույթներին և այլ մարմինների հանդեպ ունեցած իրավասություններին[5]:

Առաջադեմ երկրներում գործող հակակոռուպցիոն մարմինների համակարգային ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանց գործառույթների (այն է՝ գործունեության ուղղությունների) շրջանակն ընդգրկում է.

ա) իրավապահ գործունեություն,

բ) կանխարգելիչ գործունեություն,

գ) կրթական գործունեություն:

Արտասահմանյան երկրների քաղաքականությունն այս առումով տարբերակված է. գոյություն ունեն երկրներ, որոնք կա՛մ համակարգում են 3 ուղղությունները միևնույն մարմնում, կա՛մ՝ բացառապես կրթական և կանխարգելիչ ուղղությունները՝ իրավապահը թողնելով նախնական քննություն իրականացնող մարմինների իրավասության շրջանակներում:

Հակակոռուպցիոն մարմինների մոդելները

Եթե փորձենք համակարգել արտասահմանյան երկրներում ներդրված հակակոռուպցիոն մարմինների մոդելները, ապա կստանանք հետևյալ պատկերը. կարելի է առանձնացնել երեք խումբ մոդելներ.

1. Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված և անկախ ունիվերսալ մարմին՝ օժտված իրավապահ մարմինների գործառույթներով (ՄՈԴԵԼ 1).

2. Կոռուպցիայի դեմ պայքարի առանձնացված ստորաբաժանում՝ իրավապահ մարմինների համակարգում (ՄՈԴԵԼ 2).

3. Կոռուպցիայի կանխարգելման, քաղաքականության մշակման և համակարգման հաստատություն (ՄՈԴԵԼ 3):

Առաջին մոդելն ունիվերսալ մոտեցում է ցուցաբերում կոռուպցիայի հաղթահարման նպատակով, որոնք սովորաբար ունենում են հետևյալ լիազորությունների շրջանակը. հետաքննական գործունեության իրականացում, կոռուպցիայի դեմ պայքարի

[5] OECD, Specialized anti-corruption institutions: Review of models, 2013

քաղաքականության մշակում, վերլուծական գործունեություն, կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելում, հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակում, հաստատում և իրականացում, քաղաքացիական հասարակության հետ համագործակցություն, տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն, մոնիթորինգ:

Նմանատիպ մոդել գործում է Հոնգ Կոնգում (Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողով) և Սինգապուրում (Կոռուպցիոն գործունեության քննության բյուրո): Այդ երկու երկրների հաջողված փորձը ոգեշնչել է մի շարք պետությունների իշխանություններին: Նմանատիպ մոդել գործում է նաև Լիտվայում (Հատուկ քննչական ծառայություն), Լատվիայում (Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի բյուրո), Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսում (Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողով), Բոտսվանում (Կոռուպցիոն գործերով և տնտեսական հանցագործությունների վարչություն), Ուգանդայում: Որոշ երկրներում՝ Կորեայում, Թայլանդում, Արգենտինայում և Էկվադորում կարելի է գտնել Հոնկոնգյան և Սինգապուրյան մոդելների տարրեր:

Երկրորդ մոդելը որդեգրած երկրներում կոռուպցիայի դեմ պայքարի առանձնացված ստորաբաժանումներ են գործում դատախազական, ոստիկանական համակարգերում: Այդ ստորաբաժանումները կարող են իրականացնել տարբեր գործառույթներ. օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացում, քրեական հետախուզության մարմինների կողմից կոռուպցիոն հանցագործությունների քննություն, կոռուպցիոն հանցագործությունների քննության ժամանակ օպերատիվ-հետախուզական և քննչական գործառույթների իրականացում: Սրանք այն իրավապահ մարմիններն են, որոնք որոշ դեպքերում իրականացնում են կանխարգելիչ, համակարգող և քննչական գործառույթներ: Սա հակակոռուպցիոն մարմնի, թերևս, ամենատարածված մոդելն է հատկապես Արևմտյան Եվրոպայում:

Այս մոդելն են որդեգրել Նորվեգիան (Տնտեսական և շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունների հետաքննության և քրեական հետապնդման նորվեգական ազգային վարչություն), Բելգիան (Կոռուպցիայի դեմ պայքարի կենտրոնական մարմին), Իսպանիան (Կոռուպցիայի հետ կապված տնտեսական հանցագործությունների քննության հատուկ, դատախազական ծառայություն), Խորվաթիան (Կոռուպցիայի կանխարգելման և կազմակերպված հանցավորության վարչություն), Ռումինիան (Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային վարչություն),

Հունգարիան (Հետաքննությունների ազգային բյուրո), Գերմանիան (Ներքին գործերի դեպարտամենտ) և Մեծ Բրիտանիան (Ոստիկանության կոռուպցիայի դեմ պայքարի ջոկատ), որտեղ կոռուպցիոն բնույթի գործերի քննությամբ օժտված են իրավապահ մարմինների աշխատակիցները:

Երրորդ մոդելը ներառում է մեկ կամ մի քանի կանխարգելման գործառույթներ. կոռուպցիայի ուսումնասիրում, կոռուպցիային նպաստող գործոնների բացահայտում, մոնիթորինգ, կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների կազմակերպում և համակարգում, իրավական ակտերի մշակում, պետական ծառայողների հայտարարագրերի հավաքագրում, մշակում և էթիկայի կանոնագրքերի մշակում, ուսումնական ծրագրերի իրականացում, պետական ծառայողների էթիկայի հարցերով խորհրդատվության տրամադրում և այլն:

Նման մոդելի հաստատություններ գործում են Ֆրանսիայում (Կոռուպցիայի կանխարգելման կենտրոնական ծառայություն), նախկին Հարավսլավական Հանրապետություն Մակեդոնիայում (Կոռուպցիայի կանխարգելման պետական հանձնաժողով), Ալբանիայում (Հակակոռուպցիոն մոնիտորինգային խումբ), Մալթայում (Կոռուպցիայի դեմ մշտական մարմին), Հնդկաստանում (Զգոնության կենտրոնական ծառայություն), ԱՄՆ–ում (Կառավարական էթիկայի վարչություն), Ֆիլիպիններում (Օմբուդսմենի հաստատություն) և Բուլղարիայում (Կոռուպցիայի դեմ պայքարում ուժերի համակարգման հանձնաժողով):

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն մարմինը

Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն մարմին որպես այդպիսին ձևավորվել է դեռևս ՀՀ նախագահի 2004 թվականի հունիսի 1–ի հրամանագրով[6]: Այն կոչվում էր Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ:

Խորհրդի հիմնական գործառույթներն են՝

ա) համակարգել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի միջոցառումների իրականացման աշխատանքները և

[6] Տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=30815

դիտարկումներ (մոնիտորինգ) իրականացնել դրանց նկատմամբ.

բ) հաստատել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կազմը.

գ) քննարկել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները.

դ) համադրել համապատասխան լիազորություններով օժտված մարմինների գործունեությունը՝ կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակման ընթացքում.

ե) ձեռնարկել միջոցներ հակակոռուպցիոն ռազմավարությունից և միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած այլ միջոցառումների իրականացման համար.

զ) ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը.

է) կազմակերպել և համակարգել Հայաստանի Հանրապետության գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը.

ը) իր աշխատանքների արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակ զեկույց ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմն ընդգրկում էր. Հայաստանի Հանրապետության վարչապետին (խորհրդի նախագահ), Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալին (համաձայնությամբ), Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին, Հայաստանի Հանրապետության Նախագահի օգնականին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին (համաձայնությամբ), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին (համաձայնությամբ), Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահին (համաձայնությամբ), ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահին (համաձայնությամբ), ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարին:

Խորհրդի գործունեությունն իրականացվում էր նիստերի միջոցով, որոնք գումարվում էին ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան եռամսյակը երկու անգամ:

Խորհրդի առաջին նիստը տեղի է ունեցել 2004 թվականի հուլիսի 2–ին, որի

ընթացքում քննարկվել է խորհրդի 2004 թվականի աշխատանքային գործունեության պլանի նախագիծը[7]:

Այդ խորհրդի ըստ էության վերջին նիստը եղել է 2012 թվականի դեկտեմբերին, երբ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստում ամփոփվել են Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թթ. գործողությունների ծրագրի իրականացման արդյունքները:

Միևնույն ժամանակաշրջանում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից առաջարկել է աշխարհում գործող կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության իրականացմանն ուղղված երեք մոդել՝ ունիվերսալ (ներառում է և՛ կանխարգելում և՛ հետաքննություն, գործում է մի շարք երկրներում, այդ թվում՝ Լեհաստանում, Լատվիայում, Լիտվայում), իրավակիրառ (վերջինս ավելի շատ հետաքննող մոդել է) և կանխարգելիչ մոդելներ: Մոդելներից որևէ մեկի ընտրության հարցը դեռևս գտնվել է քննարկման փուլում և, հավանաբար, ենթակա էր հաստատման խորհրդի հաջորդ նիստում[8]:

Վարչապետի նախագահությամբ գործող Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը վերջնականապես դադարեցրել է իր լիազորությունները 2015 թվականի մարտի 3–ին, երբ ուժը կորցրած է ճանաչվել «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ նախագահի հրամանագիրը[9]:

Միևնույն օրը, ՀՀ Կառավարության՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և ՀՀ Կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» որոշմամբ ՀՀ–ում ձևավորվել է Կոռուպցիայի դեմ պայքարի նոր խորհուրդ:

Նոր խորհուրդն ունի հետևյալ կազմը. Հայաստանի Հանրապետության վարչապետ (խորհրդի նախագահ), Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար, Հայաստանի Հանրապետության

---

[7] Տե՛ս http://www.gov.am/u_files/file/councils/anticorr/korup_nister.pdf
[8] Տե՛ս http://www.ogp.am/hy/commitment2.3/
[9] Տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96013

գլխավոր դատախազ (համաձայնությամբ), Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ), Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցություններից մեկական ներկայացուցիչ (համաձայնությամբ), Հանրային խորհրդի նախագահ (համաձայնությամբ), Հայաստանի համայնքների միության մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ) Քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցիչ (համաձայնությամբ)։

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ կազմակերպությունները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին.

1) ունեն հակակոռուպցիոն ոլորտի առնվազն վերջին հինգ տարվա գործունեության փորձ.

2) որոնց կանոնադրության մեջ կոռուպցիայի դեմ պայքարը նշված է որպես գործունեության ուղղություն.

3) ունեն հակակոռուպցիոն ոլորտի առնվազն վերջին հինգ տարվա համագործակցության փորձ միջազգային կազմակերպությունների հետ.

4) կներկայացնեն միջազգային կառույցների հետ և (կամ) սեփական նախաձեռնությամբ նշված ոլորտին վերաբերող իրականացրած առնվազն 5 ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն.

5) կներկայացնեն միջազգային կառույցների հետ իրականացված ծրագրերի արդյունավետության վերաբերյալ գործընկեր կազմակերպության կողմից տրված երաշխավորագիր։

ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ Խորհուրդը նաև պետք է ունենա կից ստեղծված անկախ փորձագետներից կազմված մշտապես գործող փորձագիտական հանձնախումբ, որը՝

1) աջակցում է հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի նախագծերի մշակմանը, առաջարկություններ է ներկայացնում խորհրդին ռազմավարությունում և (կամ) հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ.

2) իրականացում է ծրագրերի մոնիթորինգ, գնահատում, ամփոփում է ծրագրերի իրականացման մասին հաշվետվությունները.

3) նախապատրաստում է հաշվետվություններ, զեկույցներ ծրագրերի կատարման վիճակի մասին և առաջարկություններ ներկայացնում խորհրդին.

4) խորհրդի կողմից նախանշված, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված ոլորտներում իրականացնում է կոռուպցիայի դրսևորումների և պատճառների ուսումնասիրություն, վերլուծություն ու դրանց առավել արդյունավետ լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացում.

5) խորհրդի հանձնարարությամբ իրականացնում են միջոցառումներ՝ կոռուպցիայի կանխարգելման հարցերով հասարակության գիտելիքների ընդլայնմանն ու տարածմանը նպաստելու համար՝ մասնակցելով տեղեկատվական և կրթական նյութերի պատրաստման աշխատանքներին, հանդես գալով զանգվածային լրատվության միջոցներով, իրականացնելով այլ գործառույթներ: Այս գործառույթն իրականացնելիս՝ հանձնախումբը համագործակցում է պետական մարմինների, ուսումնական հաստատությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հետ.

6) կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում ապահովում է խորհրդի համագործակցությունը տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, տեղական գործարար ոլորտը ներկայացնող կազմակերպությունների, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող ինստիտուտների հետ.

7) խորհրդի հանձնարարությամբ մշակում է ուղեցույցներ և ներկայացնում խորհրդի հավանությանը, պատասխանատու մարմիններին ցուցաբերում է մեթոդական և այլ աջակցություն.

8) իրականացնում է Խորհրդի կողմից տրված այլ հանձնարարություններ:

Սույն վերլուծությունը հիմնված է միջազգային փորձի և կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերի ուսումնասիրության վրա և ընդգրկում է հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչպե՞ս է մեկնաբանվում և կիրառվում ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 36-րդ հոդվածը արտասահմանյան երկրներում,
- Կոռուպցիայի դեմ պայքարող ինչպիսի՞ մարմիններ են գործում արտասահմանյան երկրներում և ինչպիսի՞ հատկանիշներով են օժտված դրանք:
- Ինչպիսի՞ գործառույթներով և վերջիններիս կենսագործման համար անհրաժեշտ լիազորություններով են օժտված այդպիսի մարմինները:

- Ինչպիսի՞ լուծումներ կարող են կիրառվել մեր օրենսդրությունում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի ինստիտուցիոնալ անկախ մարմին ստեղծելու համար:

Վերլուծությունը ներկայացնում է նաև միջազգային փորձից քաղված դասերը, ինչպես նաև համապատասխան առաջարկություններ՝ Հայաստանում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ անկախ մարմնի կարևորության և անհրաժեշտության վերաբերյալ:

ԳԼՈՒԽ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. 1 Ուկրաինայի հանրապետություն

Կոռուպցիայի դեմ պայքարը Ուկրաինայի հանրապետությունում սկսվել է դեռևս 1995 թվականին՝ Ուկրաինայի օրենսդիր մարմնի կողմից «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենքի ընդունմամբ, որից հետո՝ մինչ 2000–ական թվականները, որևէ տեղաշարժ չի նկատվել Ուկրաինայի հակակոռուպցիոն օրենսդրության կատարելագործման բնագավառում: Այնուհետև, Ուկրաինան 2005 թվականին վավերացրել է Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան, իսկ 2006 թվականին անդամակցել կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբին (GRECO):

Նույն թվականին, Ուկրաինան վավերացրել է ՄԱԿ–ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան և Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան, որոնք ուժի մեջ են մտել 2009 թվականին: Այդ ժամանակաշրջանից ի վեր չեն ձեռնարկվել նկատելի որևէ միջոցառումներ կոռուպցիայի դեմ պայքարը զարգացնելու ուղղությամբ:

Այնուամենայնիվ, Ուկրաինայի հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարը թևակոխել է զարգացման նոր փուլ 2014–2017թթ հակակոռուպցիոն ռազմավարության ընդունմամբ, որով սահմանվեց կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու տեսլականը [10] : Ուկրաինան մինչ այդ՝ 2011 թվականին, նույնպես ընդունել էր

---

10 Տե՛ս 2014–2017թթ ռազմավարության խնդիրները և գործունեության ուղղությունները՝ http://ti-ukraine.org/en/system/files/research/strategy-17_en.pdf

հակակոռուպցիոն ռազմավարություն, սակայն վերջին՝ 2014 թվականին ընդունված հակակոռուպցիոն ռազմավարության առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ այն առաջին անգամ ընդունվել էր օրենքի մակարդակով, ինչն ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կնպաստի այդ ռազմավարության առավել որակյալ իմպլեմենտացմանը[11]:

Ուկրաինայի հակակոռուպցիոն ռազմավարության առաջնային ուղղությունն է եղել ստեղծել ստեղծել հակակոռուպցիոն քաղաքականությունը կոորդինացնող մարմին:

Դեռևս 2010 թվականի փետրվարի 26–ին Ուկրաինայի նախագահ Յանուկովիչի կողմից ստեղծվել է Ազգային հակակոռուպցիոն կոմիտեն, որը խորհրդակցական մարմին էր՝ նախագահին կից: Այդ մարմնի գործադիր քարտուղարն էր Արդարադատության նախարարը: Մարմինն ընդամենը պատասխանատու էր հակակոռուպցիոն քաղաքականության, ինչպես նաև միջոցառումների ծրագրի մշակման համար: Այդ խորհուրդը նախագահում էր Ուկրաինայի նախագահը, իսկ մյուս անդամները նույնպես նշանակվում էին նախագահի կողմից: Այն ուներ նաև ներկայացուցիչ միայն մեկ հասարակական կազմակերպությունից, ինչպես նաև համալսարաններից և ակադեմիաներից:

Այդ խորհրդի գլխավոր թերությունը կայանում էր նրանում, որ այն չէր համապատասխանում անկախ մարմնի չափանիշին, որը սահմանվել է Ջակարտայի սկզբունքներով [12] : Այդ մարմնի անարդյունավետության մասին է վկայում այն հանգամանքը, որ ստեղծման օրվանից այն գումարել է ընդամենը երեք նիստ[13]:

Այդ մարմինը վերացվեց նոր նախագահ Պորոշենկոյի կողմից 2014 թվականի հոկտեմբերին և փոխարինվեց Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությամբ (այսուհետ՝ գործակալություն), որի ստեղծման մասին օրենքն ուժի մեջ մտավ 2015 թվականի ապրիլի 26–ին: Այդ բարեփոխման անքակտելի բաղադրիչն էր կազմում նաև հակակոռուպցիոն օրենսդրության բարեփոխումը, որի օրենսդրական փաթեթը

---

[11] Տե՛ս OECD, Anti–Corruption Reforms in Ukraine, Round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action plan, 24 March 2015, p. 5
http://www.oecd.org/daf/anti-bribery/Ukraine-Round-3-Monitoring-Report-ENG.pdf

[12] Տե՛ս Jakarta Statement on Principles for Anti-Corruption Agencies, Jakarta, 26-27 November 2012
https://www.iaca.int/images/sub/activities/EPAC/Jakarta_Statement.pdf

[13] Տե՛ս OECD, Anti–Corruption Reforms in Ukraine, Round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action plan, 24 March 2015, p. 24

Ուկրաինայի օրենսդրի կողմից ընդունվեց և նախագահ Պորոշենկոյի կողմից ստորագրվեց 2014 թվականի հոկտեմբերին։

Այդ բարեփոխումների շրջանակներում ստեղծվեց կոռուպցիայի դեմ պայքարող ևս մեկ մարմին՝ Ազգային հակակոռուպցիոն բյուրոն (այսուհետ՝ Բյուրո), որի մասին օրենքն Ուկրաինայում ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 25–ին։

Եվրոպական գործընկերներն ընդդեմ կոռուպցիայի (EPAC) սահմանած հակակոռուպցիոն մարմնի չափանիշների համաձայն՝ հակակոռուպցիոն մարմնի ստեղծումը, իրավասության և գործառույթների ամրագրումը պետք է տեղի ունենա օրենքի մակարդակով։[14]Նույն դրույթն ամրագրված է նաև Ջակարտայի սկզբունքներում։

Ուկրաինայի հանրապետությունում, ըստ էության, պահպանվել է այդ իրավական կարգավորումը, և ստեղծված մարմինների իրավասությունն ու գործառույթների շրջանակը ամրագրվել է օրենքի մակարդակով, սակայն, այդ օրենքների վերաբերյալ 2014 թվականի հուլիսի 18–ին եզրակացություն ներկայացրած OSCE/ODIHR–ը հայտնել է, որ նախընտրելի կլիներ այն ամրագրել Սահմանադրական մակարդակով, քանի որ օրենքի դեպքում դրանք կարող են հեշտությամբ փոփոխության ենթարկվել իշխանության կողմից[15]։

Ստեղծված մարմինների գործունեության ուղղությունները հետևյալն են.

Նախարարների կաբինետի կողմից ձևավորված գործակալությունը հանդիսանում է այն գլխավոր մարմինը, որը կենտրոնացած է կոռուպցիայի դեմ պայքարի վրա։ Ազգային գործակալության գլխավոր խնդիրն է իմպլեմենտացնել և զարգացնել հակակոռուպցիոն քաղաքականությունը և մոնիթորինգ իրականացնել ազգային օրենսդրության նկատմամբ։

Իսկ բյուրոն, լինելով պետական մակարդակով ձևավորված մարմին, միտված է հետաքննություն իրականացնել պետական ծառայողների նկատմամբ, այդ թվում՝ Նախագահի, նախարարների կաբինետի, պառլամենտի անդամների և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ։

---

[14] Տե՛ս the Anti-Corruption Authority Standards of the European Partners against Corruption (EPAC) Principle 1 (‘the Rule of Law’)

[15] Տե՛ս Opinion on two draft anti-corruption laws of Ukraine, p. 7
http://www.legislationline.org/documents/id/19137

Բյուրոյի տնօրենը նշանակվում է Ուկրաինայի նախագահի կողմից այն թեկնածուներից, որոնց առաջադրում է Բյուրոյի որակավորման հանձնաժողովը: Այդ հանձնաժողովում երեքական անդամ են նշանակում Նախագահը, պառլամենտը և Նախարարների կոմիտեն:

Բյուրոյի իրավասությունները բավականին ընդարձակ են, վերջինս իրավասու է ա) պահանջել տրամադրել փաստաթղթեր անհատներից, տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆինանսական և այլ կառույցներից, բ) սահմանափակել ակտիվներ, գ) առգրավել փաստաթղթեր և առարկաներ, դ) համագործակցել այլ պետությունների իրավապահ մարմինների հետ:

Բյուրոյի գործունեության մոնիթորինգով է զբաղվելու քաղաքացիական վերահսկողության խորհուրդը, որը կազմված է 15 անդամ հասարակական կազմակերպություններից, որոնք բաց և թափանցիկ կերպով են ընտրվում: Ընտրության արդյունքները հաստատում է Նախագահը[16]:

Բյուրոն ղեկավարվում է հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներով: Բյուրոյի մասին օրենքի 26–րդ հոդվածի համաձայն՝ Բյուրոն մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 10–ը և օգոստոսի 10–ը ներկայացնում է զեկույց Ուկրաինայի նախագահին, խորհրդարանին և Նախարարների կաբինետին՝ վերջին վեց ամսվա գործունեության վերաբերյալ: Կազմավորումից ի վեր բյուրոն արդեն ներկայացրել է 2 զեկույց՝ 2015թ.ապրիլ–օգոստոս[17] և 2015թ. օգոստոս–փետրվար[18] գործունեության վերաբեյալ:

Բյուրոյի աշխատակազմը ձևավորվում է հրապարակային և թափանցիկ մրցույթի արդյունքում: Աշխատակազմը ներկայումս բաղկացած է 350 հոգուց (Նախատեսվում է 700 հոգի): Բյուրոյի առաջին 70 քննիչներն անցել են վերապատրաստումներ լավագույն ազգային և արտասահմանյան փորձագետների մոտ, որից հետո՝ երդում տվել և ձեռնամուխ եղել իրենց առջև դրված խնդիրների լուծմանը:

---

[16] Տե՛ս ներկայիս դրությամբ խորհրդի կազմը՝
http://www.nabu.gov.ua/en/members-civil-oversight-council-nab
[17] Տե՛ս http://www.nabu.gov.ua/sites/default/files/reports/nab_report_10_08_2015_en.pdf
[18] Տե՛ս http://www.nabu.gov.ua/sites/default/files/reports/NAB_report_02_2016_EN.pdf

2016 թվականի փետրվարի 1–ի դրությամբ Բյուրոյի մինչդատական հետաքննությունների միասնական ռեգիստրում գրանցված է եղել 56 քրեական գործ, որոնցից 19–ը Բյուրոյին է փոխանցվել դատախազությունից[19]:

2016 թվականի փետրվարի 1–ի դրությամբ կոռուպցիոն բնույթի հանցագործության կատարմանը ներգրավված են եղել 19 պետական կազմակերպության ղեկավար, 13 դատավոր, 11 քաղաքացիական ծառայող, 6 բարձրաստիճան պաշտոնատար անձ և 5 դատախազ[20]:

Բյուրոն համագործակցում է հետևյալ գործընկերների հետ՝ քաղաքացիական հասարակության, պետության և միջազգային համայնքի:

Բյուրոն սերտ համագործակցում է քաղաքացիների հետ, որոնցից ընդհանուր առմամբ ստացվել են շուրջ 2318 դիմում: Միևնույն ժամանակ, քաղաքացիների համար Բյուրոն հասանելի է 24 ժամ, 2016 թվականի փետրվարի 1–ից գործարկվել է թեժ գիծ՝ 0-800-503-200 հեռախոսահամարով, Բյուրոյին քաղաքացիները կարող են դիմել նաև օնլայն՝ համացանցի միջոցով, այդ թվում՝ սոցիալական ցանցերի: Բյուրոն նույնիսկ դիմումներ է ստացել հեռուստալրագրողական հետաքննության արդյունքում «Schemy» և «Lustrator» հաղորդումներից:

Բյուրոն կարողանում է արդյունավետ գործունեություն ծավալել՝ ի շնորհիվ պետական մի շարք գերատեսչությունների հետ ստորագրված համաձայնագրերի: Այդպիսի համաձայնագրեր են ստորագրվել Արդարադատության նախարարության, Արտաքին գործերի նախարարության, Պետական ֆինանսական ծառայության և այլ մարմինների հետ:

Բյուրոն համագործակցում է միջազգային համայնքի հետ, ինչպես փորձի փոխանակման, այնպես էլ ֆինանսական աջակցության ձեռք բերման նպատակով: Բյուրոյի աշխատակիցները պարբերաբար այցելում են արտասահմանյան առաջադեմ երկրներ և ծանոթանում այդ մարմինների գործունեությանը: Բյուրոյի ծախսերը չեն կարող ծածկվել բացառապես պետական բյուջեի միջոցների հաշվին, այդ պատճառով ֆինանսական օժանդակություն այդ մարմնին ցույց են տալիս Մեծ Բրիտանիայի

---

[19] Տե՛ս Բյուրոյի 2015թ.օգոստոսից–2016թ. փետրվար ամիսների զեկույցը, էջ 15
http://www.nabu.gov.ua/sites/default/files/reports/NAB_report_02_2016_EN.pdf
[20] Տե՛ս նույն տեղում:

միջազգային զարգացման բաժանմունքը (Department for International Development of United Kingdom), Գերմանիայի հասարակությունը՝ միջազգային համագործակցության համար (German Society for International Cooperation) և այլ կազմակերպություններ:

Բյուրոյի մասին օրենքի համաձայն, այն կարող է ունենալ մինչև 7 գրասենյակ: 2015 թվականի դեկտեմբերի 10–ին բացվել են 2 գրասենյակ՝ Լվովում և Օդեսայում:

Ուկրաինայի Հանրապետության կոռուպցիայի մակարդակի ուսումնասիրությունը ըստ միջազգային կազմակերպությունների անցկացրած ուսումնասիրությունների՝ վկայում է հետևյալի մասին:

Մասնավորապես, օրինակ Freedom house-ի կողմից Ուկրաինայի Հանրապետությունում 2006–2015թթ.–ի կոռուպցիայի մակարդակը ներկայացնում ենք ստորև՝ Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Կոռուպցիայի մակարդակը Ուկրաինայում ըստ Freedom house-ի



Վերը ներկայացված Աղյուսակ 1-ից հետևում է, որ 2006–2011թթ–ը Ուկրաինայում կոռուպցիայի մակարդակը գտնվել է միևնույն հարթության վրա (5,75 միավոր, որը համեմատած այլ երկրների հետ բավականին բարձր է), իսկ այնուհետև էլ ավելի բարձրացնել՝ հասնելով 6,25 միավորի: Այդ վիճակագրական տվյալներն առերևույթ վկայում են 2010թ.–ին Ուկրաինայի նախագահի կողմից ձևավորված հակակոռուպցիոն խորհրդի անարդյունավետ աշխատանքի մասին, որի գլխավոր պատճառն է եղել ինստիտուցիոնալ անկախության բացակայությունը:

Չնայած, որ մի քանի ամիսը բավականին կարճ ժամանակահատված է Ուկրաինայի նոր ձևավորված հակակոռուպցիոն մարմնի կատարած աշխատանքի արդյունավետությունը գնահատելու համար, այնուամենայնիվ, 2015թ.–ին ձևավորված

ինստիտուցիոնալ անկախ մարմնի աշխատանքն արդեն իսկ տեսանելի է վերը ներկայացված աղյուսակում (կոռուպցիայի միավորը 6,25–ից իջել է 6,0 միավորի)։

Միևնույն ժամանակ, Աղյուսակ 2-ում ներկայացնենք նաև Թրանսփարենսի Ինթերնեյշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալներն այն մասին, թե որերորդ հորիզոնականում է գտնվում Ուկրաինայի Հանրապետությունն ըստ կոռուպցիայի մակարդակի[21]։

Աղյուսակ 2. Կոռուպցիայի մակարդակը Ուկրաինայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեյշնլի



Վերը ներկայացված Աղյուսակ 2-ից հետևում է, որ Ուկրաինայի Հանրապետությունը, մինչ 2010թ.–ի հակակոռուպցիոն մարմնի ձևավորումը, 180 երկրների շարքում փաստացիորեն գտնվում էր 146–րդ հորիզոնականում՝ ըստ կոռուպցիայի մակարդակի։ Սակայն խնդիրը կայանում էր նրանում, որ այդ մարմնի ձևավորումից հետո կոռուպցիայի մակարդակն էլ ավելի էր բարձրացել Ուկրաինայի Հանրապետությունում՝ ի

[21] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview

համեմատ նախորդ տարվա (Ուկրաինան 2011–ին գտնվում էր 152–րդ հորիզոնականում, երբ դրանից մեկ տարի առաջ՝ 2010թ.–ին, 134–րդ հորիզոնականում էր)։

Մինչդեռ, ուղղակի դիտարկելով 2014–2015թթ.–ի զարգացման դինամիկան՝ նոր հակակոռուպցիոն մարմնի ձևավորմամբ, առերևույթ է, որ կոռուպցիայի մակարդակը էականորեն նվազել է, մասնավորապես՝ Ուկրաինան զբաղեցնում է 130–րդ հորիզոնականը 167 երկրների շարքում։

Չնայած, որ Ուկրաինայի Հանրապետությունում ներդրված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ անկախ մարմինը դեռևս նորաստեղծ է և բավականին կարճ ժամանակաշրջան է, ինչ սկսել է ծավալել իր գործունեությունը, այնուամենայնիվ, միջազգային չափանիշների իմպլեմենտացմամբ ձևավորված նոր մարմինը՝ վերը ներկայացված վիճակագրական տվյալներին համապատասխան, խոստումնալից է կոռուպցիայի կանխարգելման անկյունաքարային գործում։

1.2 Վրաստանի Հանրապետություն

Վրաստանի Հանրապետությունում առաջին հակակոռուպցիոն ռազմավարությունը նախագծվել է դեռևս 2005–2006թթ–ին, և համապատասխան գործողությունների ծրագիրն՝ ընդունվել 2007թ.–ին։ Բարեփոխումների համակարգումն իրականացվել է Արդարադատության նախարարության կողմից։ Սակայն, մեկ տարի անց՝ 2008 թվականին, կայացվեց որոշում զրոյից գրել նոր ռազմավարություն և գործողությունների ծրագիր, և հենց այդ նպատակով ստեղծվեց նոր մարմին՝ Կոռուպցիայի դեմ պայքարը կոորդինացնող խորհուրդը։

Խորհուրդը ստեղծվեց Նախագահի կողմից 2008թ.–ի դեկտեմբերի 26–ին, որում ներառվեցին պաշտոնատար անձինք օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ[22]։

[22] Տե՛ս The Georgian president's decree On Approving Composition and Charter of Interagency Coordination Council for Combating Corruption, Tbilisi, 26 December 2008

2013 թվականի դեկտեմբերի 30–ին Նախագահի որոշումը փոխարինվեց կառավարության որոշմամբ, որի մակարդակով հաստատվեց խորհրդի կազմն ու կանոնադրությունը, որոնք այնուամենայնիվ փոփոխության չենթարկվեցին[23]:

Գլխավոր փոփոխությունը, որը տեղի ունեցավ, դա խորհրդի անդամների նշանակման իրավասության փոխանցումն էր Նախագահից կառավարությանը: Բացի այդ, խորհրդի իրավական կարգավիճակն ամրագրվեց առանձին հոդվածով՝ «Հանրային ծառայողների շահերի բախման և կոռուպցիայի մասին» օրենքում:

Խորհուրդը նախագահում է Արդարադատության նախարարը, իսկ նախարարի վերլուծական բաժանմունքը ծառայում է որպես խորհրդի քարտուղարություն: Խորհրդի պատասխանատվության շրջանակը ներառում է հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը, հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի և մոնիթորինգի պատրաստումն ու թարմացումը, վերջիններիս իմպլեմենտացման ընթացքում տարաբնույթ մարմինների աշխատանքի կոորդինացումը, միջազգային կազմակերպությունների հանձնարարականների կատարումը[24]:

Հակակոռուպցիոն խորհուրդն ու իր քարտուղարությունը սկսել են առավել բովանդակային և թափանցիկ գործընթաց նոր ռազմավարության թարմացման և 2013թ.–ի նոր գործողությունների ծրագրի ներկայացման ընթացքում: Գործընթացը տևեց շուրջ 2 տարի: Երկու փաստաթղթերն էլ վերջնականապես ընդունվել են 2015թ.–ի փետրվարին:

Խորհրդի աշխատանքին նաև ակտիվորեն մասնակցում են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, մասնավորապես՝ 2015թ.–ի դրությամբ խորհրդի կազմում ներառված են եղել ընդհանուր առմամբ 9 հասարակական կազմակերպություն:

Վրաստանի Հանրապետության գլխավոր ուժային կառույցները, որոնք զբաղվում են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտմամբ ,Արտաքին գործերի նախարարությունը և դատախազություն են: Նրանց գործունեությունը կանոնակարգող հիմնական իրավական ակտերն են՝ «Ոստիկանության մասին» օրենքը, Արտաքին գործերի նախարարության կանոնադրությունը և «Դատախազության մասին» օրենքը:

---

[23] Տե՛ս The Georgian Government's decree On Approving Composition and Charter of Interagency Coordination Council for Combating Corruption, Tbilisi, 30 December 2013

[24] Տե՛ս Georgia national integrity system assessment 2015, Transparency International Georgia

Արտաքին գործերի նախարարությունը (իր ներկայիս կարգավիճակով) ձևավորվել է Անվտանգության նախարարության և Արտաքին գործերի նախարարության միաձուլման արդյունքում՝ 2004 թվականին: Թե՛ ոստիկանական, թե՛ սահմանապահ ուժերը գտնվում են Արտաքին գործերի՝ միասնական նախարարության, իրավասության ներքո:

Իսկ դատախազությունը Արդարադատության նախարարության բաղկացուցիչ մասն է: Գլխավոր դատախազությունն ունի քաղաքային, վարչական շրջանների և ռեգիոնալ տարածքային միավորների գրասենյակներ: Քրեական հետապնդում իրականացնելու առաջնային պատասխանատուն Գլխավոր դատախազությունն է: 2013 թվականին ընդունված բարեփոխումների արդյունքում Արդարադատության նախարարն այլևս ըստ էության ներգրավված չէ քրեական հետապնդման աշխատանքների մեջ: Գլխավոր դատախազն է իրավասու նախաձեռնել քրեական հետապնդում բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ, այդ թվում՝ նախագահի, Գերագույն դատարանի և Սահմանադրական դատարանի դատավորների, խորհրդարանի պատգամավորների նկատմամբ: Արդարադատության նախարարն է առաջադրում և նշանակում Գլխավոր դատախազին:

Վրաստանի Հանրապետության 2014–2016թթ–ի Հակակոռուպցիոն ծրագրի համաձայն սահմանվել են 12 առաջնային խնդիրներ և վերջիններիս լուծմանն ուղղված քայլերը [25] : Այդ խնդիրներից առաջինը միտված է կոռուպցիայի դեմ պայքարում արդյունավետ միջգերատեսչական համակարգմանը:

Նախատեսված է ամրապնդել Հակակոռուպցիոն խորհրդի ինստիտուցիոնալ հնարավորությունները, ինչպես նաև ավելացնել Հակակոռուպցիոն խորհրդի քարտուղարության ռեսուրսներն ու ամրապնդել իրավասությունները: Նախատեսված է նաև ամրապնդել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը Հակակոռուպցիոն խորհրդում: Միևնույն ժամանակ, ծրագրում ուշադրություն է հատկացված հակակոռուպցիոն կրթությանը և հակակոռուպցիոն իրազեկվածության բարձրացմանը:

---

[25] Georgian Anti-Corruption Action Plan 2014 – 2016, Strategic priorities
http://www.coe.int/t/DGHL/cooperation/economiccrime/corruption/Projects/EaP-CoE%20Facility/RT%20Tbilissi%202%20May%2014/Logframe%20AC%20Strategy%20Draft%20-%20Eng%20(02%2005%202014).pdf

Ուսումնասիրելով Վրաստանի Հանրապետությունում առկա կոռուպցիայի մակարդակը՝ պարզ է դառնում, որ հակակոռուպցիոն մարմնի ստեղծումից ի վեր Վրաստանում նկատվում է կոռուպցիայի նվազեցման միտում:

Այսպես, օրինակ Freedom house-ի կողմից Վրաստանի Հանրապետությունում 2006–2015թթ.–ի կոռուպցիայի մակարդակը ներկայացնում ենք ստորև՝ Աղյուսակում 3[26]:

Աղյուսակ 3. Կոռուպցիայի մակարդակը Վրաստանում ըստ Freedom house-ի



Աղյուսակ 3-ից պարզ է դառնում, որ կոռուպցիայի մակարդակը մինչև հակակոռուպցիոն խորհրդի ստեղծումը (մինչև 2008թ.–ը) ուներ ավելի բարձր մակարդակ, քան հակակոռուպցիոն խորհրդի ստեղծումից հետո (2008թ.–ից հետո): Աղյուսակ 3-ից պարզ է դառնում նաև, որ Վրաստանի Հանրապետությունում 2007–2010թթ–ը կոռուպցիայի մակարդակը եղել է 5 միավոր, իսկ իրականացված բարեփոխումների արդյունքում՝ նվազել մինչև 4,5 միավոր:

Վրաստանի Հանրապետությունում կոռուպցիայի մակարդակի նվազեցման մասին է վկայում նաև Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության հրապարակած տվյալները[27], որոնք արտացոլված են ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Կոռուպցիայի մակարդակը Վրաստանում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի

[26] Տե՛ս https://freedomhouse.org/report/nations-transit/2015/georgia
[27] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview



Աղյուսակ 4-ից պարզ է դառնում, թե ինչպիսին է եղել կոռուպցիայի մակարդակը Վրաստանի Հանրապետությունում մինչ հակակոռուպցիոն մարմնի ստեղծումը (մինչև 2008թ.) և այդ մարմնի ստեղծումից հետո (2008թ.–ից հետո)։ Մասնավորապես, պարզ է դառնում, որ Վրաստանի Հանրապետությունը 2006 թվականին ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության 163 երկրների շարքում գտնվում է 99–րդ հորիզոնականում, սակայն դրանից հետո՝ 2007–2008թթ–ին այդ հորիզոնականը կտրուկ նվազեց։ Վերջինս, դինամիկորեն նվազում է մինչ օրս (2015թ.–ին 167 երկրների շարքում գտնվել է 48–րդ հորիզոնականում)։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, երբեմնի 99–րդ հորիզոնականում գտնվող պետությունը իր կողմից մշակված արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության շնորհիվ նվաճել է 48–րդ հորիզոնականը։

Ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով ներկայացված վիճակագրական տվյալները՝ պարզ է դառնում, որ Վրաստանի Հանրապետությունը հակակոռուպցիոն պայքարում թևակոխում է զարգացման նոր փուլ։ Այնուամենայնիվ, Վրաստանում ներդրված մոդելի գլխավոր թերությունը կայանում է նրանում, որ այն, ըստ էության, կախման մեջ է գտնվում գործադիր իշխանությունից և ինստիտուցիոնալ անկախ չի կարող համարվել։

Այդ մասին նշել է նաև Տնտեսական զարգացման և համագործակցության միջազգային կազմակերպությունը՝ հայտնելով, որ Վրաստանի հակակոռուպցիոն խորհուրդը չի հանդիսանում անկախ և բազմաֆունկցիոնալ մարմին, որի

պարտականությունների մեջ կմտնեն հետաքննությունը, մոնիթորինգը, ուժի կիրառումը։ Գործող խորհուրդն ունի սահմանափակ ռեսուրսներ[28]։ Միևնույն ժամանակ, խորհրդի գործունեության ուսումնասիրությունը վկայում է նաև այն մասին, որ այն ակտիվորեն չի զբաղվում հակակոռուպցիոն կրթությամբ, ինչը միջազգային չափանիշներին համապատասխան պետք է լինի հակակոռուպցիոն անկախ մարմնի գործունեության առաջնային ուղղություններից մեկը։

1.3 Մոլդովայի Հանրապետություն

Մոլդովայի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարող միասնական մարմինը Ազգային հակակոռուպցիոն կենտրոնն է։ Այդ կենտրոնի ձևավորման իրավական հիմքը կազմում է Մոլդովայի Սահմանադրությունը, ինչպես նաև «Ազգային հակակոռուպցիոն կենտրոնի մասին» օրենքը, որն ընդունվել է 2002 թվականի հունիսի 6–ին, ինչպես նաև այլ օրենքներ և իրավական ակտեր։

Ազգային հակակոռուպցիոն կենտրոնը մասնագիտացված անկախ մարմին է, որի գործունեությունը միտված է կոռուպցիայի կանխարգելմանը և դրա նվազեցմանը։ Կենտրոնը ապաքաղաքական մարմին է, չի աջակցում որևէ քաղաքական կուսակցությանը։

Կենտրոնն իր գործունեությունը ծավալում է օրինականության, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հարգման, անկախության, անկողմնակալության և այլ սկզբունքների հիման վրա։

Կենտրոնի առանցքային գործունեությունն է ֆինանսատնտեսական հանցագործությունների, ահաբեկչության ֆինանսավորման, փողերի լվացման հանցագործությունների կանխումը, հայտնաբերումը և ուսումնասիրությունը։

Ի սկզբանե, կենտրոնի ստեղծումը նպատակ է հետապնդել պետական մակարդակով ստեղծել մի կառույց, որը կզբաղվի տնտեսական հանցագործությունների և կոռուպցիայի կանխարգելմամբ Մոլդովայի Հանրապետությունում։ Այն իրականացնում է

---

[28] Տե՛ս OECD ACN, Istanbul Anti-Corruption Action Plan, Third Round of Monitoring: Georgia, Monitoring Report, OECD, Paris, 25 September 2013, 26.

քրեական հետապնդում կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանք կատարած անձանց նկատմամբ։ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ կենտրոնն իրականացնում է հետաքննություն կոռուպցիոն բնույթի ոչ միայն քրեաիրավական, այլ նաև վարչաիրավական արարքների նկատմամբ։

Կենտրոնն ունի թեժ գիծ՝ 0–800–55555, որին զանգահարելով՝ քաղաքացիները ներկայացնում են դիմումներ և բողոքներ, որոնց ուսումնասիրությունը կենտրոնի պարտականությունն է։

Կենտրոնն ունի իրավաբանական անձի իրավական կարգավիճակ։ Այն իրենից ներկայացնում է ունիտար, կենտրոնացված և հիերարխիկ մարմին, որը կազմված է կենտրոնական ապարատից և տարածքային ստորաբաժանումներից։

«Ազգային հակակոռուպցիոն կենտրոնի մասին» օրենքի 8–րդ հոդվածի համաձայն սահմանված է, որ կենտրոնը ղեկավարում է տնօրենը, որը նշանակվում է այդ պաշտոնին խորհրդարանի ձայների մեծամասնությամբ՝ հինգ տարի ժամկետով, առանց վերընտրվելու իրավունքի։

Տնօրենը չի կարող կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից։

Տնօրենի թեկնածուն ընտրվում է մրցութային հիմունքներով, որը կազմակերպվում է Խորհրդարանի իրավունքի հարցերով հանձնաժողովի կողմից։ Այդ գործընթացին ներգրավված են լինում նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ։

Կենտրոնի տնօրենի համար սահմանված են հետևյալ չափանիշները, որոնք հանդիսանում են վերջինիս անկախ գործունեության լիիրավ երաշխիք։

Դրանք են՝ ա) լինել Մոլդովայի Հանրապետության քաղաքացի և բնակվել այդ տարածքում, բ) լինել լրիվ գործունակ, գ) ունենալ բարձրագույն իրավաբանական կրթություն, դ) իրավունքի ոլորտում ունենալ ոչ պակաս, քան 10 տարվա աշխատանքային ստաժ, ե) ունենալ իդեալական հեղինակություն, զ) վերջին երկու տարվա ընթացքում չհանդիսանալ որևէ քաղաքական կուսակցության անդամ, է) չունենալ դատվածություն, ը) տիրապետել պետական լեզվին, թ) պիտանի լինել բժշկական տեսանկյունից իր պարտականությունների կատարման համար։

Իր պարտականությունների կատարման ընթացքում տնօրենն ունի երկու տեղակալ, որոնք նշանակվում են խորհրդարանի կողմից՝ տնօրենի առաջարկությամբ։ Թեկնածուներն ընտրվում են մրցութային հիմունքներով։

Տնօրենն ու տեղակալները կազմակերպում են Կենտրոնի բնականոն գործունեությունը և անձնական պատասխանատվություն են կրում Կենտրոնի առջև դրված խնդիրների պատշաճ լուծման համար։

Կենտրոնի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի հաշվին։ Կենտրոնի բյուջեն հաստատվում է Խորհրդարանի կողմից՝ մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1–ը։

Հատկանշական են «Ազգային հակակոռուպցիոն կենտրոնի մասին» օրենքի 14–րդ և 15–րդ հոդվածները։

Այսպես, 14–րդ հոդվածով սահմանված է Կենտրոնի աշխատակիցների մասնագիտական անկաշառելիության թեսթավորման կարգը։ Այդ թեսթավորումն իրականացվում է պարբերաբար՝ Տեղեկատվության և անվտանգության ծառայության կողմից՝ դատախազի թույլտվությամբ։ Թեսթավորման նպատակն է պարզել Կենտրոնի աշխատակիցների կողմից իրենց վրա դրված պարտականությունների պատշաճ կատարումը, թեսթավորման ընթացքում ստեղծվում են աշխատանքային պարտականությունների կատարման համանման պայմաններ և ստուգում կոռուպցիայի ներազդեցության մակարդակը Կենտրոնի աշխատակիցների նկատմամբ։ Արդյունքները ներկայացվում են Կենտրոնի կարգապահական հանձնաժողովին, որն էլ քննարկում է աշխատակցի դրսևորած վարքագիծը։

Իսկ նույն օրենքի 15–րդ հոդվածը սահմանում է Կենտրոնի աշխատակցի ապրելակերպի մոնիթորինգի իրականացման կարգը, որն իրականացվում է Կենտրոնի ներքին անվտանգության կողմից։ Այն նպատակ է հետապնդում պարզել Կենտրոնի աշխատակցի ապրելակերպի մակարդակի համապատասխանելիությունը օրենքով սահմանված վճարվող աշխատավարձին, ինչպես նաև աշխատակցի վարքագծի համապատասխանելիությունը Կենտրոնի աշխատակցի վարքագծի կանոնագրքին։ Մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են Կենտրոնի կարգապահական հանձնաժողովին։

Կենտրոնի աշխատակցի համար նույնպես ամրագրված են սահմանափակումներ՝ այլ վճարովի աշխատանք չկատարելու (բացառությամբ՝ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի), անձամբ կամ երրորդ անձի միջոցով ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվել, քաղաքական կուսակցության անդամ

չլինելու և այլն: Կենտրոնի աշխատակիցներն ունեն դասային աստիճաններ, ծառայողական վկայական և համազգեստ:

Կենտրոնի գործունեությունը ենթարկվում է քաղաքացիական հասարակության մոնիթորինգի, խորհրդարանական հսկողության: Օրենքով սահմանված կարգով դատախազությունն իրականացնում է հսկողություն կենտրոնի աշխատակիցների կողմից օրենքի պահպանման նկատմամբ:

Կենտրոնի գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունն իրականացվում է ազգային անվտանգության, պաշտպանության և ներքին անվտանգության հանձնաժողովի, ինչպես նաև իրավունքի, նշանակման և անձեռնմխելիության հարցերով հանձնաժողովի կողմից: Կենտրոնը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 31–ը ներկայացնում է զեկույց իր գործունեության վերաբերյալ:

Կենտրոնի գործունեությունը գտնվում է նաև քաղաքացիական հասարակության վերահսկողության ներքո: Այդ վերահսկողությունն իրականացվում է Քաղաքացիական խորհրդի կողմից: Խորհուրդը ներգրավված է Կենտրոնի գործունեության բոլոր ոլորտները կանոնակարգող հանձնաժողովներում:

Բացի Ազգային հակակոռուպցիոն կենտրոնից, Մոլդովայի Հանրապետությունում գործում է նաև Ազգային բարեվարքության հանձնաժողովը (National Integrity Commision):

Այդ հանձնաժողովն իր գործունեությունն է ծավալում 2011 թվականի դեկտեմբերի 19–ին ընդունված թիվ 180 օրենքի հիման վրա և հանդիսանում է կոռուպցիայի դեմ պայքարող ևս մեկ մարմին: [29] Այդ հանձնաժողովն իր գործունեությունը սկսել է 2013 թվականից: Հանձնաժողովը կազմված է նախագահից և չորս անդամներից, որոնք նշանակվում են խորհրդարանի կողմից[30]:

Հանձնաժողովը ներդրել է մի մեխանիզմ, որը վերահսկելու է հանրային նշանակություն ունեցող պաշտոնատար անձանց, դատավորների, դատախազների, այլ պետական պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների նկատմամբ: Հանձնաժողովի գործունեությունը միտված է բարեխղճության, բարեվարքության չափանիշներն ու

---

[29] Տե՛ս http://cni.md/?page_id=172

[30] Տե՛ս Ludmila Gamurari and Cristian Ghinea,
It has only just begun: EU and anticorruption institutions in Moldova
http://www.epc.eu/documents/uploads/pub_4683_eu_and_anticorruption_institutions_in_moldova.pdf

լավագույն պրակտիկան ներդնելուն հանրային վարչարարության մակարդակում, որն իրականացվում է քաղաքացիական հասարակության, ազգային և միջազգային կառույցների ակտիվ մասնակցությամբ[31]: Ի դեպ, հանձնաժողովը նույնպես ունի թեժ գիծ՝ 022 820 620 հեռախոսահամարով:

Ուսումնասիրելով Մոլդովայի Հանրապետությունում առկա կոռուպցիայի մակարդակը՝ ստանում ենք հետևյալ պատկերը: Այսպես, օրինակ Freedom house-ի կողմից Մոլդովայի Հանրապետությունում 2006–2015թթ.–ի կոռուպցիայի մակարդակը ներկայացնում ենք ստորև՝ Աղյուսակում 5-ում[32]:

Աղյուսակ 5. Կոռուպցիայի մակարդակը Մոլդովայում ըստ Freedom house-ի



Աղուսակ 5-ից պարզ է դառնում, որ Մոլդովայի Հանրապետությունում կոռուպցիայի zմակարդակն ըստ էության տարիներ շարունակ գտնվել է միևնույն մակարդակի վրա, իսկ վերջին տարիներին նվազել:

Ըստ էության միևնույն պատկերը կարող եzնք ստանալ նաև Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության հրապարակած տվյալներն ուսումնասիրելով, որն արտացոլված է Աղյուսակ 6-ում[33]:

Աղյուսակ 6. Կոռուպցիայի մակարդակը Մոլդովայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի

---

[31] Տե՛ս National Integrity Commission, Annual activity report of 2013 http://cni.md/wp-content/uploads/2014/07/Raport-CNI-2013-englez.pdf
[32] Տե՛ս https://freedomhouse.org/report/nations-transit/2015/moldova
[33] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview



Վերը ներկայացված վիճակագրությունից պարզ է դառնում, որ վերջին տարիներին Մոլդովայի Հանրապետությունում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության՝ կոռուպցիայի մակարդակը տատանվել է միջինը 95–110 միջակայքում: Ըստ էության այդ ցուցանիշը բավականին բարձր է: Այնուամենայնիվ, մոդելային առումով, Մոլդովայի Հանրապետությունում ներդրված հակակոռուպցիոն մարմինը համապատասխանում է օրենքի տեսանկյունից միջազգային չափանիշներին, բավականին հետաքրքիր լուծումներ են կիրառվում նաև՝ մարմնի մասնագիտական անկաշառելիության թեսթավորման կամ ապրելակերպի պայմանների մոնիթորինգի հետ կապված:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ Մոլդովայի Հանրապետության հակակոռուպցիոն մարմնի մեկ տասնամյակից ավելի փորձը պետք է հաշվի առնել, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մոլդովայում հակակոռուպցիոն մարմնի գործունեության առանցքը կազմում է քննչական իրավասությունը, իսկ կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ վերլուծությունների և ուսումնասիրությունների կատարումը, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթությունը կրում են երկրորդական բնույթ: Թերևս դա է պատճառը, որ վերը ներկայացված միջազգային կազմակերպությունների վիճակագրական տվյալների համաձայն՝ Մոլդովայի Հանրապետությունում կոռուպցիայի էական նվազում չի նկատվում տարիներ շարունակ:

1.4 Լատվիայի Հանրապետություն

Լատվիայի Հանրապետությունում «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքն օրինական ուժի մեջ է մտել 1995 թվականի հոկտեմբերի 25–ին: Իսկ 1997 թվականից իր գործունեությունն է սկսել Կոռուպցիայի կանխարգելման խորհուրդը: Նրա հիմնական գործառույթն է եղել նախագծել Լատվիայի հակակոռուպցիոն ռազմավարությունը և նպաստել դրա իմպլեմենտացմանը: Կառավարության կողմից առաջին հակակոռուպցիոն ծրագիրը հաստատվել է 1998 թվականին:

1999 թվականից Լատվիայում սկսվել են քննարկումներ կոռուպցիայի կանխարգելման և պայքարի ինստիտուցիոնալ անկախ մարմին ստեղծելու մասին: Վերջինս հավանության է արժանացել նաև այդ ժամանակ Լատվիայում գործող կոռուպցիայի կանխարգելման խորհրդի կողմից:

2000 թվականի օգոստոսի 8–ին Նախարարների կաբինետի կողմից հաստատվել է կոռուպցիայի դեմ պայքարի նոր հայեցակարգ:

Այդ հայեցակարգի շրջանակներում՝ 2002 թվականի հոկտեմբերի 2–ին, ստեղծվեց աշխատանքային խումբ, որը պետք է նախագծեր օրենքներ և իրավակարգավորումներ Լատվիայում ինստիտուցիոնալ անկախ հակակոռուպցիոն համակարգ ստեղծելու համար:

Արդյունքում՝ 2001 թվականին, արդեն կազմվեց օրենքի նախագիծ՝ «Կոռուպցիայի կանխարգելման և պայքարի Բյուրոյի մասին»: Այդ օրինագիծը խորհրդարան ներկայացվեց 2002 թվականի փետրվարի 8–ին, որն օրինական ուժի մեջ մտավ նույն թվականի մայիսի 1–ին[34]:

Այսպիսով, Լատվիայում ստեղծվեց կոռուպցիայի կանխարգելման և պայքարի բյուրոն, որն էլ արդեն մեկ տասնամյակից ավելի գործում է Լատվիայում՝ «Կոռուպցիայի կանխարգելման և պայքարի Բյուրոյի մասին» օրենքի հիման վրա[35]:

Լատվիայում 2004–2008թթ.–ի ծրագրին[36] հաջորդել է 2009–2013 հակակոռուպցիոն ծրագիրը[37], որին էլ հաջորդել է 2015 թվականի հուլիսին կառավարության կողմից

---

[34] Տե՛ս Corruption prevention and combating bureau, 2002-2007
http://www.knab.gov.lv/uploads/eng/knab_anglu.pdf
[35] Տե՛ս Law On Corruption Prevention and Combating Bureau
http://www.knab.gov.lv/uploads/eng/law_knab_eng.pdf

հաստատված «Կոռուպցիայի կանխարգելման և պայքարի մասին» 2015–2020 ուղեցույցը[38]: Բոլոր այդ փաստաթղթերում մատնանշվել են գործունեության այն ուղղությունները, առաջադրված խնդիրներն ու մարտահրավերները, որոնք պետք է լուծվեին Լատվիայում ձևավորված Բյուրոյի գործունեության շրջանակներում:

Լատվիայում գործող Բյուրոն ունի գործունեության հիմնական երեք ուղղություններ՝ կանխարգելիչ, հետաքննական և կրթական:

Կանխարգելիչ ուղղվածության շրջանակներում Բյուրոն մշակում է ծրագրեր, ռազմավարություններ, հայեցակարգեր, օրինագծեր, կատարում է վերլուծություններ և ուսումնասիրություններ, որոնք միտված են կոռուպցիայի նվազեցմանը Լատվիայում[39]:

Բյուրոյի մասին օրենքի 8–րդ հոդվածի համաձայն Բյուրոն իրավասու է կիրառել սանկցիաներ վարչական պատասխանատվության ենթակա անձանց նկատմամբ՝ օրենքով նախատեսված կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար, ինչպես նաև իրականացնել հետաքննական և օպերատիվ գործողություններ պետական ծառայողների նկատմամբ, որոնք առնչվում են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հետ: Բյուրոյի աշխատակիցն ունի լիիրավ քրեադատավարական իրավասություններ հետաքննություն իրականացնելու ուղղությամբ:

Կրթական ուղղվածությունն ամբողջությամբ միտված է հասարակության իրավագիտակցության բարձրացմանը իրազեկումների, կոնֆերանսների և քննարկումների կազմակերպման միջոցով[40]: Էթիկայի և բարեխիղճ վարքագծի վերաբերյալ դասընթացների կազմակերպումը Բյուրոյի գործունեության անքակտելի բաղադրիչն է[41]:

Բյուրոն նաև վերահսկողություն է իրականացնում քաղաքական կուսակցությունների և ասոցիացիաների ֆինանսական գործունեության, ինչպես նաև նախընտրական քարոզարշավների ընթացքում ծախսվող միջոցների նկատմամբ:

---

[36] Տե՛ս http://www.knab.gov.lv/uploads/free/valsts_programma/national_programme.pdf
[37] Տե՛ս Corruption prevention and combating program 2009-2013
http://www.knab.gov.lv/uploads/eng/corruption_prevention_and_combating_programme_2009-2013.pdf
[38] Տե՛ս Guidelines for the corruption prevention and combating 2015-2020
http://www.knab.gov.lv/uploads/eng/knab_pamatnostadnes_2015_2020_eng.pdf
[39] Տե՛ս կանխարգելիչ բնույթի լիազորությունների ամբողջական ցանկը Բյուրոյի մասին օրենքի 7–րդ հոդվածում:
[40] Տե՛ս http://www.knab.gov.lv/en/education/
[41] Տե՛ս Phrase 2 report on implementing the OECD anti-bribery convention in Latvia, October 2015, p. 11
http://www.oecd.org/daf/anti-bribery/Latvia-Phase-2-Report-ENG.pdf

Բյուրոն ունի նախագահ, որը նշանակում է 5 տարի ժամկետով: Նախագահն ընտրվում է Նախարարների կաբինետի հայտարարված բաց և թափանցիկ մրցույթի հիման վրա: Այդ նպատակով ձևավորվում է մրցութային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են Բյուրոյի սահմանադրական պաշտպանության տնօրենը, Գլխավոր դատախազը և այլ իրավասու անձինք:

Բյուրոյի պաշտոնական կայքէջում հասանելի են Բյուրոյի տարեկան զեկույցները: 2015 թվականի զեկույցը դեռևս չի հրապարակվել, սակայն վերլուծելով 2014 թվականի զեկույցը՝ հնարավոր է պատշաճ պատկերացում կազմել Բյուրոյի գործունեության վերաբերյալ[42]:

Բյուրոն 2014 թվականի ընթացքում հարուցել է 25 քրեական գործ: Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել է 39 քրեական գործ, որոնցից 27 գործով քրեական հետապնդում է իրականացվել 72 անձի նկատմամբ: Բյուրոն ոչ միայն գործունեություն է ծավալել Լատվիայում, այլ նաև նրա սահմաններից դուրս՝ իրավական փոխօգնության խնդրանքով դիմել այլ պետություններին: Մեծ թափով իրականացվել են նաև հասարակության իրավագիտակցության բարձրացմանն ուղղված սեմինարներ և կոնֆերանսներ, որոնց մասնակցել է շուրջ 3800 անձ:

Բյուրոյի 2015 թվականի հուլիսի 1–ից դեկտեմբերի 31–ը կտրվածքով ժամանակաշրջանի ընթացքում իրականացված գործունեության վերաբերյալ տեղեկատվական զեկույցի համաձայն առկա են հետևյալ վիճակագրական տվյալներ[43]:

Այդ ժամանակաշրջանում Բյուրոի կողմից ստացվել է 735 դիմում, ինչպես նաև շուրջ 3272 հաղորդագրություն՝ թեժ գծի միջոցով:

2015 թվականի դեկտեմբերի 31–ի դրությամբ՝ Բյուրոն ունեցել է շուրջ 143 աշխատակից: Իսկ Բյուրոյի բյուջեն կազմել է 2,370,618 եվրո, ի հավելումն այդ գումարին՝ արտասահմանյան աղբյուրներից ստացվել է 410,428 եվրո:

2015 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Բյուրոն ակտիվորեն աշխատել է Լատվիայի օրենսդրության բարեփոխման ուղղությամբ, մասնավորապես՝ շուրջ 50

---

[42] Տե՛ս Progress and results in preventing and combating corruption in Latvia, Periodical update, 2014 http://www.knab.gov.lv/uploads/eng/knab_2014_eng_pdf.pdf

[43] Տե՛ս informative report On the Activities of the Corruption Prevention and Combating Bureau (KNAB) from 1 July 2015 till 31 December 2015

իրավական ակտերում պարունակվող կոռուպցիոն կամ շահերի հնարավոր բախման դրույթների վերաբերյալ տրվել են եզրակացություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում Բյուրոն զբաղվել է նաև հակակոռուպցիոն կրթությամբ: Մասնավորապես՝ կազմակերպվել են համապատասխան դասընթացներ, որոնց մասնակցել են 1863 անձինք, որոնցից 1400–ը եղել են հանրային ծառայողներ:

2015 թվականի երկրորդ կիսամյակում, ընդհանուր առմամբ, 10 քրեական գործ է ուղարկվել դատախազություն, որոնք նախաձեռնվել են 18 կասկածյալների նկատմամբ (2015թ.–ի ամբողջ ընթացքում նախաձեռնվել է 27 քրեական գործ):

Ինչպես գիտենք, Բյուրոն նաև վերահսկողություն է իրականացնում քաղաքական ուժերի, կուսակցությունների գործունեության նկատմամբ, որոնք պարտավոր են Բյուրոյին ներկայացնել ամենամյա զեկույց: 2015 թվականի երկրորդ կիսամյակում Բյուրոն զեկույցի չներկայացման պատճառով դիմել է դատարան 4 կուսակցությունների գործունեությունը դադարեցնելու խնդրանքով:

Ուսումնասիրելով Լատվիայի Հանրապետությունում առկա կոռուպցիայի մակարդակը՝ ստանում ենք հետևյալ պատկերը: Այսպես, օրինակ Freedom house-ի կողմից Լատվիայի Հանրապետությունում 2006–2015թթ.–ի կոռուպցիայի մակարդակը ներկայացնում ենք ստորև՝ Աղյուսակ 7-ում[44]:

Աղյուսակ 7. Կոռուպցիայի մակարդակը Լատվիայում ըստ Freedom house-ի



Աղյուսակ 7-ում արտահայտված վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ ի համեմատություն այլ երկրների՝ կոռուպցիայի մակարդակը Լատվիայի

[44] Տե՛ս https://freedomhouse.org/report/nations-transit/2015/latvia

Հանրապետությունում տարիներ շարունակ գտնվել է միևնույն՝ նվազագույն մակարդակի վրա՝ տատանվելով 3,0–3,25 միավորների միջակայքում:

Ըստ էության միևնույն պատկերը կարող ենք ստանալ նաև Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության հրապարակած տվյալներն ուսումնասիրելով, որն արտահայտված է Աղյուսակ 8-ում[45]:

Աղյուսակ 8. Կոռուպցիայի մակարդակը Լատվիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Այս վիճակագրական տվյալներն ըստ էության չեն փոխում նախորդ վիճակագրության պատկերը, այսպես՝ Լատվիայի Հանրապետությունը շուրջ 10 տարի շարունակ գտնվել է 40–61 հորիզոնականում ըստ, միջինը, 178 երկրների ցանկում: Իսկ դինամիկորեն նվազման միտում է նկատվում՝ սկսած 2011 թվականից (ի տարբերություն 61–րդ հորիզոնականի 2015–ին գտնվել է 40–րդ հորիզոնականում):

Ամփոփելով Լատվիայի Հանրապետությունում ներդրված հակակոռուպցիոն մարմնի մոդելը՝ պարզ է դառնում, որ այն լավագույններից մեկն է աշխարհում և իր մեջ ներառում է հակակոռուպցիոն պայքարի առաջադեմ երեք ուղղությունները (կրթական,

[45] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview

կանխարգելիչ և հետաքննական), որի արդյունքում էլ Լատվիայում նվազում է կոռուպցիայի մակարդակը։

Միևնույն ժամանակ, ընդգծենք, որ Լատվիայի Հանրապետությունում ներդրված հակակոռուպցիոն մարմնի գլխավոր թերությունը կայանում է նրանում, որ այն, ըստ էության, կախման մեջ է գտնվում գործադիր իշխանությունից։ Այդ մասին իրենց մտահոգությունն են արտահայտել նաև միջազգային կազմակերպությունները։

Արդեն նշվել է, որ Բյուրոյի նախագահի ընտրությունները հայտարարվում են Նախարարների կոմիտեի կողմից, սակայն թե՛ Greco–ի ներկայացրած զեկույցի[46], թե՛ 2014 թվականի նոյեմբերի 19–ին OSCE/ODIHR–ի ներկայացրած եզրակացության[47] համաձայն՝ այդ ընթացակարգը բավարար ենթադրություն է տալիս առ այն, որ ընտրությունը գտնվում է Նախարարների կաբինետի «ձեռքերում»։ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հենց նույն Բյուրոյի մասին օրենքի 2–րդ հոդվածի համաձայն՝ Բյուրոն իր գործունեության ընթացքում նույնպես գտնվում է Նախարարների կաբինետի վերահսկողության ներքո։

1.5 Լիտվայի Հանրապետություն

Լիտվայի հանրապետությունում բարեփոխումները կոռուպցիայի դեմ պայքարում սկսվել են 1990–ական թվականներից, երբ վերականգնվեց Լիտվայի անկախությունը։ Դրանից ի վեր Լիտվայում բացակայում էր միասնական մեկ մարմին, որը կզբաղվեր կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հետաքննությամբ։

Սակայն, կառավարության 1997–2000 թվականների հաստատված ծրագրի շրջանակներում 1997 թվականի փետրվարի 18–ի թիվ 135 որոշմամբ ձևավորվեց անկախ միասնական ինստիտուտ, որը կհամակարգեր կոռուպցիայի դեմ պայքարը։ Այդ մարմինը գործում էր «Հատուկ քննչական ծառայություն» վերտառության ներքո։ Այդ ծառայության հիմնական խնդիրն էր նպաստել կոռուպցիայի մակարդակի նվազեցմանը։ Մինչև 2000 թվականը այն գործում էր ներքին գործերի նախարարության կազմում[48]։

---

[46] Տե՛ս GRECO 2012 Compliance Report in respect of Latvia, par. 22.
[47] Տե՛ս Opinion on the Law on the Bureau on Prevention and Combating of Corruption of Latvia, page 10 http://www.legislationline.org/documents/id/19392
[48] Տե՛ս 1997–2007, page 10 http://www.stt.lt/documents/leidiniai/STT_ENG.pdf

Սակայն, 2000 թվականի մայիսի 2–ին ընդունվեց Հատուկ քննչական ծառայության մասին օրենքը[49], որով այդ ծառայությունը դարձավ գործադիր իշխանությունից լիիրավ անկախ մարմին, որը հաշվետու է նախագահի և խորհրդարանի առջև:

Իսկ 2002 թվականի մայիսի 28–ին ընդունվեց «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքը, որը նախագծվել էր հենց Հատուկ քննչական ծառայության կողմից:

«Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքի 4–րդ հոդվածի համաձայն՝ այդ ծառայության գործունեությունը հիմնված է օրինականության, իրավունքի գերակայության, հրապարակայնության, թափանցիկության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքների վրա:

Միևնույն ժամանակ, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության ապահովման համար սահմանվել է, որ Լիտվայի հանրապետության կառավարությունը, նախարարները, տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են հինգօրյա ժամկետում ծառայության պահանջով տրամադրել իրենց ընդունած իրավական ակտերը, որոնք դեռևս պաշտոնապես չեն հրապարակվել: Այդ մարմինները պարտավոր են ապահովել բոլոր պայմանները, իրենց ռեգիստրի, արխիվի, բանկային տվյալների հասանելիությունը ծառայության համար:

Հատուկ քննչական ծառայության տնօրենի թեկնածուին առաջադրում է Լիտվայի Հանրապետության նախագահը Խորհրդարանին: Նախագահն է հենց նշանակում և ազատ է արձակում ծառայության տնօրենին՝ խորհրդարանի համաձայնությամբ:

Հատուկ քննչական ծառայության տնօրենը նշանակվում է հինգ տարի ժամկետով, միևնույն ժամանակ չի կարող այդ պաշտոնը զբաղեցնել ավելի քան երկու անգամ անընդմեջ:

Հատուկ քննչական ծառայության տնօրենի առաջին տեղակալը, տեղակալը նշանակվում և ազատվում են զբաղեցրած պաշտոնից Լատվիայի նախագահի կողմից՝ տնօրենի առաջարկությամբ: Գործունեության ընթացքում՝ տնօրենի բացակայության դեպքում նրան փոխարինում է տեղակալներից մեկը:

---

[49] Տե՛ս Law on the special investigation service
http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc_l?p_id=110823

Ծառայության տնօրեն կամ նրա տեղակալ կարող են նշանակվել այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և ոչ պակաս, քան 5 տարի եղել են հանրային ծառայող՝ ըստ 2003 թվականի ապրիլի 1–ին ընդունված Լիտվայի Հանրապետության Հատուկ քննչական ծառայության մասին ստատուտի 2–րդ հոդվածի[50]:

Այդ նույն ստատուտի 4–րդ հոդվածի համաձայն՝ ծառայության մյուս բոլոր աշխատակիցները նշանակվում են ծառայության տնօրենի կողմից:

Հատուկ քննչական ծառայության աշխատակիցների գործունեության առանցքային բաղադրիչն է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, մեղավորների պարզումը, աշխատակիցներն ունեն ընդհուպ զենք կրելու և անհրաժեշտության դեպքում նաև այն գործադրելու իրավունք:

Ծառայությունը գործում է որպես ինստիտուցիոնալ անկախ մարմին, անկախությունը երաշխավորված է օրենքներով և այլ իրավական ակտերով: Ծառայության մասին օրենքի 16–րդ հոդվածի համաձայն՝ հանդիպումները, հավաքները և այլ գործողությունները Հատուկ քննչական ծառայության շենքից 25 մետր շառավղով արգելված են:

Հատուկ քննչական ծառայության աշխատակցի դեմ քրեական գործ կարող է հարուցվել Լիտվայի հանրապետության Գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից: Միևնույն ժամանակ, ծառայության աշխատակիցները օրենքով սահմանված կարգով օգտվում են անձեռնմխելիությունից՝ իրենց լիազորությունների կատարման կապակցությամբ:

2002 թվականի հուլիսին Հատուկ քննչական ծառայությունում ստեղծվել է Կոռուպցիայի կանխարգելման բաժանմունք, որի հիմնական գործառույթն է կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու ուղղությամբ վերլուծությունների և հետազոտությունների կատարումը: Վերլուծությունները և հետազոտությունները միտված են ուսումնասիրելու կոռուպցիոն ռիսկայնության աստիճանն ըստ ոլորտների: Նույնիսկ սահմանվել է այդ ուսումնասիրության կատարման կարգ, որի խախտման դեպքում նախատեսված է

[50] Տե՛ս Statute of the special investigative service of the Republic of Lithuania http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc_l?p_id=392813

պատասխանատվության Լիտվայի Հանրապետության օրենսդրության համաձայն[51]: Միայն 2014 թվականի ընթացքում կատարվել են շուրջ 15 ուսումնասիրություններ:

Այդ ուսումնասիրությունների շրջանակներում էլ մշակվում են համապատասխան հակակոռուպցիոն ծրագրեր: Այդ ծրագրերը մշակվել են Հատուկ քննչական ծառայության կազմավորումից ի վեր (2002–2007թթ, 2009–2010թթ, 2011–2014թթ, 2015–2025թթ):

2015–2025թթ ծրագիրը մշակվել է առաջադեմ միջազգային փորձի հիման վրա և նպատակ է հետապնդում էապես նվազագույնի հասցնել կոռուպցիայի մակարդակը Լիտվայի Հանրապետությունում[52]: Այդ ծրագիրը հաստատվել է Լիտվայի խորհրդարանի կողմից: Ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով կոռուպցիոն հանցագործությունների լատենտային բնույթը, ինչպես նաև սոցիոլոգների խորհուրդները:

Ծրագրի մշակման հիմքում դրվել է կոռուպցիայի վերաբերյալ իրականացված սոցիալական հարցումները: Մասնավորապես, այդ հարցումների համաձայն՝ Լիտվայում այն անձանց թիվը, ովքեր մտածում են, որ պետք է գումար «վճարել» ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար նվազել է (2011–ին այդ թիվը կազմել է բնակչության 40 տոկոսը, իսկ 2014–ին 21 տոկոսը): Միևնույն ժամանակ, նվազել է նաև այն մարդկանց թիվը, ովքեր մտածում են, որ կաշառքը խնայում է վարչարարության վրա ծախսվող ժամանակը (2011–ին այդ թիվը կազմել է բնակչության 50 տոկոսը, իսկ 2014–ին 27 տոկոսը)[53]:

Ծրագիրը միտված է սոցիալական, տնտեսական, ընտրական, կրթական, վարչական, քաղաքացիական ծառայության, առողջապահության, արդարադատության, մասնավոր և մի շարք այլ հատվածներում էականորեն նվազեցնել կոռուպցիայի ներկայիս նվազ մակարդակը:

Հատուկ քննչական ծառայության կոռուպցիայի կանխարգելման բաժանմունքը զբաղվում է նաև հակակոռուպցիոն կրթությամբ և հասարակության իրավագիտակցության բարձրացմամբ: Մասնավորապես, վերջինիս գործունեության

---

[51] Տե՛ս կարգը
http://www.stt.lt/documents/korupcijos_prevencija/PROCEDURE_FOR_THE_ANALYSIS_OF_CORRUPTION_RISK.docx
[52] Տե՛ս 2015–2025 ծրագիրը
http://www.stt.lt/documents/eng/Kovos_su_korupcija_programa_EN_2015-2025.docx
[53] Տե՛ս ամբողջական վիճակագրությունը նույն տեղում, էջ 4

անքակտելի բաղադրիչը հակակոռուպցիոն կրթության կազմակերպումն է, որն իրականացվում է դպրոցական աշակերտների, բուհերի ուսանողների և հասարակության տարբեր շերտերի շրջանակներում: Լիտվայում պատրաստվել են մեծ ծավալով կրթական նյութեր՝ հակակոռուպցիոն դասերը անցկացնելու համար: Կազմակերպվել է դասամոդուլների պատրաստման մրցույթ, որին մասնակցում էին դպրոցների ուսուցիչները և որի արդյունքում 2005թ-ին հրապարակվել է մոդուլների ժողովածու՝ ներառելով բազմաթիվ առաջարկություններ, թե ինչպես կարելի է դասավանդել հակակոռուպցիոն թեմաներ՝ պատմության, հասարակագիտության և այլ առարկաների ներքո:

Ծառայությունն ակտիվորեն աշխատում է ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ ներպետական կազմակերպությունների, հասարակության անդամների հետ: Գործում է նաև հատուկ թեժ գիծ, որով քաղաքացիները կարողանում են հայտնել իրենց մտահոգությունները, ինչպես նաև ներկայացնել հաղորդումներ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ:

Հատուկ քննչական ծառայությունը European Partners Against Corruption (EPAC) և Contact-point Network Against Corruption (EACN) միջազգային կառույցների անդամ է: Ինչպես նաև ակտիվորեն համագործակցում է Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (Greco) հետ:

Հատուկ քննչական ծառայության պաշտոնական կայքէջում (http://www.stt.lt/) դեռևս հասանելի չէ ծառայության գործունեության 2015 թվականի ամենամյա զեկույցը, սակայն 2014 թվականի զեկույցից հնարավոր է պատկերացում կազմել ծառայության կողմից իրականացվող աշխատանքի արդյունավետության մակարդակի վերաբերյալ[54]: 2014 թվականի դրությամբ ծառայությունն ունեցել է 240 աշխատակից, որոնց թիվն աճում է տարեց տարի: Զեկույցի համաձայն՝ բնակչության ավելի քան 23 տոկոսի կարծիքով կոռուպցիայի մակարդակը Լիտվայի հանրապետությունում վերջին 5 տարիների ընթացքում նվազել է:

---

[54] Տե՛ս 2014թ. զեկույցը՝
http://www.stt.lt/documents/eng/2014_metu_veiklos_ataskaita_EN-1_(asignavimai_eurais).pdf

Հատկանշական է այն հանգամանքը, որ Լիտվայի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի վերը ներկայացված՝ վերլուծությունները, ուսումնասիրությունները, հակակոռուպցիոն կրթության ապահովումը, հակակոռուպցիոն իրավական ակտերի մշակումը և մնացած բոլոր միջոցառումների իրավական հիմքը սահմանված է առանձին իրավական ակտով՝ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» 2002 թվականի մայիսի 28–ի օրենքով[55]:

Այդ օրենքը մանրամասն կարգավորում է պետության հակակոռուպցիոն քաղաքականության զարգացման համար նախաձեռնվելիք գործունեության ուղղությունները, ինչպես նաև պատասխանատու մարմինները, դրանք են՝ Կառավարությունը, Հատուկ քննչական ծառայությունը, Էթիկայի հանձնաժողովը, այլ պետական, տեղական և ոչ կառավարական կազմակերպությունները:

Ուսումնասիրելով Լիտվայի Հանրապետությունում առկա կոռուպցիայի մակարդակը՝ ստանում ենք հետևյալ պատկերը: Այսպես, օրինակ Freedom house-ի կողմից Լիտվայի Հանրապետությունում 2006–2015թթ.–ի կոռուպցիայի մակարդակը ներկայացնում ենք ստորև՝ Աղյուսակ 9-ում[56]:

Աղյուսակ 9. Կոռուպցիայի մակարդակը Լիտվայում ըստ Freedom house-ի



Վերը ներկայացված վիճակագրական տվյալներից պարզ է դառնում, որ Լիվայի Հանրապետությունում կոռուպցիայի մակարդակը վերջին տասնամյակի ընթացքում բացառապես նվազել է, իսկ վերջին 5 տարիների ընթացքում զարգանում է միևնույն տեմպով:

---

[55] Տե՛ս Law on prevention of corruption http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc_l?p_id=212525
[56] Տե՛ս https://freedomhouse.org/report/nations-transit/2015/lithuania

Լիտվայի Հանրապետությունում տարիներ շարունակ կոռուպցիայի ցածր մակարդակի մասին է վկայում նաև Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության հրապարակած տվյալները, որը պատկերված է Աղյուսակ 10-ում[57]:

Աղյուսակ 10. Կոռուպցիայի մակարդակը Լիտվայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Վերը ներկայացված Աղյուսակ 10-ից պարզ է դառնում միևնույն պատկերը, մասնավորապես՝ կոռուպցիայի մակարդակը գտնվելով միջինը միևնույն հարթության վրա՝ վերջին 5 տարիների ընթացքում արտահայտվում է նվազեցման ձևով:

Կարծում ենք, որ Լիտվայի Հանրապետությունում (ինչպես և Լատվիայի դեպքում էր) կոռուպցիայի դեմ պայքարի հաջողությունը պայմանավորված է հակակոռուպցիոն երեք ուղղությունների (քննչական, կրթական և կանխարգելիչ) լավագույն ձևով մեկտեղման արդյունքում:

Ի տարբերություն Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետությունում ինստիտուցիոնալ անկախությունն ապահովված է և վերջինս իր գործունեության ընթացքում չի գտնվում որևէ մարմնի վերահսկողության ներքո և որևէ մարմին չի միջամտում նրա տնօրենի ընտրության ընթացակարգին, այլ ընդամենը սահմանափակվում է նշանակմամբ (Լիտվայի նախագահի կողմից):

Սակայն, միևնույն ժամանակ, Լիտվայի օրենսդրությունը չի բացահայտում, թե ինչպես է կատարվում հակակոռուպցիոն մարմնի տնօրենի ընտրությունները՝ բաց և

[57] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview

հրապարակային մրցույթով, թե ոչ: Միջազգային առաջադեմ երկրների պրակտիկան վկայում է այդպիսի մրցույթների անցկացման մասին, որի արդյունքում հաղթող ճանաչված անձը միայն կարող է նշանակվել Նախագահի կողմից որպես հակակոռուպցիոն մարմնի տնօրեն:

1.6 Էստոնիայի Հանրապետություն

Էստոնիայի Հանրապետությունում դասական իմաստով կոռուպցիայի դեմ պայքարող միասնական և անկախ մարմին բացակայում է: Կոռուպցիայի դեմ պայքարում իրականացվող գործունեությունը բաժանված է տարբեր մարմինների և գերատեսչությունների միջև:

Այսպես, Արդարադատության նախարարության քրեական քաղաքականության բաժանմունքը կոորդինացնում է հակակոռուպցիոն քաղաքականության զարգացումն ու իմպլեմենտացումը Էստոնիայի Հանրապետությունում:

Կոռուպցիայի կանխարգելման, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտմամբ զբաղվում է ոստիկանությունը, ներքին անվտանգության ծառայությունն ու առհասարակ դրանք համակարգող ներքին գործերի նախարարությունը:

Հակակոռուպցիոն կրթության, հասարակության իրավագիտակցության բարձրացման ուղղությունն էլ Ֆինանսների նախարարության գործունեության բաղադրիչն է, որն իրականցվում է Արդարադատության նախարարության հետ համատեղ: Կրթական գործունեության շրջանակներում կազմակերպվում են կոնֆերանսներ, միջոցառումներ, էթիկետի դասընթացներ հանրային ծառայողների, մասնավոր սեկտորի և հասարակության տարբեր շերտերի համար[58]:

Այդ մարմիններն էլ մշակում են նաև համապատասխան իրավական ակտերի նախագծեր, որոնք միտված են հակակոռուպցիոն օրենսդրության զարգացմանը:

Էստոնիայի Հանրապետությունում ընդունվել են մի շարք ռազմավարություններ, որոնք միտված են եղել կոռուպցիայի մակարդակը նվազեցնելուն: Այսպես, ընդունվել են՝

---

[58] Տե՛ս European commission, Estonia to the EU anti-corruption report, page 3 http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/organized-crime-and-human-trafficking/corruption/anti-corruption-report/docs/2014_acr_estonia_chapter_en.pdf

2004–2008թթ, 2008–2012թթ, իսկ այժմ էլ ընթացքի մեջ է գտնվում 2013–2020թթ–ի հակակոռուպցիոն ռազմավարությունը[59]: Վերջինս ընդունվել է Կառավարության 2011–2015թթ–ի ընթացքում ծրագրված գործողությունների շրջանակներում:

Վերջին՝ 2013թ.–ի օգոստոսին ընդունված ռազմավարության հիմքում դրվել են իրականացված սոցիալական հարցումները, որոնց համաձայն՝ կաշառք պահանջվել է բնակչության 18 տոկոսից, որոնցից միայն 4 տոկոսն է տվել կաշառք կամ նվեր:

Նոր ռազմավարության հիմքում դրվել են հետևյալ երեք ուղղությունները.

ա) կոռուպցիայի վերաբերյալ իրազեկվածության զարգացում,

բ) որոշումների և գործողությունների թափանցիկության զարգացում,

գ) քննչական մարմինների քննչական գործիքակազմի զարգացում:

Այդ ուղղությունների զարգացման համար ըստ ռազմավարության նախատեսվում է մի շարք միջոցառումների իրականացում, որն իր մեջ ներառում է բարեփոխումներ թե՛ իրավական ակտերի, թե՛ ուղեցույցների և տեսանյութերի, թե՛ ինստիտուցիոնալ միջոցառումների ձեռնարկում:

Միևնույն ժամանակ, Էստոնիայի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակով ընդունել է Հակակոռուպցիոն ակտ օրենքի մակարդակով: Այդպիսի ակտ ընդունվել է դեռևս 1999 թվականին, իսկ 2013 թվականի ապրիլի 1–ից արդեն օրինական ուժի մեջ է մտել նոր՝ հակակոռուպցիոն ակտը[60]:

Այդ ակտն ամրագրում է կոռուպցիայի կանխարգելման իրավական հիմքերը՝ սահմանելով հանրության պարտականությունները և պատասխանատվությունը՝ պարտականությունների խախտման դեպքում:

Ակտը պաշտոնատար անձանց արգելում է՝

ա) պահանջել, միջնորդել կամ ստանալ եկամուտներ՝ ստացված կոռուպցիայի արդյունքում,

բ) կոռուպցիոն եղանակով օգտագործել պաշտոնական դիրքը,

---

[59] Տե՛ս Anti-corruption strategy 2013-2020 http://www.korruptsioon.ee/sites/www.korruptsioon.ee/files/elfinder/dokumendid/estonian_anti-corruption_strategy_2013-2020.pdf

[60] Տե՛ս Anti-corruption act https://www.riigiteataja.ee/en/eli/ee/Riigikogu/act/529012015001/consolide

գ) կոռուպցիոն եղանակով օգտագործել հանրային ռեսուրսները,

դ) կոռուպցիոն եղանակով օգտագործել ներգործությունը,

ե) կոռուպցիոն եղանակով օգտագործել ներքին տեղեկատվությունը:

Միևնույն ժամանակ, ակտի §8–ի համաձայն՝ հակակոռուպցիոն գործունեության համակարգումն իրականացնում է Արդարադատության նախարարը:

Ակտի համաձայն, գործում է Riigikogu հակակոռուպցիոն կոմիտեն, որն իրականացնում է վերահսկողություն հակակոռուպցիոն միջոցների իմպլեմենտացման նկատմամբ խորհրդարանում: Այդ կոմիտեն իրավասու է կանչել անձանց, պահանջել փաստաթղթեր և տեղեկատվություն: Եթե պարզվում են ենթադրյալ հանցանքի կատարման հատկանիշներ, ապա նյութերն ուղարկվում են քննչական մարմնին:

Ակտն ուղղակիորեն սահմանում է այն դեպքերը և հիմքերը, որոնց առկայության դեպքում պաշտոնատար անձին արգելվում է կայացնել որոշում կամ կատարել գործողություն, քանի որ վերջինս կարող է հանգեցնել կոռուպցիոն բնույթի հետևանքների: Ակտը նաև կարգավորում է շահերի բախման դեպքերը:

Մասնավորապես, սահմանված է, որ պաշտոնատար անձը պետք է հայտարարագրի տեղեկատվություն իր ունեցվածքի և այլ հանգամանքների վերաբերյալ՝ այն նպատակով, որ խուսափի այն շահերից, որոնք կարող են ազդեցություն ունենալ պաշտոնատար անձի կողմից իր պարտականությունների կատարմանը: Հայտարարագրի ներկայացման վերջնաժամկետն է յուրաքանչյուր տարվա մայիսի 31–ը:

Ուսումնասիրելով Էստոնիայի Հանրապետությունում առկա կոռուպցիայի մակարդակը՝ ստանում ենք հետևյալ պատկերը: Այսպես, օրինակ Freedom house-ի կողմից Էստոնիայի Հանրապետությունում 2006–2015թթ.–ի կոռուպցիայի մակարդակը ներկայացնում ենք ստորև՝ Աղյուսակ 11-ում[61]:

Աղյուսակ 11. Կոռուպցիայի մակարդակը Էստոնիայում ըստ Freedom house-ի



[61] Տե՛ս https://freedomhouse.org/report/nations-transit/2015/estonia

Ներկայացված Աղյուսակ 11-ը վկայում է, որ Էստոնիայի Հանրապետության վերջին տասնամյակում կոռուպցիայի մակարդակը գտնվել է էականորեն ցածր մակարդակում՝ համեմատած այլ երկրների հետ: Միևնույն պատկերը կարելի է ստանալ նաև Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների[62]:

Աղյուսակ 12. Կոռուպցիայի մակարդակը Էստոնիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Մասնավորապես, տվյալների համեմատությունը վկայում է այն մասին, որ Էստոնիայի Հանրապետությունը առավելապես կոռուպցիայից զերծ առաջադեմ երկրներից մեկն է աշխարհում:

Սակայն, համեմատած այլ երկրների, Էստոնիայի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարող միասնական մարմին բացակայում է, և ամբողջ հակակոռուպցիոն գործունեության ոլորտն այժմ բաշխված է գործադիր իշխանության տարբեր մարմինների միջև, որոնց աշխատանքի վերը ներկայացված արդյունքը բացառապես տարիներ շարունակ տարվող միջոցառումների արդյունք է՝ կոռուպցիայի կանխարգելման մասին ակտի ընդունումից ի վեր (1997թ.–ից), որի շնորհիվ Էստոնիայի Հանրապետությունում ներկայումս ձևավորվել է հակակոռուպցիոն մշակույթ: Սակայն, նախորդ պետությունների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ կոռուպցիայի կանխարգելման արագընթաց աշխատանք կարող է կազմակերպվել բացառապես միասնական մարմնի առկայության պարագայում:

[62] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

2.1 Բոսնիա - Հերցեգովինա

Այստեղ գործում է Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման գործակալությունը, (այսուհետ՝ Գործակալություն)։ Այն ստեղծվել է «Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման գործակալության մասին» օրենքի հիման վրա, որն ընդունվել է 2009 թվականին և փոփոխվել՝ 2013թ.-ին։

Տնօրենին նշանակում և պաշտոնից ազատում է Խորհրդարանական վեհաժողովը։ Պաշտոնավարման ժամկետը 5 տարի է, և տնօրենն իրավունք ունի նշանակվել առավելագույնը երկու ժամկետով։ Մարմինը հաշվետու է Խորհրդարանական վեհաժողովին։

Գործառույթների շրջանակն ընդգրկում է ուսումնասիրությունների կատարում, կոռուպցիայի կանխարգելում, քաղաքականության մշակում։

Գործակալությունը պատասխանատու է պետական ինստիտուտներում և մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման աշխատանքների և կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման համար։ Ի թիվս այլ գործառույթների՝ Գործակալության պարտականությունները ներառում են. Հակակոռուպցիոն ռազմավարության նախապատրաստում, համակարգում և վերահսկում, պետական ինստիտուտներում շահերի բախման կանոնակարգերի իրականացման մոնիթորինգ և վերահսկողություն, ընթացք տալ հանրության կողմից ներկայացված կոռուպցիոն բողոքներին, կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված օրենքների և իրավական ակտերի և կարգավորումների իրականացման մոնիթորինգ և վերահսկողություն, կոռուպցիայի կանխարգելմամբ զբաղվող ազգային գիտական և մասնագիտական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների, ԶԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն, կոռուպցիայի կանխարգելմանը և կոռուպցիայի դեմ պայքարին

ուղղված կրթական ծրագրերի մշակում և քաղաքացիների համար երկրում առկա կոռուպցիայի վիճակի մասին տեղեկատվության հանրայնացում[63]:

2014թ. -ին Գործակալության բյուջեն կազմել է 1,115,000 բոսնիական մարկա՝ մոտավորապես 636,000 ԱՄՆ դոլար ներկա փոխարժեքով:

Աշխատակազմը 2014թ. -ին բաղկացած է եղել 22 հոգուց:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որն արտահայտված է Աղյակում 13-ում:

Աղյուսակ 13. Կոռուպցիայի մակարդակը Բոսնիա-Հերցեգովինայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Աղյուսակ 13-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ առկա է դրական միտում մինչև մարմնի ստեղծումը՝ 2009թ. և ստեղծումից հետո՝ մինչև 2015թ.:

2.2 Բուլղարիա

Բուլղարիան չունի ունիվերսալ (բազմանպատակ) հակակոռուպցիոն գործակալություն: Փոխարենը վերջինս ունի որոշ կառույցներ, որոնք բավականին անարդյունավետ են համարվում:

- Կոռուպցիայի և կազմակերպված հանցագործության կանխարգելման և դիմակայման կենտրոն (հայտնի է որպես “BORKOR”), որը զբաղվում է վերլուծական

[63] Տե՛ս https://www.acauthorities.org/country/ba

աշխատանքներով, օրենքի նախագծերի վերանայմամբ և վարչական մարմիններում կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ մշակելով: Սակայն ԵՄ կողմից անցկացված վերջին գնահատման արդյունքում նշվել է, որ BORKOR-ը շահավետ չէ[64]:

- Շահերի բախման կանխարգելման և բացահայտման հանձնաժողով (CPACI), որը նույնպես դիտվում է որպես անարդյունավետ մարմին օրենսդրական և կառավարման խնդիրների պատճառով:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որն արտահայտված է Աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14. Կոռուպցիայի մակարդակը Բուլղարիայում ըստ Թրանսփարենսի



Ինթերնեշնլի

Ինչպես տեսնում ենք, տարիների ընթացքում Բուլղարիայում կոռուպցիայի մակարդակը աճել է, օրինակ՝ 2007թ.-ին Բուլղարիան զբաղեցրել է 64-րդ հորիզոնականը նույնիսկ 179 երկրների շարքում, իսկ 2015թ.-ին՝ 69-րդ հորիզոնականը 167 երկրների շարքում:

2.3 Խորվաթիա

[64] Տե՛ս European Commission: COM (2015) final "Report from the Commission to the European Parliament and the Council on progress in Bulgaria under the co-operation and verification mechanism"

Կոռուպցիայի և կազմակերպված հանցագործությունների կանխման գրասենյակը, (այսուհետ՝ Գրասենյակ), (USKOK) Խորվաթիայի Գլխավոր Դատախազության մասնագիտացված բաժին է։

Իրավական հիմքը կազմում է «Կոռուպցիայի և կազմակերպված հանցագործությունների կանխման գրասենյակի մասին» օրենքը, որն ընդունվել է 2001 թ. -ին։

Գրասենյակի տնօրենին նշանակում է Գլխավոր դատախազը դատական գործերի հարցերով պատասխանատու նախարարի և Գլխավոր դատախազության կոլեգիալ մարմնի նախնական համաձայնությամբ։ Տնօրենը նշանակվում է 4 տարի ժամկետով կրկին վերանշանակվելու հնարավորությամբ։

Հիմնական գործառույթներն են հետաքննությունը և դատական կարգով հետապնդում իրականացնելը։ Այսպիսով, Գրասենյակի հիմնական բաժինը քրեական հետապնդման բաժինն/վարչությունն է։ Սակայն, գործում են նաև այլ բաժիններ/վարչություններ, որոնք զբաղվում են կոռուպցիայի կանխարգելման և հասարակայնության հետ կապերի հարցերով, ուսումնասիրություններով և փաստաթղթերով, միջազգային համագործակցությամբ և համատեղ հետաքննությամբ, հանցագործության արդյունքում ստացված եկամուտների հետազոտությամբ։

Բյուջեն 2013թ. -ին կազմել է 21,298,250.00 խորվաթական կունա՝ մոտավորապես 3,170,000 ԱՄՆ դոլար ներկա փոխարժեքով։ Աշխատակազմը 2014թ. -ին բաղկացած է եղել 55 աշխատակցից։

ԵՄ 2014թ. -ի Հակակոռուպցիոն զեկույցում նշվում է բարձր մակարդակներում, ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակներում կոռուպցիայի մասին հայտարարությունների քննությունների Գրասենյակի համեմատաբար լուրջ հաջողությունների մասին։ Նաև նշվել է, որ մի քանի նախկին նախարարների (օրինակ՝ Պաշտպանության նախարարը, Էկոնոմիկայի նախարարը և փոխնախարարը, Ներքին գործերի նախարարը, Գյուղատնտեսության նախարարը) և մեկ քաղաքական կուսակցության նկատմամբ իրականացվել է կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ հետաքննություն։ Գրասենյակը իրավասու է կոռուպցիայի մասին հայտարարությունների անկողմնակալ հետաքննություն իրականացնել անկախ կոռուպցիայի մեջ ներգրավված անձանց քաղաքական պատկանելիությունից կամ նրանց

կապերից: Սակայն բարձրաստիճան պաշտոնյաների մասով վերջնական դատական որոշումները դեռ հազվադեպ/սակավ են[65]:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որն արտահայտված է Աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15. Կոռուպցիայի մակարդակը Խորվաթիայում ըստ Թրանսփարենսի



Ինթերնեշնլի

Աղյուսակ 15-ի վերլուծությունը վկայում է, որ վերջին 10 տարիների ընթացքում կոռուպցիայի մակարդակը նվազել է Խորվաթիայում: Սակայն նվազումը չի կարելի կապել միայն հակակոռուպցիոն մարմնի գործոնով, որովհետև էական տարբերություն տեղի է ունեցել վերջին տարվա ընթացքում, մինչդեռ մարմինը գործում է դեռևս 2001թ.-ից: Բացի այդ, վերոնշյալ մոդելի թերությունը կայանում է նրանում, որ այն, գտնվելով դատախազության մարմնի ներսում, չի ներառում կրթական գործառույթներ:

2.4 Լեհաստան

Լեհաստանում գործող հակակոռուպցիոն մարմինը Կենտրոնական Հակակոռուպցիոն բյուրոն է, (այսուհետ՝ Բյուրո), որը ստեղծվել է 2006թ. -ին: Այն գործում է «Կենտրոնական հակակոռուպցիոն բյուրոյի մասին» օրենքի հիման վրա, որն ընդունվել է 2006թ. -ի հունիսին:

---

[65] Տե՛ս European Commission, COM (2014) 38 final, “Annex Croatia to the EU Anti-Corruption Report”, p9.Եվրոպական հանձնաժողով «Հավելված.Խորվաթիան ԵՄ հակակոռուպցիոն զեկույցում»

Վերոնշյալ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ Բյուրոյի տնօրենին նշանակում է Վարչապետը Լեհաստանի Հանրապետության Նախագահի, Հատուկ Ծառայությունների Կոմիտեի և «Հատուկ ծառայություններ» Խորհրդարանական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո: Վարչապետը կարող է նույն հիմքերով և նույն կարգով պաշտոնանկ անել բյուրոյի տնօրենին: Տնօրենի պաշտոնավարման ժամկետը 4 տարի է՝ առավելագույնը ևս մեկ ժամկետով ընտրվելու հնարավորությամբ:

Բյուրոյի տնօրենը հաշվետվություն է ներկայացնում Խորհրդարանին տարեկան մեկ անգամ:

Բյուրոն ունի հետևյալ գործառույթները՝

- Վերլուծական գործունեություն, ներառյալ՝ «պետության տնտեսական շահերին սպառնացող» վտանգների բացահայտում,
- Օպերատիվ հետախուզական գործունեություն և իրավական վարույթների հարուցում (Բյուրոն օժտված է զգալի ոստիկանական լիազորություններով, ներառյալ՝ բանկային հաշիվները և հեռախոսային խոսակցությունները վերահսկելու և գաղտնի գործողություններ ձեռնարկելու լիազորություններ).
- Ունեցվածքի և եկամուտների հայտարարագրերի վերահսկողություն,
- Կանխարգելիչ և կրթական գործունեություն:

Բյուրոն ունի 13 կենտրոնական և 11 մարզային գրասենյակներ:

Բյուրոյի աշխատակազմը կազմված է 880 աշխատակցից: 2014թ. -ին Բյուրոն կազմել է 477 գործ և ավարտել՝ 214 քննություն:

Առաջին տարիներին Բյուրոն համարվում էր կողմնակալ կառույց, որը, կարծես թե, ստեղծվել էր որպես ընդդիմությանը հետապնդելու միջոց: Սակայն 2009թ. -ին՝ վերջինիս ղեկավարական կազմի փոփոխությունից հետո. Բյուրոյին ներկայումս վերաբերվում են որպես առավել պակաս կուսակցականացված կառույց, սակայն դեռևս առկա են պնդումներ առ այն, որ վերջինս գտնվում է վարչապետից բավականին կախվածություն մեջ: Այժմ քննարկվում է օրենքը փոփոխելու անհրաժեշտությունը, որպեսզի հետագայում Բյուրոյի տնօրենին նշանակի Խորհրդարանը:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որն արտահայտված է Աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16. Կոռուպցիայի մակարդակը Լեհաստանում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Աղյուսակ 16-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ վերջին 10-ամյակում Լեհաստանի կոռուպցիայի մակարդակը զգալիորեն նվազել է՝ զբաղեցնելով 61-ից 30-րդ հորիզոնականը: Հետևաբար, Լեհաստանի փորձը կարելի է համարել Միջազգային հաջողված փորձի օրինակներից մեկը՝ հաշվի առնելով նաև վերջինիս կողմից բոլոր հակակոռուպցիոն գործառույթների իրականացումը: Հավանաբար, Բյուրոյի տնօրենին Խորհրդարանի կողմից նշանակելու վերաբերյալ օրենքում նախատեսված փոփոխությունները կատարելուց հետո հակակոռուպցիոն մակարդակը ավելի կնվազի, և հասարության վերաբերմունքը վարչապետից կախվածության մեջ գտնվելու վերաբերյալ կնվազի:

2.5 Ռումինիա

Ռումինիայում գործում են երկու հիմնական ինստիտուտներ. Ազգային հակակոռուպցիոն տնօրինությունը (“DNA”) և Բարեխղճության ազգային գործակալությունը (“ANI”): Երկուսն էլ ներկայումս բավականին արդյունավետ են:

Ազգային հակակոռուպցիոն տնօրինությունը, (այսուհետ՝ Տնօրինություն) ստեղծվել է կառավարության 2002 թվականի արտակարգ հրամանագրով՝ որպես Գլխավոր դատախազության կազմում ինքնուրույն կառույց, «Կոռուպցիոն դեպքերի կանխարգելման, բացահայտման և պատժամիջոցների կիրառման» 2000 թվականի թիվ 78-րդ օրենքի համաձայն:

Բարեխղճության ազգային գործակալությունը, (այսուհետ՝ Գործակալություն), հիմնվել է 2007թ. -ին «Բարեխղճության ազգային գործակալության հիմնադրման, կազմակերպման և գործունեության մասին» թիվ 114-րդ օրենքի համաձայն:

Տնօրինության Գլխավոր դատախազին Արդարադատության նախարարի առաջադրմամբ նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Դատավորների Գերագույն Խորհրդի կարծիքը ստանալուց հետո: Պաշտոնից ազատումը կատարվում է նույն ընթացակարգով: Պաշտոնավարման ժամկետը 3 տարի է՝ հետագայում առավելագույնը երկու ժամկետով ընտրվելու հնարավորությամբ:

Գործակալության տնօրենը և փոխտնօրենները ընտրվում են բաց մրցույթով, որն իրականացնում է Բարեխղճության ազգային խորհուրդը: Նրանց չեն կարող ազատվել զբաղեցրած պաշտոնից քաղաքական դրդապատճառներով՝ նախքան նրանց պաշտոնավարման ժամկետի լրանալը՝ բացառությամբ այն դեպքի, երբ հեղինակավոր ընկերության կողմից անցկացված արտաքին աուդիտի արդյունքում ստացվում է բացասական եզրակացություն:[66]

Տնօրինությունն իրականացնում է կոռուպցիոն հանցագործությունների հետաքննություն և դատական կարգով հետապնդում:

Գործակալության նպատակներն են բարեխղճության ապահովումը, ունեցվածքի մասին հայտարարագրերի, ունեցվածքի մասին տվյալների և տեղեկատվության, ինչպես նաև ժառանգության հարցերում տեղի ունեցած փոփոխությունների, պաշտոնեական պարտականությունների իրականացման ժամանակ ի հայտ եկած անհամադրելիությունների և հնարավոր այլ շահերի բախման դրսևորումների գնահատման ժամանակ կոռուպցիայի կանխարգելումը: Բարեխղճության ազգային գործակալության նպատակը վարչական միջոցներով կոռուպցիայի դեմ պայքարելն է:[67]

Բացի այդ, Գործակալությունը կիրառում է պաշտոնյաների ապօրինի հարստացման հետևանքով ձեռք բերած գույքը բռնագրավելու վարչական ընթացակարգեր:

---

[66] World Bank, 2015, “Asset disclosure and wealth assessment system in Romania: Lessons for Ukraine”,, http://www-wds.worldbank.org/external/default/WDSContentServer/WDSP/IB/2015/12/28/090224b083ff5b2c/1_0/Rendered/INDEX/Asset0disclosu00lessons0for0Ukraine.txt

[67] Տե՛ս Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում ծրագրին ուղղված թիվ 5324/22.03.2016 նամակ

Տնօրինությունն ունի 538 աշխատող՝ ներառյալ 135 դատախազներ։ Վերջինիս տարեկան բյուջեն 2011 թվականին կազմել է 22 միլիոն ԱՄՆ դոլար։

Գործակալություն տարեկան բյուջեն 2015 թվականին կազմել է 37,843,000 Ռումինական լեյ՝ մոտավորապես 6,885,000 ԱՄՆ դոլար ներկայիս փոխարժեքով։ Սա 2013թ. -ի համեմատությամբ զգալի աճ է. այդ ժամանակաշրջանի բյուջեն կազմել է 27,195,000 լեյ՝ մոտավորապես 6,885,000 ԱՄՆ դոլար ներկայիս փոխարժեքով։

Ներկայումս Գործակալությունն ունի 100 աշխատող, սակայն օրենքով նախատեսված է մինչև 200 աշխատող ունենալու հնարավորությունը։

2015թ.-ին Տնօրինությունը միջին և բարձր մակարդակի կոռուպցիայի մեղադրանք է առաջադրել 1250 անձի, ներառյալ դատական քննության է 1 վարչապետի, 5 նախարարների, 15 պատգամավորների/տեղակալների և 5 սենատորների գործեր։ Այն նախաձեռնել է մոտ կես միլիոն եվրո արժողությամբ գույքի բռնագրավման գործընթացներ, ինչը 2014թ. -ի համեմատությամբ 49 տոկոսի աճ է հանդիսանում։ Ներկայումս՝ վերջնական դատավճիռների արդյունքում 194,373,617 եվրոյի համարժեք գումար ենթակա է բռնագրավման։

Տնօրինության հանդեպ հանրության վստահության մակարդակը կազմում է 61,2 %, իսկ նրա վերջին հաջողությունը բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ հետապնդումներ ձեռնարկելու վերաբերյալ մասամբ պայմանավորված է նրա ներկայիս Գլխավոր Դատախազ Լաուրա Քոդրութա Կովեշիի անկախությամբ և նվիրվածությամբ (պաշտոնում նշանակվել է 2013 թ. -ի մարտին)։

Ի պատասխան վերջին հարցման, Գործակալությունը ապօրինի հարստացման գործերի հետ կապված իր վերջին բռնագրավումների հաջողությունների վերաբերյալ հայտնել է հետևյալը. *«2008թ-ից սկսած Բարեխղճության ազգային գործակալությունը հավաստել է եկամուտների և ձեռք բերված ունեցվածքի միջև եղած զգալի տարբերության վերաբերյալ 125 գործ։ Այսօրվա դրությամբ Դատարանը 15 գործով ընդունել է չհիմնավորված ունեցվածքի բռնագրավման որոշում։ Այսպիսով արդեն բռնագանձվել և պետական բյուջե է փոխանցվել մոտավորապես 3.000.000 եվրո, իսկ մոտավորապես 577.300 եվրո դեռ ենթակա է բռնագրավման»*[68]։

---

[68] Տե՛ս նույն տեղում

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը Աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17. Կոռուպցիայի մակարդակը Ռումինիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Աղյուսակ 17-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ վերջին տասնամյակում կոռուպցիայի նվազում առկա է:

2.6 Սերբիա

Սերբիայում Հակակոռուպցիոն գործակալությունը, (այսուհետ՝ Գործակալություն), հիմնադրվել է 2009թ.-ին և սկսել է գործել 2010թ. հունվարի 1-ից: Վերջինիս իրավական հիմքը հանդիսանում է «Հակակոռուպցիոն գործակալություն մասին» օրենքը, որն ընդունվել է 2008 թ.-ն:

Գործակալությունն ունի 9-ը անդամներից կազմված Խորհուրդ, որոնց ընտրում է Ազգային Ժողովը: Խորհուրդը նշանակում և ազատում է Գործակալության տնօրենին: Տնօրենը նշանակվում է հանրային մրցույթի արդյունքում՝ 5 տարի ժամկետով:

Գործառույթների շրջանակն ընդգրկում է կոռուպցիայի կանխարգելումը և համապատասխան քաղաքականությունների մշակումը:

2013թ.-ին բյուջեն կազմել է 185,595,000 սերբական դինար՝ մոտավորապես 1,690,000 ԱՄՆ դոլար ներկայիս փոխարժեքով: 2015թ-ին բյուջեն նվազել է մինչև 126,460,000 սերբական դինար: Հիմնական աշխատակազմը 2014թ. ին եղել է 76 աշխատակից: 2016թ-ի աշխատակազմի ծրագիրը նշում է 139 թիվը, որը, սակայն, ենթադրում է բյուջեի զգալի աճ:

Freedom House-ի 2015թ.-ի զեկույցի համաձայն Գործակալությունը *«2013թ-ի ունեցվածքի հայտարարագրերի առնչությամբ զանցանքների քննության 168 հարցում է ուղարկել, որից 142-ը վերաբերել են հայտարարագրերը ժամանակին չներկայացնելուն».*[69]

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որն արտահայտված է Աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 18. Կոռուպցիայի մակարդակը Սերբիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Աղյուսակ 18-ի վերլուծությունը վկայում է այն մասին, որ թեև կոռուպցիայի մակարդակը նվազել է վերջին տասնամյակի ընթացքում, սակայն այն հետևանք է նաև այլ գործոնների, քանի որ մարմնի ստեղծումից հետո առանձնապես կոռուպցիայի մակարդակի նվազում չի նկատվում: Հնարավոր պատճառներ կարող են հանդիսանալ այն հանգամանքները, որ վերջինս չի իրականացնում քննչական կամ կրթական գործառույթներ, այլ միայն՝ կանխարգելիչ:

2.7 Սլովենիա

Սլովենիայում գործում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, (այսուհետ՝ Հանձնաժողով), որը հիմնադրվել է 2004թ.-ին «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի համաձայն, և վերջինիս անկախությունը ավելի է ամրապնդվել, և

[69] Տե՛ս Freedom House, 2015, "Nations in Transit: Serbia" (Անցումային ժամանակի պետություններ. Սերբիա)

լիազորությունները՝ ավելի ընդլայնվել 2010թ.-ին՝ «Բարեխղճության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով:

Հանձնաժողովն ունի Գլխավոր Հանձնակատար և Հանձնակատարի երկու տեղակալ, որոնց նշանակում է Սլովենիայի Հանրապետության Նախագահը՝ բաց մրցութային ընթացակարգով հատուկ ընտրական խորհրդի կողմից առաջադրվելուց հետո, որը կազմված է Կառավարության, Ազգային Ժողովի, հասարակական կազմակերպությունների, Անկախ դատական խորհրդի և Պաշտոնյաների անկախ խորհրդի ներկայացուցիչներից: Թեկնածուները պետք է բավարարեն բարձր մասնագիտական և բարեխղճության չափանիշներին, անցնեն հարցազրույցի և ստուգման փուլերը, որոնք իրականացվում են վերոնշյալ ընտրական խորհրդի կողմից:

Գլխավոր Հանձնակատարի պաշտոնավարման ժամկետը վեց տարի է, իսկ տեղակալներինը՝ հինգ տարի: Նրանք կարող են պաշտոնավարել երկու ժամկետով: Նրանց մանդատի ժամկետը լրանալուց առաջ նրանց կարող է պաշտոնից ազատել միայն Նախագահը՝ իր սեփական նախաձեռնությամբ կամ Խորհրդարանի միջնորդությամբ, եթե նրանք գործել են Սահմանադրության կամ օրենքի խախտմամբ[70]:

Հանձնաժողովն ունի 2 բաժին՝ Քննչական և վերահսկողության բյուրո և Հանրային կանխարգելման ու բարեխղճության կենտրոն:

Քննչական և վերահսկողության բյուրոն ունի հետևյալ գործառույթները.

- Կոռուպցիոն, շահերի բախման և անօրինական լոբբիինգի մեղադրանքներով վարչական հետաքննությունների իրականացում,
- Հաղորդում տվող անձանց պաշտպանություն,
- Գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների բարձրաստիճան պետական պաշտոնյաների ֆինանսական կարգավիճակի մոնիթորինգի իրականացում գույքի հայտարարագրման համակարգի միջոցով,
- Լոբբիստների կենտրոնական ռեգիստրի ապահովում:

Հանրային կանխարգելման ու բարեխղճության կենտրոնի գործառույթներն են.

- Ազգային հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի իրականացման ընդունում և համակարգում,

[70] Տե՛ս https://www.kpk-rs.si/en/the-commission,

- Հանրային ինստիտուտներին բարեխղճության ծրագրեր նախագծելու օժանդակության տրամադրում (կոռուպցիոն ռիսկերը հատկորոշելու և սահմանափակելու մեթոդոլոգիաներ) և դրանց իրականացման մոնիթորինգ,
- Կոռուպցիայի կանխարգելման տարաբնույթ միջոցառումների նախագծում և իրականացում (իրազեկության բարձրացում, ուսուցում, կրթություն)։

Եթե անձը ժամանակին չի ներկայացնում ունեցվածքի և եկամուտների հայտարարագիրը, ապա Հանձնաժողովը կապվում է նրանց հետ և համապատասխան տեղեկատվությունը տրամադրելու համար լրացուցիչ 15-30 օր ժամանակ տրամադրում։ Եթե նրանք այդ ժամանակահատվածում ևս հայտարարագիր չեն տրամադրում, ապա յուրաքանչյուր հաջորդ ամիս պահվում է նրանց աշխատավարձի 10%-ը և այդպես մինչև հայտարարագրի տրամադրումը։ Գործատուն օրենքով սահմանված կարգով պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ավտոմատ կարգով նրանց աշխատավարձից պահումներ իրականացնել։

Հանձանաժողովի բյուջեն ամեն տարի որոշում է Խորհրդարանը, իսկ Հանձանժողովն ազատ է իր բյուջեի տնօրինման, ֆինանսական և մարդկային ռեսուրսների կազմակերպման, ինչպես նաև՝ առաջնահերթությունների որոշման հարցերում։ Սակայն բյուջեի սղության պատճառով Հանձնաժողովի աշխատակազմի թիվը չի համապատասխանում նրա գործառույթների ծավալին, քանի որ աշխատողների թվի պակասություն է առաջանում. 2012թ. -ին բյուջեն 2 միլիոն եվրոյից ցածր էր, ինչը հնարավորություն էր ընձեռում Հանձնաժողովին ընդամենը 40 աշխատակից ունենալ, իսկ 2014թ.-ին բյուջեն համարժեք էր 2,52 միլիոն ԱՄՆ դոլարի, և Հանձնաժողովն ուներ ընդամենը 39 աշխատակից սղության պատճառով[71]։ Սակայն այս տվյալներն ավելի վաղ տարիների հետ համեմատությամբ համեմատած բարձր են, քանի որ, օրինակ, 2009թ. -ին բյուջեն կազմել է ընդամենը 1 միլիոն եվրո։

Հանձնաժողովը, կազմավորումից ի վեր, բազմիցս ենթարկվել է քաղաքական գործիչների քննադատմանը։ Վերջիններս ցանկանում էին վերացնել այն, նվազեցնել նրա լիազորությունները և բյուջեն, ինչպես նաև դադարեցնել պետական այլ մարմինների հետ նրա համագործակցությունը։ Եղել են ժամանակահատվածներ, երբ Հանձնաժողովը

[71] Տե՛ս https://www.acauthorities.org/country/si,

ստիպված է եղել կասեցնել իր աշխատանքը: Այն փաստը, որ Հանձնաժողովը դիմացել է և ի վերջո՝ ավելի հզորացել, պայմանավորված է նրա առաջին Հանձնակատար Դրագո Կոսի նվիրվածությամբ, ով պայքարել է Հանձնաժողովի անկախությունը և բարի համբավը պահպանելու համար:

Հանձնաժողովը բարձր հնչեղություն ունեցող հետաքննություններ է նախաձեռնել և այս առումով առավել ակտիվ է եղել 2012 և 2013թթ.-ներին: Օրինակ, 2013թ. -ին նախկին վարչապետը ձերբակալվել է 2006թ. -ին ստացած կաշառքի համար: Բացի այդ, 2013թ. -ին Հանձնաժողովի իրականացրած հետաքննության արդյունքում առաջատար քաղաքական կուսակցության առաջնորդը ստիպված է եղել հրաժարական տալ:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը Աղյուսակ 19-ում.

Աղյուսակ 19. Կոռուպցիայի մակարդակը Սլովենիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Վերջինիս վերլուծությունից պարզ է դառնում, որ Սլովենիայում մարմնի լիազորությունները ամրապնդելուց հետո կոռուպցիայի մակարդակի էական տարբերություններ չկան: Հավանական պատճառ կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ մարմինը նախ ենթարկվել է ճնշումների, ստիպված է եղել նույնիսկ կասեցնել իր գործունեությունը, բացի այդ այն չի կարողացել իրականացնել իր առջև ծառացած խնդիրները բյուջեի սղության և աշխատակազմի պակասության պատճառով:

2.8 Չեխիայի Հանրապետություն

Չեխիայում Կոռուպցիայի և ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարի բաժինը, (այսուհետ՝ Բաժին), ստեղծվել է 2002թ.-ին Ներքին գործերի նախարարության կազմում:

Քանի որ այն ստեղծվել է Ներքին գործերի նախարարության կազմում, այլ ոչ թե որպես անկախ մարմին, նրա գործառույթները օրենքով չեն սահմանվել:

Բաժնի ղեկավարին նշանակում և ազատում է Չեխիայի ոստիկանական ուժերի պետը (ոստիկանապետը):

Կոռուպցիոն և ֆինանսական հանցագործությունների հետաքննության բաժինը կազմված է երկու ենթաբաժիններից. Կոռուպցիայի դեմ պայքարի և ԵՄ շահերի պաշտպանության ենթաբաժին և Ծանր տնտեսական հանցագործությունների ենթաբաժին:

Բաժինը առանձին բյուջե չունի, քանի որ գործում է Ներքին գործերի նախարարության կազմում և ֆինանսավորվում վերջինիս բյուջեից:

Աշխատակազմը բաղկացած է 334 անձից:

ԵՄ Հակակոռուպցիոն զեկույցը հակիրճ անդրադարձել է Բաժնին: Նշված է, որ 2011թ.-ին առաջադրվել է 781 մեղադրանք, 2010թ.-ին՝ 697 և 2009թ.-ին՝ 688[72], ավելի թարմ տեղեկատվություն չկա, քանի որ բաժինն առանձին կայքէջ չունի:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը Աղյուսակ 20-ում.

Աղյուսակ 20. Կոռուպցիայի մակարդակը Չեխիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



[72] Տե՛ս European Commission, COM (2014) 38 final, “Annex Czech Republic to the EU Anti-Corruption Report”, p2

Աղյուսակ 20-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ վերջին տասնամյակի ընթացքում թեև առկա է կոռուպցիայի մակարդակի նվազում, սակայն տասնամյակը կտրվածքով այդքան էլ մեծ չէ: Կրկին հնարավոր պատճառ կարող է հանդիսանալ այն գործոնը, որ մարմինը հակակոռուպցիոն անկախ մարմին չէ, այլ՝ Ներքին գործերի նախախարության մի բաժին, որը չի իրականացնում հակակոռուպցիոն կրթական կամ կանխարգելիչ գործառույթներ:

2.9 Հունգարիա

Հունգարիայում Իրավապահ մարմինների պաշտպանական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ստեղծվել է 1995թ.-ին: Բաժնի ղեկավարին նշանակում և ազատում է Ներքին գործերի նախարարը:

Ծառայությունն իրականացնում է կոռուպցիոն իրավախախտումների նախնական վերլուծություն և բացահայտում՝ հիմնականում կենտրոնանալով իրավապահ մարմինների և նրանց հետ առնչություն ունեցող նախարարությունների վրա: Հնարավոր իրավախախտման վերաբերյալ բավարար ապացույցներ հավաքելուց հետո Ծառայությունն այդ տեղեկատվությունը տրամադրում է Դատախազությանը:

Այն առանձին բյուջե չունի, գործում է Ներքին գործերի նախարարության կազմում: Աշխատակազմը կազմված է 290 անդամից:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացվում է Աղյուսակ 21-ում :

Աղյուսակ 21. Կոռուպցիայի մակարդակը Հունգարիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Աղյուսակ 21-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ Հունգարիայում վերջին տասնամյակում կոռուպցիայի մակարդակը ոչ միայն չի նվազել, այլ նաև՝ աճել է: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Ծառայությունը չունի առանձին բյուջե, իր կարգավիճակով անկախ չէ, այլ՝ գտնվում է Ներքին գործերի նախարարության կազմում, չի իրականացնում հակակոռուպցիոն կրթության կամ կանխարգելիչ գործառույթներ, կոռուպցիայի մակարդակի ավելացումը տրամաբանական է դառնում:

2.10 Մակեդոնիա

Մակեդոնիայում Կոռուպցիայի կանխարգելման պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ստեղծվել է դեռևս 2002թ.-ին Խորհրդարանի կողմից, իսկ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքն ընդունվել է 2002թ.-ին

Հանձնաժողովի 7 անդամներին նշանակում և ազատում է Խորհրդարանը, պաշտոնավարման ժամկետը 5 տարի է: Անդամներն իրենց միջից ընտրում են Նախագահին մեկ տարվա ժամկետով:

Հանձնաժողովն օժտված է կանխարգելիչ, քննչական և քաղաքականությունների մշակման գործառույթներով, մասնավորապես՝ այն պատասխանատու է հակակոռուպցիոն ռազմավարության մշակման, ունեցվածքի հայտարագրերի հավաքագրման և ստուգման, ինչպես նաև՝ շահերի բախումների հետաքննության համար:

Տարեկան բյուջեն կազմում է 350,000 ԱՄՆ դոլար: Հանձնաժողովի անդամներին օժանդակում և սպասարկում է 16 աշխատակիցներից կազմված քարտուղարությունը:

Վերջին 5 տարիների ընթացքում Հանձնաժողովը նախաձեռնել է ունեցվածքի հայտարարագիր չներկայացնելու և շահերի բախման մասին չտեղեկացնելու 700 գործ: Այն նաև հետաքննել է պոտենցիալ շահերի բախման 680 դեպք:

Սակայն Հանձնաժողովի գործունեությունը քննադատվում է պասիվության և բարձր մակարդակի կոռուպցիոն դեպքերին հետամուտ չլինելու համար: Հանձնաժողովի սեփական ռեսուրսները նույնպես սահմանափակ են: 2014 թվականին այն ուներ ընդամենը 2 անդամ, ովքեր զբաղված էին ավելի քան 1000 ունեցվածքի հայտարարագրերի ուսումնասիրությամբ:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է Աղյուսակ 22-ում:

Աղյուսակ 22. Կոռուպցիայի մակարդակը Մակեդոնիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Աղյուսակ 22-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակում նշմարվում է կոռուպցիայի զգալի նվազում՝ 105-րդ հորիզոնականից մինչև 66-րդ: Սակայն, ընդհանուր առմամբ, կոռուպցիայի մակարդակը շարունակում է մնալ բարձր: Վերոնշյալի համար պատճառ կարող է հանդիսանալ աշխատակազմի սղությունը. վերջին հասանելի տվյալներով Հանձնաժողովն ունեցել է ընդամենը 2 անդամ: Բացի այդ, Հանձնաժողովը պետք է չսահմանափակվի միայն ցածր մակարդակի կոռուպցիայի դեմ պայքարելով: Սա էլ հաջորդ հանգամանքն է, որ բացատրում է կոռուպցիայի նման բարձր մակարդակը երկրում:

2.11 Կոսովո

Կոսովոյում Հակակոռուպցիոն գործակալությունը, (այսուհետ՝ Գործակալություն) հիմնադրվել է 2006թ. -ին և սկսել է գործել 2007թ.-ին: Ներկայումս, այն գործում է 2010թ. -ի «Հակակոռուպցիոն գործակալության մասին» օրենքի համաձայն:

Տնօրենին նշանակում է Կոսովոյի Վեհաժողովը բաց մրցույթի միջոցով: Պաշտոնավարման ժամկետը 5 տարի է՝ ևս մեկ ժամկետ ընտրվելու իրավունքով:

Գործակալությունը հաշվետու է Վեհաժողովին և Իրավական ու դատական Հանձնաժողովին: Հաշվետվությունները ներկայացվում են տարին երկու անգամ:

Գործակալությունն ունի երեք բաժին՝ Քննչական վարչություն բաժին, Կոռուպցիայի կանխարգելման վարչություն և Կառավարման վարչություն: Օրենքի համաձայն Գործակալությունն իրավունք ունի նաև կոռուպցիայի կասկածանքով գործերի հետաքննություն հարուցել, սակայն միայն այն գործերով, որոնք հետաքննվում են այլ հետաքննչական մարմինների կողմից:

Գործակալությունն ունի 40 աշխատակից: 2014թ. -ի բյուջեն կազմել է 485,000 եվրո, ինչը պակաս է 2010 թ. -ի բյուջեից, որը կազմել է 500,000 եվրո:

Ընդհանուր առմամբ Կոսովոյում, ինչպես և մի շարք այլ բալկանյան երկրներում, առկա է քաղաքական կոռուպցիայի բավականին բարձր մակարդակ: Վերջին տարիներին այստեղ խոշոր կոռուպցիոն գործերի հաջողված քրեական հետապնդման դեպքեր չեն գրանցվել: Դիտորդները նշում են, որ Կոսովոյում առկա խնդիրներից մեկը կոռուպցիայի դեմ պայքարում և դրա կանխարգելման գործում առկա ինստիտուցիոնալ համընկնումներն են: Օրինակ, Գործակալությունից բացի, Կոսովոյում գործում է Նախագահին կից Հակակոռուպցիոն խորհուրդը, Հատուկ դատախազության կազմում գործող կոռուպցիայի դեմ պայքարի խումբը, ինչպես նաև Կոռուպցիոն գործերը համակարգող դատախազների ցանցը և Կոսովոյում ԵՄ Օրենքի գերակայության առաքելությունը:[73]

2.12 Մոնտենեգրո

Մոնտենեգրոյում գործում էին երկու հիմնական հակակոռուպցիոն մարմիններ՝ Հակակոռուպցիոն նախաձեռնությունների տնօրինություն, որը հիմնվել է 2001թ. -ին և Շահերի բախման կանխարգելման Հանձնաժողով: Սակայն այժմ դրանց փոխարինել է նորաստեղծ Կոռուպցիայի կանխարգելման գործակալությունը, (այսուհետ՝ Գործակալություն):

Գործակալությունն ունի 5 անդամներից բաղկացած խորհուրդ և տնօրեն: Խորհրդի անդամներին նշանակում է Խորհրդարանը՝ հիմնվելով անկախ հանձնաժողովի

[73] Տե՛ս "National Integrity System Assessment Kosovo", " 2015, Kosova Democratic Institute & Transparency International Kosova «Կոսովոյի բարեվարքության ազգային համակարգի գնահատում» 2015, Կոսովոյի ժողովրդավարական ինստիտուտ և Կոսովոյի Թրանսպարենսի Ինթերնեյշնլ

ներկայացրած առաջարկներին: Հանձնաժողովի անդամները ընտրվում են 4 տարվա ժամկետով և կարող են պաշտոնավարել ոչ ավելի քան երկու ժամկետ: Տնօրենին նշանակում է Խորհուրդը բաց մրցույթի ընթացակարգով: Տնօրենը նշանակվում է 5 տարվա ժամկետով և կարող է պաշտոնավարել ոչ ավելի քան 2 ժամկետ:

«Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքը նախատեսում է, որ Գործակալության բյուջեն չպետք է պետական բյուջեի 0.2%-ից պակաս լինի:

2016թ.-ի սկզբի տվյալներով Գործակալություն աշխատակազմը դեռ հավաքագրման ընթացքում է: Դեռ պարզ չէ, թե այն քանի աշխատակից կունենա: 23 աշխատակից տեղափոխվել են նախկին երկու կազմակերպություններից: Նախատեսվում է ունենալ ընդհանուր առմամբ 55 աշխատակից:

Չնայած այն հանգամանքին, որ գործակալությունը ստեղծվել է ի պատասխան երկրում կոռուպցիայի դեմ պայքարի մակարդակի վերաբերյալ դժգոհությունների, այնուամենայնիվ, արդեն քննադատություններ են հնչել նոր գործակալության ձևավորման գործընթացի վերաբերյալ, այդ թվում՝ նաև Ոստիկանության նախկին պետին Գործակալության առաջին տնօրենի պաշտոնում նշանակելու առնչությամբ[74]:

Ըստ Թրանսպարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է Աղյուսակ 23-ում:

Աղյուսակ 23. Կոռուպցիայի մակարդակը Մոնտենեգրոյում ըստ Թրանսպարենսի



[74] Տե՛ս Jovana Marovic & Stevo Muk, "Happy New Agency! Establishment of the Agency for Prevention of Corruption in Montenegro", Institut Alternativa, January 2016 Յովանա Մարկովիչ և Ստևո Մուկ, Շնորհավոր նոր Գործակալություն:Կոռուպցիայի կանխարգելման հիմնումը Մոնտենեգրոյում»:

Ինթերնեշնլի

Ինչպես երևում է Աղյուսակ 23-ի վերլուծությունից, կոռուպցիայի մակարդակը, չենթարկվելով որևէ էական տատանումների, վերջին տասնամյակի ընթացքում շարունակում է մնալ բարձր: Դա բնական է, քանի որ երկրում չեն գործել հակակոռուպցիոն անկախ մարմիններ: Քանի որ նման մարմին ստեղվել է միայն վերջերս, դեռևս չկան ցուցանիշները վերջինիս արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարելուն գործում գնահատելու համար: Սակայն, հաշվի առնելով վերը նշված նոր գործակալության ձևավորման գործընթացի վերաբերյալ արդեն իսկ հնչած քննադատությունները, այդ թվում՝ նաև Ոստիկանության նախկին պետին Գործակալության առաջին տնօրենի պաշտոնում նշանակելու առնչությամբ, հավանականությունը փոքր է, որ կոռուպցիայի մակարդակը մոտ ապագայում կնվազի:

2.13 Ալբանիա

Ալբանիայում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական մարմիններն են Կոռուպցիայի դեմ պայքարի խումբը և Հայտարարագրերի և ունեցվածքի աուդիտի ու շահերի բախման գերագույն տեսչությունը, (այսուհետ՝ Տեսչություն), որը ստեղծվել է 2003թ.-ին: Ինչ վերաբերում է հետաքննություններին և քրեական հետապնդմանը, ապա այդ գործառույթն ամրագրվեց 2014թ.-ին՝ Ծանր հանցագործությունների քննման դատախազությանը կից Կոռուպցիայի և ունեցվածքի հետաքննությունների բաժնի ստեղծմամբ, (այսուհետ՝ Բաժին): Բաժնի նպատակը դատավորների, դատախազների և բարձրաստիճան պաշտոնյաների հետ կապված գործերի հետաքննություն է[75]:

Տեսչությունը հիմնվել է 2003 թ.-ի «Ընտրված և այլ պետական պաշտոնատար անձանց հայտարարագրերի, ունեցվածքի և ֆինանսական պարտավորությունների մասին» օրենքի համաձայն[76]:

---

[75] Տե՛ս http://rai-see.org/albania-anti-corruption-institutional-framework/,

[76] Ընտրված և այլ պետական պաշտոնատար անձանց հայտարարագրերի, ունեցվածքի և ֆինանսական պարտավորությունների մասին» 10.04. 2003 թ. -ի թիվ 9049 օրենք

Տեսչության ղեկավարը Գլխավոր Տեսուչն է, որին նշանակում է Ազգային ժողովը բաց ընտրությունների միջոցով: Պաշտոնավարման ժամկետը 5 տարի է: Վերջին տարիներին Տեսչության աշխատակազմն ընդգրկել է 35 մարդ: Բյուջեն կազմում է մոտավորապես 1 միլիոն ԱՄՆ դոլար:

Տեսչությունը պատասխանատու է ունեցվածքի հայտարարագրման համակարգի մոնիթորինգի, ինչպես նաև՝ շահերի բախման հետաքննությունների համար:

Հայտարարագրեր չներկայացնելը շատ հազվադեպ է, ինչը պայմանավորված է չներկայացման համար սահմանված խոշոր տուգանքների չափով: 2014թ.-ին ունեցվածքի հայտարարագրերի ստուգումների քանակը և հաճախականությունը ավելացել է: Սակայն համապատասխան ատյան ուղարկված շատ գործեր չեն հետապնդվում: Ի լրումն վերը նշված երկու հաստատությունների, կան նաև այլ աուդիտորական և հակակոռուպցիոն մարմիններ, այդ պատճառով առկա իրավիճակում առկա է բաժանվածության և իրավասությունների կրկնություն: Սակայն վերջին երկու տարիներին ընդհանուր առմամբ առկա է ամրապնդված քաղաքական կամք, որը մասամբ պայմանավորված է ԵՄ կողմից ճնշումով[77]:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է Աղյուսակ 24-ում:

Աղյուսակ 24. Կոռուպցիայի մակարդակը Ալբանիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի

Աղյուսակ 24-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ կոռուպցիայի մակարդակը



[77] Տե՛ս http://www.theguardian.com/global-development/2015/jun/26/albania-battle-against-corruption-organised-crime,

բավականին բարձր է Ալբանիայում, թեև 2008 և 2010 թթ.-ին համեմատած նվազել էր: Պատճառներն արդեն նշվեցին. համապատասխան ատյան ուղարկված շատ գործեր չեն հետապնդվում, աուդիտորական և հակակոռուպցիոն մարմինների բազմաթիվ լինելու պատճառով առկա է բաժանվածության և իրավասությունների կրկնություն: Կոռուպցիայի և ունեցվածքի հետաքննությունների բաժնի արդյունավետությունը հնարավոր չէ ստուգել, քանի որ ստեղվել է 2014թ.-ին միայն:

2.14 Սլովակիա

Սլովակիայում որպես հակակոռուպցիոն մարմին Կոռուպցիայի դեմ պայքարի Բյուրոն (այսուհետ՝ Բյուրո), ստեղծվել է 2004թ. -ին: Բյուրոն գործում է Քրեական օրենսգրքի և Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն:

Բյուրոն գործում է Ոստիկանության ուժերի ղեկավարության ներքո:

Բյուրոն հիմնականում հետաքննչական գործակալություն է, սակայն ունի նաև կանխարգելիչ լիազորություններ և կարող է ներկայացնել բարեփոխումների առաջարկություններ:

Ներկայումս ունի 115 մարդուց կազմված աշխատակազմ: Բյուրոն չունի անկախ բյուջե:

ԵՄ զեկույցում նշվում է Սլովակիայի ոստիկանության նկատմամբ վստահության ցածր մակարդակի և քաղաքական կուսակցություններից կախվածության մասին[78]:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է Աղյուակ 25-ում:

[78] Տե՛ս Եվրոպական հանձնաժողով, COM (2014) 38 վերջնական, “Annex Slovakia to the EU Anti-Corruption Report”, p6

Աղյուսակ 25. Կոռուպցիայի մակարդակը Սլովակիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Աղյուսակ 25-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ հակակոռուպցիոն մարմնի ստեղծումից ի վեր՝ վերջին տասնամյակում, կոռուպցիայի մակարդակը շարունակում է մնալ նույնը՝ 49-րդ հորիզոնականից 50-րդ հորիզոնական: Դա բացատրվում է, ինչպես վերը նշվեց մարմնի կողմից անկախ մարմին չլինելու, այլ՝ Ոստիկանությունում գտնվելու, առանձին բյուջե չունենանու, առանձին օրենքով չկարգավորվելու, Ոստիկանության՝ քաղաքական կուսակցություններից կախվածության, Ոստիկանության նկատմամբ վստահության ցածր մակարդակի և այլ գործոններով:

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

3.1 Բրազիլիա

Բրազիլիայում գործում է Գլխավոր աուդիտորի գրասենյակը, (ասուհետ՝ Գրասենյակ), որը ստեղծվել է 2003թ.-ի հունվարին նախ առանց օրենքի մակարդակի իրավական ակտով, այնուհետև՝ 2003թ.-ի մայիս ամսվանից, արդեն օրենքի մակարդակով:[79] 2006թ.-ին վերջինիս իրավասությունները և լիազորությունների շրջանակը ավելի է ամրապնդվել:[80]

Վերջինիս ղեկավարը երկրի նախարարն է, որը նշանակվում է հանրապետության Նախագահի կողմից: Վերջինս նաև իրավասու է ղեկավարին աշխատանքից ազատել: Գրասենյակի մշտական աշխատակազմը բաղկացած է 2280 հոգուց, որից 100-ը քննիչներ են, որոնք զբաղվում են աուդիտորական, վարչական և կարգապահական գործերով: Բյուջեն կազմում է 37.2 միլիոն դոլար:

Գրասենյակը դաշնային կառավարության գործակալություն է, որի նպատակն է Հանրապետության Նախագահին աջակցել գործադիր ճյուղի այն հարցերով, որոնք առնչվում են պետական ակտիվների պահպանությանը և ներքին հսկողության գործունեությանը, հանրային աուդիտներին, ուղղիչ և կարգապահական միջոցառումների միջոցով կառավարման թափանցիկության բարձրացմանը, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարին և ՄԻՊ-ի գործունեության կոորդինացմանը:

Այն նաև պատասխանատու է բոլոր այն գերատեսչությունների նկատմամբ տեխնիկապես հսկողության իրականացման համար, որոնք կազմում են ներքին հսկողության համակարգը, կարգապահական համակարգը և դաշնային գործադիր ճյուղի ՄԻՊ-ի բաժինը՝ երբ հարկն է ապահովելով նորմատիվ ուղեցույցներ:

Գրասենյակը՝ որպես հանրային մարմին, պատասխանատու է Բրազիլիայի կողմից վավերացված ընդդեմ կոռուպցիայի միջազգային կոնվենցիաների իրականացումը վերահսկելու համար:

---

[79] (CGU/PR) was created by Provisional Measure No.103, of January 1, 2003, which was converted into Law No.10683, of May 28, 2003.

[80] Decree No.5683, of January 24, 2006

2011 թվականի վիճակագրական տվյալներն են. 10.524 քննչական աուդիտի գործողություններ, 74 պետական պաշտոնյաների ակտիվների և ֆինանսական քննություններ և 12 ընթացակարգեր կապված իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության Դաշնային Հանրային Վարչության հետ հարաբերություններում: Բացի այդ, վերջինս վերահսկել է 1.788 ուսումնասիրություններ՝ իրականացված դաշնային նախարարությունների և գործակալությունների կողմից (որպես դաշնային գործադիր ճյուղի կարգապահական գործողությունների կենտրոնական մարմին):

Այս մարմինը հաճախ ցիտվում է, օրինակ՝ Global Integrity 2009-ի կողմից, որպես բավականին արդյունավետ գործակալություն, որը քաղաքական ներգործությունից բավականին անկախ է:

Գրասենյակը նաև իրականացնում է լայնածավալ գործունեություն հակակոռուպցիոն կրթության բնագավառում, օրինակ՝ 2012թ.-ի տվյալներով Բրազիլիայի 26 նահանգներում կազմակերպել է թվով 76 կրթական միջոցառումներ:[81]

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է Աղյուսակ 26-ում:

[81]http://www.iaaca.org/AntiCorruptionAuthorities/ByCountriesandRegions/B/Braziljigou/201202/t20120209_801166.shtml

Աղյուսակ 26. Կոռուպցիայի մակարդակը Բրազիլիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Աղյուսակի 26-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ թեև Բրազիլիայի հակակոռուպցիոն մարմինը, ինչպես վերը նշվեց, համարվում է արդյունավետ մարմիններից մեկը կոռուպցիայի դեմ պայքարում, սակայն Բրազիլիայում վերջին տասնամյակի ընթացքում կոռուպցիայի մակարդակը շարունակում է մնալ բարձր՝ վերջին տասնամյակի ընթացքում չենթարկվելով էական տատանումների:

3.2 Կանադա

Կանադայում գործում է Հանրային ծառայության հանձնաժողովը (այսուհետ՝ ՀԾՀ), որի ղեկավարը Ազգային Անվտանգության նախարարն է: Փոխնախարարը Կանադայի քաղաքացիական ծառայության ավագ ծառայող է և մշտական պատասխանատուն է ավելի քան 200 բաժինների համար: ՀԾՀ-ի մյուս մասնակիցները ընտրվում են բացառապես ընտրությունների միջոցով [82] : Հիմնական չափանիշներն են համապատասխան կրթությունը, բարձր որակավորումը, փորձառությունը և անհատական այլ հատկանիշներ[83]:

[82] Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Public_Service_of_Canada#Structure
[83] Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Public_Service_Modernization_Act

Հանձնաժողովի օրենսդրական հիմքը կազմում են հետևյալ իրավական փաստաթղթերը՝ «Հանրային ծառայության զբաղվածության» ակտը[84] (PSEA), որն ուժի մեջ է մտել 2005 թ. դեկտեմբերի 31-ին և որդեգրել է նոր մոտեցում, համաձայն որի հանրային սեկտորում պաշտոնի նշանակման համար էական է ոչ թե «կանոնների վրա հիմնված» լավագույն որակավորումը, այլ՝ արժեքները և 2003թ.-ի «Հանրային ծառայության արդիականացման» ակտը, որով կատարվում է մասնակիցների ընտրությունը:

Ի սկզբանե 1849 թվականին ՀԾՀ-ն հիմնադրվել է, որպեսզի պաշտպանի հանրային ծառայության նշանակումները քաղաքական միջամտությունից: 1918թ.-ից այս մարմնի էքսկլյուզիվ իրավասության է պատկանում վերը նշված նշանակումները իրականացնելը:[85]

Համաձայն «Հանրային ծառայության զբաղվածության» ակտի՝ ՀԾՀ-ն շարունակում է ունենալ օրենքով սահմանված լիազորություններ հանրային ծառայությունում անհատներին աշխատանքի նշանակման հարցում: ՀԾՀ-ի մանդատն է զերծ պահել հանրային ծառայության նշանակումները քաղաքական ազդեցությունից և ապահովել մասնագիտական, անկուսակցական հանրային ծառայություն՝ կանխարգելելով կոռուպցիոն դրսևորումները:

Օրենսդրական ակտը թույլ է տալիս ՀԾՀ-ին պատվիրակել այս լիազորությունը ղեկավարների տեղակալներին, ովքեր, իրենց հերթին, կարող են պատվիրակել իրենց կառավարիչներին: Ղեկավարների տեղակալները հաշվետու են ՀԾՀ-ին իրենց կողմից իրականացված նշանակումների համար: Իր հերթին, ՀԾՀ-ն հաշվետու է խորհրդարանին նշանակումների ընդհանուր համակարգի բարեխղճության համար:

Հիմնական հաշվարկներով 2015-2016թ. ՀԾՀ-ն լիազորված է ծախսել 83.6 մլն դոլար: Բացի այդ, այն իրավունք է ունեցել վերականգնել մինչև 14 մլն դոլարի ծախսեր՝ դաշնային կազմակերպություններին մատուցված խորհրդատվության և գնահատման ապրանքների և ծառայությունների դիմաց[86]:

Հանրային ծառայության արժեքների և էթիկայի գրասենյակը փորձաքննության և առաջնորդության կենտրոն է, որը պատասխանատու է Կանադայի հանրային

---

[84] Տե՛ս Public Service Employment Act (S.C. 2003, c. 22, ss. 12, 13), available at: http://lois laws.justice.gc.ca/eng/acts/P-33.01/,

[85] Տե՛ս The 100 years of the Public Service Commission of Canada 1908-2008, Public Service Commission of Canada July 2008, էջ 4

[86] Տե՛ս http://www.psc-cfp.gc.ca/spch-disc/2015/2015-04-28-fra.htm

ծառայության շրջանակներում արժեքների վրա հիմնված կառավարման հետագա ընթացքի համար:

Այս մարմինը վերահսկողություն է իրականացնում Կանադայի կառավարության արժեքների և էթիկայի նորմերի հետ կապված քաղաքականության և օրենսդրության նկատմամբ, ներառյալ միտված է կանխել կոռուպցիան հանրային ոլորտում, այդ թվում՝ Հանրային ծառայողների արժեքների և էթիկայի կանոնակարգի նկատմամբ և Հանրային ծառայողների բացահայտման պաշտպանության ակտի նկատմամբ:

Մարմինը նաև նպաստում է հանրային ծառայողների ուսուցմանը, որն առաջարկվում է Կանադայի հանրային ծառայության դպրոցի կողմից, ինչպես նաև ապահովում է հակակոռուպցիոն միջոցառումների լայն իրազեկվածությունը[87]:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է Աղյուսակ 27-ում:

Աղյուսակ 27. Կոռուպցիայի մակարդակը Կանադայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 27-ում պատկերված Կանադայի հակակոռուպցիոն մակարդակի ուսումնասիրությունից, պարզ է դառնում որ Կանադան գտնվում է լավագույն հակակոռուպցիոն տասնյակում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Կանադայի հակակոռուպցիոն մարմինը ստեղծվել է դեռևս 1800-ական թվականներին: Իսկ

---

[87] Տե՛ս *""Best Practices to Fight Corruption" Canada: Selected Programs - The Government of Canada"* (PDF). unodc.org. UNODC.էջ 2

2005թ.-ի օրենսդրական բարեփոխումներից հետո կոռուպցիայի մակարդակը էլ ավելի է նվազել՝ 14-ից դառնալով 9:

3.3 Արգենտինա

Արգենտինայում գործում է Կոռուպցիայի դեմ պայքարի գրասենյակը, (այսուհետ՝ Գրասենյակ)[88] որը ստեղծվել է 1999թ.-ին օրենքի հիման վրա[89] և վերակազմավորվել է 2005թ.-ին և 2007թ.-ին:

Այն անկախ մարմին է, որը գտնվում է Արդարադատության նախարարությանը կից՝ Հանրային կառավարման փաստաբանի (Public Administration Attorney)–ի հսկողության տակ, վերջինս էլ զբաղվում է երկու բաժանմունքների ղեկավարմամբ: Գրասենյակի ներկայացուցիչների շարքում են ինչպես իրավաբանները, այնպես էլ տնտեսագետները, սոցիոլոգները, ինժեներները և այլ մասնագիտության տեր ներկայացուցիչներ:

Գրասենյակը բաժանված է երկու անկախ, բայց իրար լրացնող բաժանմունքների՝ Հետաքննության և Թափանցիկության քաղաքականության (The Transparency Policies):

Հետաքննությամբ զբաղվող բաժանմունքի հիմնական գործառույթներն են

- Պարզել առկա են կոռուպցիոն ռիսկեր թե ոչ, և արդյո՞ք պետք է սկսել քննություն,
- Իրականացնել կոռուպցիայի մասին հաղորդումների քննություն:

Թափանցիկության քաղաքականության բաժանմունքը զբաղվում է թափանցիկության բարձրացման ապահովմամբ: 2001 թվականի տվյալների համաձայն Գրասենյակը ստացել է կոռուպցիայի մասին 1400 հաղորդում, որոնցից քննվել են 500-ը:

Գրասենյակի օրենսդրական հիմքը կազմում են հետևյալ փաստաթղթերը. Արգենտինայի քրեական օրենսգիրք (բաժին 258), Կոռուպցիայի դեմ պայքարի ներամերիկյան կոնվենցիա, Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կոնվենցիա, Տեռորիզմի և Փողերի լվացման դեմ ներամերիկյան կոնվենցիա, ՄԱԿ–ի Բիզնես կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիա, ՄԱԿ–ի Փողերի լվացման դեմ պայքարի կոնվենցիա:

---

[88] Տե՛ս https://www.ignet.gov/sites/default/files/files/f01c05.pdf

[89] Law 25233 on December 14th, 1999,

Կենտրոնն ունի և կանխող, և պատժիչ գործառույթներ: Կենտրոնի հիմնական գործառույթներն են `

1. Ստանալ հաղորդումներ կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ, ձեռնարկել միջոցներ ստացված հաղորդումների քննության իրականացման համար,
2. Ուսումնասիրել կառավարության կողմից դրամական միջոցներ ստացող կազմակերպությունների գործունեությունը, կոռուպցիոն դրսևորումներ նկատելու դեպքում զբաղվել դրանց արդյունավետ քննությամբ,
3. Կոռուպցիան կանխարգելող միջոցների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել կառավարչական մարմիններին
4. Կոռուպցիոն դրսևորումները կանխարգելու նպատակով մշակել զանազան ծրագրեր,
5. Ապահովել հանրային կառավարման ոլորտի թափանցիկությունը:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է Աղյուսակ 28-ում: Վերոնշյալ աղյուսակի վերլուծությունից պարզ է դառնում, որ նույնիսկ 2007թ.-ի փոփոխություններից հետո երկրում շարունակում է մնալ կոռուպցիայի բարձր մակարդակ: Հարկ է նշել, որ հնարավոր պատճառներ կարող են հանդիսանալ այն գործոնները, որ նախ Արգենտինայի հակակոռուպցիոն մարմինը ինստիտուցիոնալապես անկախ չէ, այլ գտնվում է Արդարադատության նախարարությանը կից: Բացի այդ, այն չի զբաղվում հակակոռուպցիոն կրթական գործունեությամբ:

Աղյուսակ 28. Կոռուպցիայի մակարդակը Արգենտինայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



3.4 Պերու[90]

Պերուում գործում է Հակակոռուպցիոն բարձր մակարդակի հանձնաժողովը [91], (այսուհետ՝ Հանձնաժողով), որը ձևավորվել է 2010 թվականին[92] և սկսել գործունեությունը 2013թ. հունվարի N29976 օրենքով: Հանձնաժողովը միտված է Պերուում կոռուպցիան կանխելուն և դրա դեմ պայքարելուն և այդ նպատակով համակարգում է գործողություններ և առաջարկում է միջին և երկարաժամկետ ռազմավարություններ:

Հանձնաժողովը ղեկավարվում է Նախարարների խորհրդի նախագահի կողմից 2 տարի ժամկետով, իսկ անդամները Պերուի կառավարության 3 տարբեր ճյուղերի (գործադիր, դատական և օրենսդիր) պաշտոնյաներ են, ինչպես նաև բարձրագույն պաշտոնյաներ Արդարադատության և Մարդու իրավունքների նախարարությունից, Սահմանադրական դատարանից, Ազգային դատական խորհրդից, Դատախազությունից, Տեղական ինքնակառավարման Ազգային ժողովից, Պերուի մունիցիպալ ասոցիացիայից, Ազգային համաձայնության ֆորումից, Հանրապետության գլխավոր աուդիտորը, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, Պետական գնումների մարմիններից, Ռեկտորների ազգային ժողովից, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից (Հանրային էթիկայի ազգային խորհուրդ, Պրոէթիկա, Պերուի աշխատողների միություն, կաթոլիկ և ավետարանչական եկեղեցիներ) և ձեռնարկատիրության ոլորտից (մասնավորապես՝ Անձնական բիզնես հիմնարկների ազգային կոնֆեդերացիա, Կոնֆիեպ, Արդյունաբերության ազգային հանրույթ):

Հանձնաժողովի մշտական անձնակազմը բաղկացած է 11 անդամից: Հանձնաժողովի անդամները անձեռնմխելի են և պաշտպանված են ցանկացած բացասական հետևանքներից մինչև դրանց բացահայտումը:

Հանձնաժողովը ներդնում է ջանքեր կոռուպցիայի դեմ պայքարում և իրականացնում է հսկողություն մյուս գործակալությունների նկատմամբ: Հիմնական

---

[90] Տե՛ս https://www.acauthorities.org/country/pe
[91] Տե՛ս La Comisión de Alto Nivel Anticorrupción CAN Anticorrupción
[92] Տե՛ս Supreme Decree 016-2010-PCM

գործառույթներն են կոռուպցիայի որոնումը, կանխումը, նորամուծությունների ներդնումը և կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության մշակումը:

Տարեկան բյուջեն կազմում է 1,149,984 soles (սոլս), որը մոտավորապես հավասար է 426,000 ամերիկյան դոլարի ($):

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է Աղյուսակ 29-ում:

Աղյուսակ 29. Կոռուպցիայի մակարդակը Պերուում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Աղյուսակ 29-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին 2 տարիներին՝ Հանձնաժողովի կողմից աշխատանքները սկսելուց հետո՝ 2013թ.ից, մինչև՝ 2015թ., կոռուպցիայի մակարդակը Պերուում ավելացել է: Կրկին տրամաբանական է, քանի որ մարմինն ինստիտուցիոնալ առումով անկախ չէ, ղեկավարվում է Նախարարների խորհրդի Նախագահի կողմից, չի իրականացնում կրթական կամ քննչական գործառույթներ, այլ միայն՝ կանխարգելիչ:

3.5 Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ամերիկայի միացյալ նահանգները հակակոռուպցիոն ջանքերի բնագավառում առաջնորդ են այն ժամանակից ի վեր, երբ առաջին կոռուպցիայի մասին օրենքն ընդունեցին դեռևս 1977 թվականին[93]:

[93] Տե՛ս Foreign Corrupt Practices Act (FCPA), in 1977.

Սակայն ԱՄՆ-ում առկա չէ կոնկրետ առանձնացված մարմին կոռուպցիայի դեմ պայքարի համար: ԱՄՆ-ում գործում է բազմաթիվ հակակոռուպցիոն գործակալություններից մոդելը, որոնք միմյանց լրացնում են: ԱՄՆ Կառավարության էթիկայի գրասենյակը, (այսուհետ՝ Գրասենյակ), (The United States Office of Government Ethics) իր կանխարգելիչ գործառույթներով լրացնում է ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի քննչական և դատախազական լիազորությունները կոռուպցիան նվազեցնելու գործում, որն իրականացվում է վերջինիս կողմից ղեկավարվող ԱՄՆ Հետաքննության դաշնային բյուրոյի կողմից[94]:

Գրասենյակի իրավական հիմքը 1978թ.-ի «Էթիկան Կառավարությունում» ակտն է իր կանոնագրքերով, որով սահմանում են շահերի բախումների լայնածավալ շրջանակ: 1988թ. օրենքով[95] այն ձեռք է բերում ինքավար գրասենյակի կարգավիճակ:

Գրասենյակը համագործակցում է գործադիր իշխանությունում մի շարք գործակալություններից հետ, ներառյալ՝ Կառավարման և Բյուջեի գրասենյակը, Կառավարության Հաշվապահական գրասենյակը և Արդարադատության դեպարտամենտում ոստիկանական գործակալությունների հետ: Վերջինիս մանդատն է շահերի բախման իրավիճակների հայտնաբերումը, խախտումների համար պատիժների սահմանումը, հանրային սեկտորում աշխատանքի վերաբերյալ օրենքների և այլ իրավական ակտերի մասին ինֆորմացիայի տարածումը և էթիկայի բարձր ստանդարտների կիրառումը:

Գրասենյակը հաշվետու է Նախագահին և Կոնգրեսին: Գրասենյակը ուժեղացնում է հասարակության վստահությունը առ այն, որ պետական բիզնեսը իրականացվում է անկաշառությամբ և բարեխղճությամբ: Սակայն Գրասենյակը, ի տարբերություն շատ այլ երկրների հակակոռուպցիոն գրասենյակների, օժտված չէ քննչական գործառույթներով, սակայն, ինչպես նշվեց, համապատասխան ինֆորմացիան տրամադրում է Արդարադատության դեպարտամենտին քննչական գործառույթներ իրականացնելու համար[96]:

---

[94] http://www.theifp.org/anti-fraud-resources/antiCorruptionAgencies.html

[95] 1988, Office of Government Ethics Reauthorization Act, in effect on October 1, 1989

[96] Anti-Corruption Commissions Panacea or Real Medicine to Fight Corruption? John R. Heilbrunn, 2004, World Bank Institute, available at http://siteresources.worldbank.org/WBI/Resources/wbi37234Heilbrunn.pdf

Պետական դեպարտամենտը և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը նվիրաբերում են տարեկան մոտ մեկ միլիարդ դոլար՝ հակակոռուպցիոն և լավ կառավարման ծրագրերի համար[97]: Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է Աղյուսակ 30-ում:

Աղյուսակ 30. Կոռուպցիայի մակարդակը ԱՄՆ-ում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Աղյուսակ 30-ի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ԱՄՆ-ում կոռուպցիայի մակարդակը բավականին ցածր է՝ նույնիսկ առանց հակակոռուպցիոն անկախ մարմին ունենալու: Սակայն վերջինս հետևանք է նաև մարդկանց բարձր իրավագիտակցության:

[97] Տե՛ս https://www.whitehouse.gov/the-press-office/2014/09/24/fact-sheet-us-global-anticorruption-agenda

4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՍԻԱՅՈՒՄ

4.1 Հոնգ Կոնգ

Հոնգ Կոնգում գործում է Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողով, (այսուհետ՝ Հանձնաժողով): Այն ստեղծվել է 1974 թվականին որպես անկախ բազմապրոֆիլ հաստատություն:

Հանձնաժողովի գործառույթների շրջանակն ընդգրկում է.

1. կոռուպցիոն բնույթի գործերով քրեական հետապնդման իրականացում (այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների կատարում),

2.կոռուպցիային նպաստող պատճառների վերացում՝ կոռուպցիային հակազդելու պրակտիկայի ներդրման միջոցով,

3. ազգաբնակչության շրջանում կրթական աշխատանքների իրականացում՝ կոռուպցիայի վնասակար ազդեցությունը պարզաբանելու և հասարակության իրավագիտակցությունը բարձրացնելու նպատակով:

Հանձնաժողովը գործում է «Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողովի մասին» օրենքի հիման վրա: Այդ փաստաթղթի համաձայն Հանձնաժողովը կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող մասնագիտացված հաստատություն է, որն անկախ է իրավապահ և պետական այլ մարմիններից: Հանձնաժողովի անկախությունը երաշխավորված է Հոնգ Կոնգի Հիմնական օրենքով, ըստ որի Հանձնաժողովն ուղղակիորեն հաշվետու է գործադիր իշխանության ղեկավարին: Բացի այդ, Հանձնաժողովն ունի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» և «Ընտրությունների մասին» (կոռուպցիոն և հակաօրինական գործունեության մասին) օրենքներով նախատեսված հատուկ գործառույթներ:

Հանձնաժողովի կառուցվածքն է. գրասենյակ, հանձնաժողովի նախագահ, օպերատիվ աշխատանքի դեպարտամենտ (քննում է կոռուպցիոն գործեր), կոռուպցիայի կանխարգելման դեպարտամենտ (ուսումնասիրում է պետական մարմինների ընթացակարգերն ու պրակտիկան կոռուպցիան կանխարգելելու և մասնավոր կազմակերպությունների հարցումների հիման վրա կոռուպցիայի կանխարգելման հանձնարարականներ նախապատրաստելու նպատակով), հանրային կապերի դեպարտամենտ (զբաղվում է հակակոռուպցիոն պրոպագանդայով), վկաների

պաշտպանության բաժին, արտաքին կապերի բաժին, ֆինանսական գործունեության քննության բաժին և համակարգչային փորձաքննության և հետազոտությունների բաժին:

Կոռուպցիայի կանխարգելման դեպարտամենտի աշխատակազմը բաղկացած է 65 աշխատակիցներից (իրավաբաններից, համակարգերի վերլուծաբաններից, ճարտարագետներից, տնտեսագետներից, ֆինանսիստներից և կառավարման համակարգերի փորձագետներից):

Հանրային կապերի դեպարտամենտն ունի նաև տարածքային մասնաճյուղեր: Վերջիններիս միջոցով կատարվում է կոռուպցիայի հասարակական ընկալման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, ինչպես նաև քարոզարշավների կազմակերպումը՝ ներկայացնելով կոռուպցիայի կանխարգելման կարևորությունը:

Դեպարտամենտը հակակոռուպցիոն բնույթի ներկայացումներ, ֆիլմեր է պատվիրում, հաղորդումներ պատրաստում: Բացի այդ, հակակոռուպցիոն ուսուցումներ է կազմակերպում դպրոցներում, հիվանդանոցներում, կրոնական կազմակերպություններում, տնտեսական ընկերություններում:

Հանձնաժողովի տարեկան բյուջեն կազմում է 85 միլիոն ԱՄՆ դոլար:

Հանձնաժողովի աշխատանքը դիտարկում են խորհրդատվական գործառույթներ ունեցող 4 անկախ կոմիտեներ, որոնց կազմի մեջ մտնում են տեղական համայնքի առաջնորդներ և հանրաճանաչ քաղաքացիներ, ովքեր նշանակվում են Հոնգ Կոնգի վարչապետի կողմից:

Այդ կոմիտեներն են.

- Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդատվական կոմիտե,
- Օպերատիվ գործունեության վերահսկման կոմիտե,
- Կոռուպցիայի կանխարգելման խորհրդատվական կոմիտե,
- Հանրության հետ կապերի քաղաքացիական կոմիտե:

Բացի այդ, Հանձնաժողովը պետական նշանակության ծրագրերի իրականացման ողջ ընթացքում կիրառում է կոռուպցիայի կանխարգելմանը միտված քաղաքականություն: Օրինակ, Հանձնաժողովը մասնակցել է Հոնգ Կոնգում նոր օդանավակայանի կառուցմանը: Օդանավակայանի կառուցման ծրագիրը ներառում էր նաև կամուրջների և երկաթգծերի, թունելի, արագընթաց ճանապարհների, բնակելի թաղամասի և այլ ենթակառուցվածքների կառուցում: Այդ հսկայական ծրագրի իրականացման ընթացքում հանձնաժողովը կիրառում էր կոռուպցիայի կանխարգելմանը միտված քաղաքականություն:

Հանձնաժողովը այդ աշխատանքը սկսել է դեռևս օրենսդրության մշակման փուլում, որպեսզի օրենքում կարողանար ամրագրել հակակոռուպցիոն կառուցակարգեր: Հանձնաժողովի աշխատակիցները սերտ գործնական կապեր էին հաստատել շինարարությանը մասնակցող բոլոր կազմակերպությունների ղեկավարների հետ, որպեսզի հնարավորություն ունենային իրենց կարծիքն արտահայտել և հանձնարարականներ տալ ծրագրի մշակման ու իրականացման բոլոր փուլերում:

Իր գործունեության իրականացման սկզբնական տարիներին Հանձնաժողովը հատուկ ուշադրություն էր դարձնում հասարակության շրջանում վստահության ամրապնդման, հեղինակության և աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներին: Պատահական չէ, որ Հանձնաժողովի առաջին գործերից էր կոռումպացված բարձրաստիճան ոստիկանի ձերբակալությունը, ով, մեղադրվելով կաշառք ստանալու համար, դիմել էր փախուստի: Հասարակությունը չէր հավատում, որ այդ անձը կարող է դատապարտվել, սակայն, Հանձնաժողովի ջանքերի շնորհիվ, այդ ոստիկանը մեկ տարվա ընթացքում վերադարձվեց Հոնգ Կոնգ, նրա հանդեպ հարուցվեց քրեական գործ, և դատական գործընթացի արդյունքում նա դատապարտվեց ազատազրկման: Իր գործունեության հաջորդ տարում Հանձնաժողովը բացահայտեց ոստիկանության աշխատողների կողմից ձևավորված կոռուպցիոն սինդիկատ: Այս առաջին հաջողությունները զգալիորեն բարձրացրեցին Հանձնաժողովի և ոստիկանության հեղինակությունը[98]:

Ստորև ներկայացված Աղյուսակ 31-ը, որը կազմված է Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների հիման վրա,[99] վկայում է, որ Հոնգ Կոնգում վերջին տասնամյակում կոռուպցիայի մակարդակը գտնվել է էականորեն ցածր մակարդակում՝ համեմատած այլ երկրների հետ, ինչը ապացուցում է հակակոռուպցիոն անկախ մարմնի, որն օժտված է բոլոր հակակոռուպցիոն գործառույթներով, արդյունավետությունը:

Աղյուսակ 31. Կոռուպցիայի մակարդակը Հոնգ Կոնգում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի

---

[98] Տե՛ս Հանձնաժողովի մասին առավել մանրամասն http://www.icac.org.hk, http://www.oecd.org/corruption/acn/39972100.pdf

[99] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview



4.2 Սինգապուր

Սինգապուրում գործում է Կոռուպցիոն գործունեության քննության բյուրոն, (այսուհետ՝ Բյուրո,) որը հիմնադրվել է 1952 թվականին՝ որպես կոռուպցիան կանխարգելող և դրա դեմ պայքարող անկախ մարմին: Այն ստեղծվել է Սինգապուրի ոստիկանության հակակոռուպցիոն բաժնի հիման վրա:

Բյուրոն գործում է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 241-րդ գլխի հիման վրա: Նրա գործառույթների մեջ մտնում է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությունը, ինչպես նաև առհասարակ կոռուպցիայի կանխարգելումը պետական և մասնավոր ոլորտներում:

Բյուրոյի քննչական ենթակայությունն ընգրկում է այն գործերը, որոնց վրա տարածվում է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքը: Այսպես, կաշառք տալու, ստանալու և վերջիններիս հետ փոխկապակցված գործերը քննում է Բյուրոն:

Կոռուպցիայի կանխարգելման շրջանակներում Բյուրոն ուսումնասիրում է պետական մարմինների աշխատանքային մեթոդները, որպեսզի հայտնաբերի վարչական համակարգի այն բացերը, որոնք կարող են նպաստել կոռուպցիայի և ոչ բարեխիղճ վարքագծի ձևավորմանը, որի արդյունքում հանձարարականներ է տալիս այդ մարմինների ղեկավարներին՝ թերությունները վերացնելու ուղղությամբ:

Բացի այդ, Բյուրոյի գործունեության բաղադրիչն է կազմում նաև կոռուպցիայի թաքնված ասպեկտների և նրանց հաղթահարման մեթոդների վերաբերյալ դասախոսությունների և սեմինարների անցկացումը հանրային ծառայողների համար,

մասնավորապես՝ նրանց համար, ովքեր փոխգործակցում են հասարակության հետ: Բյուրոն նաև ստուգում է հանրային ծառայողների ոչ բարեխիղճ աշխատանքի հետ կապված դեպքերը և դրանց մասին տեղեկացնում է համապատասխան պետական մարմինների ղեկավարներին՝ կարգապահական ներգործության միջոցներ կիրառելու համար:

Վերոնշյալ օրենքի համաձայն՝ Բյուրոն իրավասու է իրականացնել ձերբակալություն, խուզարկություն, հայտնաբերած իրերի առգրավում, քննչական և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, բանկային, այլ տեսակի հաշիվների, բանկային փաստաթղթերի և խցիկների ստուգումներ:

Բյուրոն նաև ներգրավված է հանրային ծառայության բարեփոխումների գործընթացում: Բյուրոյի նպատակն է հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության մեխանիզմների կատարելագործումը՝ առաջին հերթին գործունեության ինդիկատորների ներդրման հաշվին: Նպատակն է վերանայել ամբողջ քննչական գործընթացը ISO 9000 միջազգային չափանիշների պահանջներին համապատասխան:

Բյուրոն անմիջականորեն վերահսկվում է վարչապետի աշխատակազմի կողմից: Բյուրոյի տնօրենը հաշվետու է վարչապետին: Սինգապուրի նախագահը նշանակում է բյուրոյի տնօրենին, փոխտնօրենին, տնօրենի օգնականներին և հատուկ քննիչներին: Բյուրոյի աշխատակիցները նշանակվում են տնօրենի կողմից: Բյուրոյի աշխատակազմը կազմված է 71 անձանցից՝ 49 հետաքննիչներից և 22 վարչական աշխատակիցներից:

Բյուրոյի որդեգրած մոտեցման համաձայն՝ անհրաժեշտ է այնպիսի չափորոշիչների զուգակցումը, ինչպիսիք են՝ օրինականությունը, պատասխանատվության անխուսափելիությունը, որոնք անհրաժեշտ և բավարար պայման են կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար, եթե դրա հիմքում ընկած է ամուր քաղաքական կամքը[100]:

Ստորև ներկայացված Աղյուսակ 32-ը, որը կազմված է ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների [101], վկայում է, որ Սինգապուրում վերջին տասնամյակում կոռուպցիայի մակարդակը ևս

---

[100] Տե՛ս Բյուրոյի մասին առավել մանրամասն՝ http://app.cpib.gov.sg/cpib_new/user/default.aspx?pgID=21, http://www.oecd.org/corruption/acn/39972100.pdf

[101] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview

գտնվել է էականորեն ցածր մակարդակում՝ համեմատած այլ երկրների հետ, ինչը կրկին պայմանավորված է հակակոռուպցիոն անկախ մարմին ունենալու հանգամանքով, որն օժտված է բոլոր հակակոռուպցիոն գործառույթներով:

Աղյուսակ 32. Կոռուպցիայի մակարդակը Սինգապուրում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



4.3 Հարավային Կորեա

Հարավային Կորեայում գործում է Հակակոռուպցիոն և քաղաքացիական իրավունքների հանձնաժողովը, (այսուհետ՝ Հանձնաժողով), որը ձևավորվել է 2008թ. փետրվարի 29-ին՝ Կորեայի Օմբուդսմենի, Կորեայի կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողովի և Վարչական բողոքների հանձնաժողովի միավորման արդյունքում: Այս երեք կառույցների միավորման արդյունքում՝ մեկ պատուհանի սկզբունքով, քաղաքացիները կարող են ստանալ հանրային, վարչական բողոքների ներկայացման և կոռուպցիայի դեմ պայքարի մեկ կազմակերպություն՝ ծառայության մատուցման ավելի արագ և հարմար պայմաններ:

Հանձնաժողովի գործառույթներն են.

- բողոքների քննությունը,
- հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և դրա հաղթահարման միջոցառումների ձեռնարկումը,
- անձանց իրավունքների պաշտպանությունն՝ անօրինական և անարդար վարչական ընթացակարգերից:

Հանձնաժողովը մշակում է ազգային հակակոռուպցիոն քաղաքականություն, որը պետք է իրականացվի կառավարության բոլոր մակարդակներում, ինչպես նաև, քննարկում և համակարգում է կառավարության այն միջոցառումները, որոնք ձեռնարկվում են կարճատև կամ երկարատև ժամանակաշրջանում կոռուպցիայի կանխարգելման համար:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի գնահատում է հանրային ոլորտի կազմակերպությունների բարեխղճության մակարդակը՝ հարցում կատարելով հանրային ծառայությունների հետ առնչվող քաղաքացիների շրջանում: Հանձնաժողովը գնահատում է նաև հանրային կազմակերպությունների կողմից մշտապես ցուցաբերվող հակակոռուպցիոն նախաձեռնությունները: Այդ գնահատումները նպատակ են հետապնդում խթանել կոռուպցիայի դեմ պայքարը:

Հանձնաժողովը պետական գործակալություններին աջակցելու նպատակով հանձնարարականներ է տալիս երկիմաստ, կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենքների և ինստիտուտների փոփոխման վերաբերյալ:

Կոռուպցիայի ներազդեցության գնահատումը վերլուծական մեխանիզմ է, որը ստեղծվել է օրենքներում և ընթացակարգերում կոռուպցիային նպաստող գործոնների վերհանման և վերացման համար: Այս համակարգի ներքո նախագծվող, փոփոխվող կամ գործող իրավական ակտը հակակոռուպցիոն փորձաքննության է ենթարկվում:

Հանձնաժողովը քաղաքացիների մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարում խթանելու նպատակով կազմակերպում է հանրային իրազեկման տարատեսակ միջոցառումներ: Կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ իրազեկվածության և բարեխղճության ազգային կայուն համակարգի ձևավորման նպատակով Հանձնաժողովի գործունեության անքակտելի բաղադրիչն է հանրային ծառայողների և ուսանողների հակակոռուպցիոն կրթության կազմակերպումը:

Հանձնաժողովը աջակցում է Թափանցիկ հասարակության քաղաքականության խորհրդի ղեկավարմանը, որը զբաղվում է կոռուպցիայի դեմ հանրային-մասնավոր համագործակցության խթանմամբ: Հանձնաժողովն օժանդակում է քաղաքացիական խմբերին գործարկել տեղական հակակոռուպցիոն կենտրոններ, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելման տարաբնույթ գործողություններ, ինչպիսիք են մոնիթորինգները, ուսուցումները և բարեխղճության խթանման արշավները:

Հանձնաժողովն ապահովում է սերտ գործնական համագործակցություն միջազգային կազմակերպությունների և այլ պետությունների հակակոռուպցիոն մարմինների հետ:

Ցանկացած անձ կարող է կոռուպցիայի վերաբերյալ հաղորդում ներկայացնել Հանձնաժողովին: Կոռուպցիայի վերաբերյալ հաղորդման դիտարկումն իրականացվում է հետևյալ ընթացակարգով. ստացված հաղորդումը ստուգվում է Հանձնաժողովի կողմից և հավաքագրվում են փաստեր, գործը փոխանցվում է քննչական մարմիններին, որոնք իրականացնում են նախաքննություն և տեղեկացնում հանձնաժողովին դրա արդյունքների վերաբերյալ:

Հանձնաժողովը կարող է մեղադրանք առաջադրել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, որոնք կասկածվում են կոռուպցիոն հանցանք կատարելու մեջ: Հանձնաժողովը կարող է խնդրել նոր քննություն իրականացնել, եթե համարում է, որ անցկացված նախաքննությունը բազմակողմանի և լիարժեք չէ:

Հանձնաժողովի կառուցվածքը հետևյալն է.

Հանձնաժողովը բաղկացած է 15 հանձնակատարներից, ներառյալ՝ նախագահից (ով ունի նախարարի կարգավիճակ), 3 փոխնախագահներից (ովքեր ունեն փոխնախարարների կարգավիճակ), 3 մշտական հանձնակատարներից և 8 ոչ մշտական հանձնակատարներից: Վարչական հարցերի լուծման համար քարտուղարությունը բաղկացած է երեք բյուրոներից՝ Օմբուդսմենի, Հակակոռուպցիոն և Վարչական բողոքների: Դրանցից յուրաքանչյուրը ղեկավարվում է փոխնախագահների կողմից: Բոլոր Հանձնակատարների կարգավիճակն ու գործունեության անկախությունը երաշխավորվում են օրենքով:

4.4 Ինդոնեզիա

Ինդոնեզիայում գործում է Կոռուպցիայի հաղթահարման կոմիտեն, (այսուհետ՝ Կոմիտե), որը ստեղծվել է 2002թ.-ին «Կոռուպցիայի հաղթահարման կոմիտեի» մասին օրենքով:[102]

Կոմիտեի գործառույթների շրջանակն է կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող կառույցների համակարգումը, կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող կառույցների վերահսկողությունը, կոռուպցիոն հանցանքների քննությունը, կոռուպցիայի կանխարգելումը և պետության վարչարարության դիտարկումը:

Կոռուպցիայի դեմ պայքարող կառույցների համակարգման գործառույթի շրջանակներում Կոմիտեն իրավասու է.

1. Համակարգել կոռուպցիոն արարքների քննությունը,
2. Ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի գործունեության զեկուցման համակարգ,
3. Հայցել կոռուպցիայի հաղթահարման վերաբերյալ տեղեկատվություն իրավասու մարմիններից:,
4. Իրականացնել լսումներ կամ հանդիպումներ կոռուպցիայի հաղթահարման համար պատասխանատու կառույցների հետ:,
5. Հայցել պատկան մարմինների զեկույցները կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ:

Կոմիտեն ունի հետևյալ կառուցվածքը.

- Պետության գույքի զեկույցի գրանցման և ստուգման տնօրինություն,
- Պարգևատրման տնօրինություն,
- Կրթության և մարդկային ծառայությունների տնօրինություն,
- Հետազոտության և զարգացման տնօրինություն,
- Կանխարգելման հարցերով քարտուղարի տեղակալ,
- Քննության տնօրինություն,
- Դատական հետապնդման տնօրինություն,
- Աշխատանքային ստորաբաժանումների համակարգում և վերահսկողության տնօրինություն,

[102] Law No.30/2002 on the Corruption Eradication Commission

- Կիրառման հարցերով քարտուղարի տեղակալ:
- Տեղեկատվության և տվյալների մշակման տնօրինություն,
- Հանձնաժողովի և գործակալությունների միջգերատեսչական աշխատանքային ցանցի տնօրինություն,
- Մոնիթորինգի տնօրինություն,
- Տեղեկատվության և վիճակագրության հարցերով քարտուղարի տեղակալ:
- Ներքին հսկողության տնօրինություն,
- Հանրային բողոքների տնօրինություն,
- Ներքին մոնիթորինգի և հանրային բողոքների քարտուղարություն,
- Պլանավորման և ֆինանսների բյուրո,
- Ընդհանուր բյուրո,
- Մարդկային ռեսուրսների բյուրո,
- Իրավաբանական բյուրո,
- Հանրային կապերի բյուրո,
- Գլխավոր քարտուղարություն:

Ստորև ներկայացված Աղյուսակ 33-ը, որը կազմված է ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների [103] :, վկայում է, որ Ինդոնեզիայում վերջին տասնամյակում կոռուպցիայի մակարդակը գտնվել է էականորեն բարձր մակարդակում, ինչը պայմանավորված է աշխատակազմի և ռեսուրսների սղությամբ[104]:

[103] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview
[104] Erviani, Ni Komang (3 December 2008). "KPK backlog reaches more than 16,000 cases". The Jakarta Post.

Աղյուսակ 33. Կոռուպցիայի մակարդակը Ինդոնեզիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



4.5 Մալազիա

Մալազիայում գործում է Հակակոռուպցիոն հանձնաժողովը, (այսուհետ՝ Հանձնաժողով), որի գործառնական մասը ղեկավարվում է Գլխավոր հանձնակատարի տեղակալի կողմից, և որը բաղկացած է վեց բաժիններից՝ քննչական, հատուկ աշխատանքների, իրավական և դատական հետապնդման, հետախուզության, դատական, փաստաթղթերի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների:

Քննչական բաժինը առանցքային դեր է խաղում կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում:

Հատուկ աշխատանքների բաժինը քննում է բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կատարված և հանրային շահերի դեմ ուղղված հանցագործությունները:

Իրավական և դատական հետապնդման բաժինը պատասխանատու է կոռուպցիոն գործերի դատաքննության համար: Բաժինը երաշխավորում է, որ դատաքննությունն իրականացվում է արդար օրենքով սահմանված կարգով ապացույցների գնահատման սկզբունքներին համապատասխան: Բաժինը նաև գնահատում է քննչական փաստաթղթերը, որոնք ներկայացվում են քննչական բաժնի կողմից:

Հետախուզության բաժինը կենսական նշանակություն ունի, քանի որ տեղեկատվության ստացման գլխավոր կենտրոնն է: Այստեղ կիրառվում են կոռուպցիային վերաբերող տեղեկատվության հավաքագրման գերժամանակակից միջոցներ:

Դատական բաժինը տրամադրում է դատական փորձաքննություն և խորհրդատվություն քննության որակի բարձրացման և հակակոռուպցիոն օրենքների կիրառման նպատակով:

Փաստաթղթերի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը պատասխանատու է տեղեկատվության ստացման և մշակման, փաստաթղթերի դասակարգման, բարեխիղճ ուսումնասիրության, փաստաթղթերի ֆայլավորման, վիճակագրության ամփոփման և տեխնիկական աջակցության ցուցաբերման, ինչպես նաև օգտատերերին Հանձնաժողովի համակարգչային ցանցի վերաբերյալ խորհուրդներ տալու համար:

2009թ.-ի «Մալազիական հակակոռուպցիոն հանձնաժողովի մասին» օրենքի հիման վրա՝ Հանձնաժողովն իրավասու է քննել և կանխարգելել կոռուպցիայի և իշխանության չարաշահման ցանկացած ձև:

Հանձնաժողովն ունի վկաների պաշտպանության համակարգ: Վկաների պաշտպանությունը իրականացվում է 2009թ.-ի «Վկաների պաշտպանության մասին» օրենքով սահմանված կարգով[105]:

Կանխարգելումը Հանձնաժողովի եռակողմ գործունեության բաղկացուցիչ մասերից է, որը սահմանված է Հանձնաժողովի մասին օրենքի 7-րդ գլխում: Այս մասը համակարգում է Գլխավոր հանձնակատարի համապատասխան տեղակալը: Այստեղ գործում են երեք բաժիններ՝ տեսչական և խորհրդատվական, հանրային ոլորտի կառավարման և գործակալության բարեխիղճ կառավարման: Կրթության բլոկը նույնպես գտնվում է կանխարգելման հարցերով տեղակալի համակարգման ներքո և իրականացվում է համայնքային կրթության բաժնի կողմից: Այն կոչված է

[105] «Վկաների պաշտպանության մասին» թիվ 696 օրենք, 2009թ.

հասարակությանը մատուցել հակակոռուպցիոն կրթություն և մոբիլիզացնել հասարակությանը կոռուպցիայի դեմ պայքարին աջակցելու համար[106]:

Ստորև ներկայացված Աղյուսակ 34-ից, որը կազմված է Թրանսպարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների[107] հիման վրա, պարզ է դառնում այն փաստը, որ Մալազիայում վերջին տասնամյակում կամ 2009թ.-ի Հանձնաժողովի կամ Վկաների պաշտպանության օրենքների ընդունումից հետո կոռուպցիայի մակարդակը, այնուամենայնիվ, չի նվազել:

Աղյուսակ 34. Կոռուպցիայի մակարդակը Մալազիայում ըստ Թրանսպարենսի Ինթերնեշնլի



4.6 Թայլանդ

Թայլանդում գործում է Ազգային հակակոռուպցիոն հանձնաժողովը, (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կարգավորումը տրված է ընդհուպ մինչև Սահմանադրության մակարդակով:

---

[106] Տե՛ս այս հանձնաժողովի մասին առավել մանրամասն՝ www.sprm.gov.my
[107] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview

Թայլանդի թագավորության Սահմանադրության համաձայն ազգային հակակոռուպցիոն հանձնաժողովն ունի հետևյալ լիազորությունները.

1. Քրեական գործ հարուցել պետական այն պաշտոնյաների նկատմամբ, որոնք, ղեկավար պաշտոններ զբաղեցնելով գործադիր իշխանությունում, անօրինական հարստացել են կամ կոռուպցիոն հանցագործություն են կատարել, հանցանք են կատարել ծառայության ժամանակ կամ դատական ծառայության ընթացքում, ներառյալ ցածր աստիճանի ցանկացած պետական ծառայողի, որը հանցավոր համաձայնության է եկել վերադաս պաշտոնյայի հետ հանցանք կատարելու մասին, որը Հանձնաժողովն իրավասու է քննել և լուծել գործը Օրգանական (Սահմանադրական) օրենքին համապատասխան:
2. Վերահսկողություն է իրականացնում քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից էթիկայի նորմերի պահպանման նկատմամբ:
3. Ներկայացնում է տեսչական զեկույց և պարտականությունների կատարման մասին տարեկան զեկույց Նախարարների խորհրդի, Ներկայացուցիչների պալատի և Սենատի դիտարկումներով, որը տպագրվում է կառավարական թերթում և հանրայնացվում է:
4. Իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հանձնաժողովն ունի հետևյալ կառուցվածքը[108]. Գործառնական թև, Էթիկայի, բարեխիղճ առաջխաղացման և կոռուպցիայի կանխարգելման խումբ, Քաղաքական սեկտորում կոռուպցիայի կանխարգելման բյուրո, Հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման բյուրո, Պետական ձեռնարկություններում և մասնավոր ոլորտում կոռուպցիայի կանխարգելման բյուրո, Քաղաքացիական ոլորտում կոռուպցիայի կանխարգելման բյուրո, Էթիկայի և բարեխղճության բյուրո, Գույքի հայտարարագրերի խումբ, Քաղաքական սեկտորում հայտարարագրերի ստուգման բյուրո, Հանրային ոլորտում հայտարարագրերի ստուգման բյուրո, Պետական ձեռնարկությունների ոլորտում հայտարարագրերի ստուգման բյուրո,

[108] Հանձնաժողովի վերաբերյալ թիվ 10/2550 բանաձև, 2008թ.

Ընթացակարգերի զարգացման ստուգման բյուրո, Կոռուպցիայի հաղթահարման խումբ, Քաղաքական ոլորտում կոռուպցիայի հաղթահարման բյուրո, Հանրային ոլորտում կոռուպցիայի հաղթահարման բյուրո, Պետական ձեռնարկություններում և մասնավոր ոլորտում կոռուպցիայի հաղթահարման բյուրո, Հետախուզության և գնահատման բյուրո:

Հանձնաժողովն ունի նաև կնքված համագործակցության հուշագրեր Թմրանյութերի և հանցագործությունների ՄԱԿ-ի գրասենյակի, Եգիպտոսի, Բրունեի, Ինդոնոզիայի, Մալազիայի, Սինգապուրի հակակոռուպցիոն մարմինների հետ[109]:

Ստորև ներկայացված Աղյուսակ 35-ը, որը կազմված է Թրանսպարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների [110] հիման վրա, վկայում է այն փաստը, որ Թայլանդում վերջին տասնամյակում կոռուպցիայի մակարդակը գտնվել է միջին մակարդակում՝ համեմատած այլ երկրների հետ, սակայն էական նվազում մարմնի ստեղծումից հետո առկա չէ:

Աղյուսակ 35. Կոռուպցիայի մակարդակը Թայլանդում ըստ Թրանսպարենսի Ինթերնեշնլի



[109] Տե՛ս Հանձնաժողովի մասին առավել մանրամասն www.nacc.go.th

[110] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview

4.7 Բութան

Բութանում գործում է Հակակոռուպցիոն հանձնաժողովը, (այսուհետ՝ Հանձնաժողով), որը ստեղծվել է 2005թ.-ին: Այդ հանձանժողովի տեսլականն է կառուցել երջանիկ, ներդաշնակ և կոռուպցիայից զերծ հասարակություն: Առաքելությունն է բացառել կոռուպցիան՝ օրինակ ծառայելով, համագործակցության մեջ կատարելության հասնելով և հանրային, մասնավոր կազմակերպություններում հակակոռուպցիոն միջոցառումների ուղղորդման միջոցով: Արժեքներն են առաջնորդությունը, թիմային աշխատանքը, արժեհավատությունը, բարեխղճությունը, խոհեմությունը, թափանցիկությունը, խիզախությունը, անաչառությունը, հաշվետվողականությունը, արհեստավարժությունը, նպատակահարմարությունը, ստեղծագործ մոտեցումը, նպատակաուղղվածությունը և կարեկցանքը:

Իր աշխատանքում Հանձնաժողովը կիրառում է հետևյալ գործիքները.

- Կոռուպցիայի կանխարգելման գործիք,
- Բարեխղճության դաշնագիր,
- Բարեխղճության ախտորոշման գործիք,
- Բարեխղճության գնահատում,
- Շահերի բախում,
- Գույքի հայտարարագրում,
- Կոռուպցիոն ռիսկերի կառավարում,
- Համակարգային հետազոտություններ,
- Ծառայության ստանդարտներ,
- Վարչական խոչընդոտների կրճատման արժեքի մոդել:

Հանձնաժողովն ունի նաև քննչական և հանրային կրթության ստորաբաժանումներ[111]:

---

[111] Տե՛ս առավել մանրամասն www.acc.org.bt:

Ստորև ներկայացված Աղյուսակ 36-ը, որը կազմված է Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների [112] հիման վրա վկայում է այն փաստը, որ Բութանում վերջին տասնամյակում՝ մարմնի ստեղծումից հետո, կոռուպցիայի մակարդակը գտնվել է ցածր մակարդակում՝ համեմատած այլ երկրների հետ:

Աղյուսակ 36. Կոռուպցիայի մակարդակը Բութանում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



[112] Տե՛ս http://www.transparency.org/research/cpi/overview

5. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՕՎԿԻԱՆԻԱՅՈՒՄ

5.1 Նոր Զելանդիա

Նոր Զելանդիայում, ինչպես ԱՄՆ-ում, գոյություն չունի զուտ հակակոռուպցիոն պայքարով զբաղվող ինչ-որ առանձին մարմին: Դրա փոխարեն, գործում են մի շարք գործակալություններ, որոնք կենտրոնացած են կոռուպցիայի տարրերի վրա, իսկ հակակոռուպցիոն հետաքննությունների և հետապնդումների համար պատասխանատու են երկու գլխավոր իրավապահ մարմիններ՝

- Նոր Զելանդիայի խարդախությունների գրասենյակը, (այսուհետ՝ Գրասենյակ),
- Նոր Զելանդիայի ոստիկանությունը:

Քննարկման փուլում է նաև անկախ հակակոռուպցիոն մարմնի ստեղծումը[113]:

Կոռուպցիայի դեմ պայքարում առկա խնդիրներից է անկատար օրենսդրությունը: Բանն այն է, որ Նոր Զելանդիայում չի գործում կոռուպցիոն հանցագործությունները կարգավորող միասնական իրավական ակտ. վերջիններս կարգավորվում են 1961 թ.-ին ընդունված «Հանցագործությունների մասին» օրենքի 6-րդ գլխով և այլ իրավական ակտերով[114]: Բանակցություններ են անցկացվում համալիր իրավական ակտի ընդունման մասին, որն իր մեջ կընդգրկի կոռուպցիոն հանցագործությունները կարգավորող բոլոր իրավական նորմերը:

Նոր Զելանդիայի խարդախությունների գրասենյակի գործունեությունը կարգավորվում է 1990թ.-ի Խոշոր խարդախությունների գրասենյակի մասին օրենքով:

Գրասենյակի համար պատասխանատու է Ոստիկանության նախարարը, ակայն օրենքով սահմանված է, որ գրասենյակի տնօրենն ունի լիակատար անկախություն գործառնական որոշումներ կայացնելիս:

---

[113] Տե՛ս http://infozakon.com/news/court/2682-mezhdunarodnyy-opyt-antikorrupcionnogo-prosvescheniya.html

[114] Տե՛ս http://stopkorupciya.blogspot.am/2014/11/5.html

Սկզբնական փուլում գնահատական է տալիս Խարդախության հայտնաբերման և ուսումնասիրության բաժինը, այնուհետև այն ուղարկվում է Ֆինանսական շուկաների և կորպորատիվ խարդախության մասին բաժիններ[115]:

Օրենքով սահմանված է, որ հետաքննություն սկսելու իրավասություն ունի միայն Գրասենյակի տնօրենը: Սակայն այդ ամբողջ տեղեկատվությունը չի կարող օգտագործել անձի դեմ որպես ապացույց այնքան ժամանակ, մինչև անձը չտրամադրի դրան չհամապատասխանող ապացույց: Ի սկզբանե գործերը ներառում էին միայն ներդրումային խարդախություններ, յուրացում, գրավի ֆինանսավորման խարդախություններ և կոռուպցիա: Այժմ շրջանակը ընդլայնվել է՝ ներառելով նաև կեղծ անձնագրերը, ապօրինի ներգաղթը և այլն:

Գրասենյակն իրավունք ունի ձեռք բերել ցանկացած փաստաթուղթ և կանչել ցանկացած պաշտոնյայի հարցաքննության: Մարմնի լիազորությունների մեջ է մտնում ներկայացված հայտարարագրերի վերլուծությունը: Այսինքն, վերջինիս իրավասությունները ոստիկանությունից էլ ավելի ընդարձակ են:

Նոր Զելանդիայում անցկացվում են իրազեկման սեմինարներ, որոնց նպատակն է մարդկանց ուսուցանել չընկալել կոռուպցիան իբրև խնդրի լուծում: Հակակոռուպցիոն իրազեկման սեմինարները կազմակերպվում և ֆինանսավորվում են պետության կողմից: Սեմինարների ընթացքում հասարակությունը տեղեկացվում է պետության հակակոռուպցիոն քաղաքականությանը, ծանոթանում կոռուպցիոն հանցագործությունների մասին բողոք ներկայացնելու կարգին, տեղին ու ժամկետներին: Վերջին տարիներին ներմուծվել է նաև առցանց անցկացվող իրազեկման սեմինարների համակարգը[116]:

Հակակոռուպցիոն պայքարի մեջ կարևոր դեր է զբաղեցնում զանգվածային լրատվամիջոցների մասնակցությունը. այստեղ լրատվամիջոցները պարբերաբար նյութեր են հրապարակում պաշտոնյաների կատարած ծախսերի, նրանց սեփականություն հանդիսացող շարժական և անշարժ գույքի վերաբերյալ:

---

[115] Տե՛ս https://www.sfo.govt.nz/about
[116] Տե՛ս http://hubs.ua/authority/a-by-l-li-nuzhen-mal-chik-35327.html

Հրապարակումը, որն առաջացնում է հասարակության անհանդուրժողականությունը, կարող է հիմք հանդիսանալ պաշտոնյայի լիազորությունների դադարեցման համար: Հասարակության գործադրած ճնշման արդյունքում պաշտոնյան հետ է վերադարձնում խաբեության արդյունքում ձեռք բերած ամբողջ գումարը: Հատկանշական է այն փաստը, որ լրատվամիջոցները կարող են հայտարարագիր պահանջել ցանկացած քաղաքացուց՝ հավաքարարից մինչ նախարար՝ առանց բացառությունների[117]:

Այն ընկերությունը, որը մեղադրվում է կոռուպցիոն հանցագործության մեջ, սպառնում է տուգանքի վճարում 1,700 ԱՄՆ դոլարի չափով, իսկ ֆիզիկական անձանց ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Առավել խիստ են պատժվում դատական համակարգում կատարված կոռուպցիոն հանցագործությունները. վերջիններիս համար նախատեսված է մինչև 14 տարվա ազատազրկում[118]:

Կոռուպցիոն հանցագործության մասին հաղորդում տված անձինք գտնվում են պետության պաշտպանության տակ, եթե կարողանում են ապացուցել իրենց տրամադրած տեղեկատվության հավաստիությունը[119]:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների, որոնք ներկայացված են Աղյուսակ 37-ում՝ ստանում ենք հետևյալ պատկերը, որի համաձայն Նոր Զելանդիան աշխարհում առաջատարն է:

---

[117] Տե՛ս http://www.justice.govt.nz/policy/criminal-justice/bribery-and-corruption
[118] Տե՛ս http://hubs.ua/authority/a-by-l-li-nuzhen-mal-chik-35327.html
[119] Տե՛ս http://www.nortonrosefulbright.com/knowledge/publications/121082/business-ethics-and-anti-corruption-laws-new-zealand

Աղյուսակ 37. Կոռուպցիայի մակարդակը Նոր Զելանդիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



5.2 Ավստրալիա

Աստրալիան բաժանված է 6 նահանգների՝ Արևմտյան Ավստրալիա, Հարավային Ավստրալիա, Նոր Հարավային Ուելս, Քուինսլենդ, Թասմանիա և Վիկտորիա, որոնց մեծամասնությունն ունի հակակոռուպցիոն մարմիններ, որոշները՝ նույնիսկ մեկից ավելի:

5.2.1 Արևմտյան Ավստրալիայի Կոռուպցիայի և հանցագործության դեմ պայքարի կոմիտե (WA Corruption & Crime Commission)[120]

Կոռուպցիայի և հանցագործության դեմ պայքարի կոմիտեի, (այսուհետ՝ Կոմիտե), գործունեության հիմնական իրավական հիմքը կազմում են նահանգային օրենսդրությունը, 2005թ.-ին վավերացված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան և 1999թ.-ին վավերացված Կաշառակերության դեմ պայքարի կոնվենցիան:

Կոմիտեն հիմնադրվել է 2004 թվականի հունվարի 1-ին: Այս մարմնի գործունեության նպատակներն են՝

[120] Տե՛ս https://www.acauthorities.org/country/au,

- ապահովել Արևմտյան Ավստրալիայում հանրային սեկտորի թափանցիկությունն ու միջոցներ ձեռնարկել հակաօրինականության նվազման ուղղությամբ,
- պայքարել և նվազեցնել կազմակերպված հանցագործությունների թիվը Արևմտյան Ավստրալիայում:

Կոմիտեն հայտնի է որպես հակակոռուպցիոն մարմնի խորհրդարանական մոդելի վառ դրսևորում: Ղեկավարը նշանակվում է Պառլամենտի կոմիտեի կողմից: Պառլամենտի 2 ատյանների դիմումի հիման վրա ղեկավարին կարող է պաշտոնից ազատել միայն քաղաքապետը: Ղեկավարը նշանակվում է 5 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել ևս մեկ անգամ՝ 5 տարի ժամկետով:

Մշտական աշխատակազմը բաղկացած է 154 հոգուց, քննիչների ընդհանուր թիվը կազմում է 80: Գործակալության տարեկան բյուջեն 2011 թվականից ի վեր տարեկան կազմում է 30.2 միլիոն դոլար:

Կոմիտեն համագործակցում է հանրային սեկտորում գործող գործակալությունների հետ՝ նպատակ ունենալով բարձրացնելու նրանց՝ հակաօրինական վարքագծի դեմ պայքարի արդյունավետությունը: Կոմիտեի գործառույթներն են՝

1. բացահայտել բիզնես ոլորտում առկա հակաօրինական վարքագիծը,
2. պայքարել հակաօրինական վարքագծի դեմ,
3. ներկայացնել առաջարկություններ հակաօրինական վարքագծի վերացման համար:

Կոմիտեն ունի ինչպես հետաքննության իրականացման, այնպես էլ՝ կանխարգելիչ գործառույթներ: Հետաքննության իրականացումը ներառում է՝

- ուժի կիրառման զանազան միջոցներ,
- վկաների առերեսում,
- վկաներին ցուցմունք տալուն հարկադրում օրենքով նախատեսված կարգով երդում տալուց հետո,
- անհատներին և կազմակերպություններին փաստաթղթեր ներկայացնելուն հարկադրում,
- պահեստներում որոնման կատարում,
- թափանցիկության բարձրացմանն ուղղված թեստերի իրականացում,

5.2.2 Հարավային Ավստրալիայի Կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողով (SA Independent Commissioner Against Corruption)

Կարգավորվում է 2012թ. նոյեմբերի 28-ին Հարավային Ավստրալիայի խորհրդարանի կողմից ընդունված «Կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողովի» մասին օրենքով (ICAC Act):

Վերոնշյալ օրենքով ստեղծվում են երկու գրասենյակներ՝ Հանրային բարեխղճության գրասենյակ (OPI), (այսուհետ՝ Գրասենյակ) և Կոռուպցիայի դեմ անկախ հանձնակատար (ICAC), (այսուհետ՝ Հանձնակատար):

Երկու գրասենյակներ էլ վերահսկվում են Հանձնակատարի կողմից: Կոռուպցիայի դեմ անկախ հանձնակատարը և՛ անկախ է, և՛ հաշվետու: Հանձնակատարը ենթակա չէ որևէ անձի կողմից ուղղորդման որևէ հարցով և իրականացնում է իր իրավազորություններն ու գործառույթները առանց վախի:

Գրասենյակը ստանում և գնահատում է բոլոր բողոքները և հաղորդումները կոռուպցիոն հանցագործությունների և հանրային կառավարման ոլորտում խախտումների և վատ կառավարման դեպքերի վերաբերյալ և տրամադրում է առաջարկություններ Հանձնակատարին, թե ինչպես նման հարցերը կարող են լուծվել

Հանձնակատարը [121] հանդիսանում է իրավապահ մարմին: Վերջինս չի հիմնադրվել այն պատճառով, որ Հարավային Ավստրալիայում առկա էր ակնհայտ կոռուպցիոն խնդիր, այլ որպեսզի պետական մարմինները, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինները, որքան հնարավոր է լինեն հաշվետու և թափանցիկ:

Հանձնակատարի գործառույթների շրջանակը, որոնք միտված են կոռուպցիան պետական կառավարման ոլորտում բացահայտելուն, ընգրկում է

---

[121] Տե՛ս 27.11.2014—Independent Commissioner Against Corruption Act 2012, բաժին 7, https://www.legislation.sa.gov.au/LZ/C/A/INDEPENDENT%20COMMISSIONER%20AGAINST%20CORRUPTION%20ACT%202012/CURRENT/2012.52.UN.PDF

- Հետաքննություն և քրեական հետապնդման հարուցում կամ հարուցման վերահասցեագրումը Հարավային Ավստրալիայի ոստիկանությանը կամ Մարդու իրավունքների պաշտպանին:
- Հետաքննության մարմիններին և պետական այլ մարմիններին հանրային ոլորտի վատ կառավարման խախտումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- Փորձի, քաղաքականության, հետաքննության մարմինների և պետական մարմիններին ընթացակարգերի գնահատում՝ նպատակ հետապնդելով կանխել կամ նվազագույնի հասցնել կոռուպցիան, խախտումները և անբարեխիղճ վատ կառավարումը,
- Կոռուպցիայի վերացմանը կամ նվազեցմանն ուղղված կրթական ծրագրերի կազմակերպում,
- Այլ գործառույթներ:

Հանձնակատարի իրավասությունը տարածվում է ամբողջ Հարավային Ավստրալիայի պետական կառավարման մարմինների վրա՝ ներառելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու կազմակերպություններին, խորհրդարանի անդամներին, դատական համակարգի անդամներին և ոստիկանությանը:

Ըստ օրենքով սահմանված կարգի՝ յուրաքանչյուր տարի հանձնակատարը պատրաստում է տարեկան զեկույց, որը հետագայում տեղադրվում է պաշտոնական կայքէջում:

5.2.3 Նոր Հարավային Ուելսի Կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողով (NSW Independent Commission Against Corruption)

Կարգավորվում է 1988թ. Կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողովի մասին իրավական ակտով[122]: Մարմնի իրավասությունը տարածվում է հանրային հատվածի բոլոր մարմինների (բացառությամբ ոստիկանության ուժերի) և աշխատողների վրա, այդ թվում՝ կառավարական գերատեսչությունների, տեղական խորհուրդների,

[122] Տե՛ս Independent Commission Against Corruption Act 1988

խորհրդարանի անդամների, նախարարների, դատական համակարգի և նույնիսկ նահանգապետի: Մարմնի իրավասությունը տարածվում է նաև հանրային պաշտոնական գործառույթներ իրականացնողների վրա[123]:

Նահանգապետը նշանակում է մարմնի կառավարչին և կառավարչի հետ համակարծիք լինելու դեպքում՝ կառավարչի օգնականին[124]:

Գործառույթները կարգավորվում են վերոնշյալ ակտի 4-րդ գլխով, բազմազան են, մարմինն ունի ավելի քան 50 գործառույթ: Հիմնական գործառույթներն են հետաքննել և բացահայտել հանրային հատվածի կոռուպցիոն արարքները, խորհրդատվության և աջակցության միջոցով ակտիվորեն կանխել կոռուպցիան և հանրությանը և հասարակական սեկտորին կրթել կոռուպցիայի և ազդեցությունների մասին: Կատարում է նաև ընտրական հանձնաժողովի կողմից հղում կատարված գործերով հետաքննություն իրականացնելու գործառույթ[125]: Մարմինը նաև ունի հաշվետվողականության մի շարք մեխանիզմներ[126]:

Համանման գործառույթներով են օժտված նաև Ավստրալիայի մնացած 3 նահանգների հակակոռուպցիոն մարմինները՝ Քուինսլենդի Հանցագործության և կոռուպցիայի հանձնաժողովը (Queensland Crime and Corruption Commission), ստեղծված 1991թ.-ին, Վիկտորիայի անկախ լայնածավալ հակակոռուպցիոն մարմին (Victorian Independent Broad-based Anti-corruption Commission), ստեղծված 2012թ.-ին, և Թասմանիայի բարեխղճության հանձնաժողովը (Tasmanian Integrity Commission), ստեղծված 2012թ.-ին:

2006թ. և 2014թ.-ին, Ավստրալիայի կառավարությունը ուժեղացրել է իր հակակոռուպցիոն կարողությունները՝ հիմնադրելով Ավստրալիայի Միասնական Իրավապահ հանձնաժողովը (Australian Commission for Law Enforcement Integrity), որը ներկայումս վերահսկողություն է իրականացնում Ավստրալիայի դաշնային ոստիկանության նկատմամբ, Ավստրալիայի Հանցագործության հանձնաժողովը,

---

[123] Տե՛ս http://www.icac.nsw.gov.au/about-the-icac/overview/functions-of-the-icac, last accessed 03.18.2016.
[124] Տե՛ս Independent Commission Against Corruption Act 1988, Գլուխ 2, հոդված 5,6:
[125] Տե՛ս Independent Commission Against Corruption Act 1988 No 35, 13A
[126] Տե՛ս http://www.icac.nsw.gov.au/about-the-icac/independence-accountability/accountability

Ավստրալիայի սահմանային ուժերը և Կեղծիքի և հակակոռուպցիոն կենտրոնը (AFP Fraud and Anti-Corruption Centre): Գործում է նաև Ոստիկանության բարեխղճության գրասենյակը (Office of Police Integrity):

Սակայն Ավստրալիայի հակակոռուպցիոն մոդելը հաճախ տեղիք է տալիս դժվարությունների, օրինակ՝ պաշտոնական կոռուպցիայի սահմանումները տարբերվում են նահանգից նահանգ, ինչպես նաև շփոթմունք է առաջանում առ այն, թե որ հակակոռուպցիոն մարմնի ենթակայության տակ են ընկնում, ինչը նշվել է Ավստրալիայի բարձրագույն դատական ատյանի կողմից *ICAC (NSW) v Cunneen* գործում[127]:

Չնայած այդ ամենին, ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների՝ Ավստրալիայում ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է Աղյուսակ 38-ում, որից երևում է, որ Ավստրալիան համարվում է կոռուպցիայի ցածր մակարդակ ունեցող առաջատար երկրներից մեկը:

Աղյուսակ 38. Կոռուպցիայի մակարդակը Ավստրալիայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



[127] ANTI-CORRUPTION AGENCIES IN AUSTRALIA, 2016, Transparency International Australia |

6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

6.1 Բոտսվանա

Բոտսվանայում գործում է Կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների դեմ տնօրինությունը [128] , որը հիմնադրվել է 1994թ. «Կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների գործերով» ակտի հիման վրա և համալրված է Հոնկոնգի գործակալության նախկին անդամներով և տեղական անձնակազմով, որը կազմում է 294 մշտական աշխատակից, այդ թվում՝ 97 քննիչ և 11 իրավախորհրդատու:

Բոտսվանայում գործող մարմնի օրենսդրական հիմքը կազմում են հետևյալ իրավական փաստաթղթերը. 1994թ. «Կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների գործերով» ակտ, 2013թ. «Կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների գործերով» ակտ, 2014թ. «Հանցագործության հասույթը և գործիքները», «Քննչական, կանխարգելիչ և կրթության ջանքերի վերաբերյալ» ազգային հակակոռուպցիոն ռազմավարություն և այլն

Տնօրինությունը գործնականորեն ինքնավար իրավապահ մարմին է:

Գործակալության ղեկավարին նշանակում է երկրի նախագահը, ով նաև իրավունքի ունի աշխատանքից ազատել ղեկավարին:

Գործակալության իրավական մանդատը կոռուպցիայի դեմ պայքարն է: Այն կարող է

- հետաքննել, հետապնդել հանցագործներին,
- պատրաստել ռազմավարություններ կոռուպցիայի դեմ պայքարում,
- ապահովել հանրային կրթություն և ուսուցում:

Տնօրինությունը համակարգում է հակակոռուպցիոն ամբողջ գործունեությունը, ինչպիսիք են Հակակոռուպցիոն հանձնաժողովները, նախարարությունների հակակոռուպցիոն միավորները, ինչպես նաև դպրոցներում և այլ հաստատություններում հակակոռուպցիոն ակումբները:

---

[128] Տե՛ս https://www.acauthorities.org/country/bw

Բյուջեն կազմում է 6,767,933 եվրո:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների՝ Բոտսվանայում ստանում ենք հետևյալ պատկերը, որն արտահայտված է Աղյուսակ 39-ում: Բոտսվանան Աֆրիկյան այն երկրներից է, որտեղ կոռուպցիան գտնվում է նվազագույնին մոտ սահմանին:

Աղյուսակ 39. Կոռուպցիայի մակարդակը Բոտսվանայում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



ԳԼՈՒԽ II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՐՄՆԻ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

1. ՀՀ գործող Հակակոռուպցիոն մարմնի ինստիտուցիոնալ թերությունները

ՄԱԿ–ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 36–րդ հոդվածը ներպետական հարթությունում ստեղծվող հակակոռուպցիոն մարմիններին առաջադրում է մի շարք պահանջներ, որոնցից հիմնարարն է անկախությունը: Մասնավորապես, ըստ վկայակոչված հոդվածի ձևակերպման՝ մասնակիցների պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթները առանց որևէ անհարկի ազդեցության:

Այսինքն, հակակոռուպցիոն մարմնի անկախությունը պետք է կրի ոչ թե ֆիկցիոն բնույթ, այլ լինի տեսանելի և ընկալելի յուրաքանչյուր անկողմնակալ դիտորդի համար:

Այդպիսի անկախության նպատակը մեկն է. կոռուպցիայի դեմ պայքարը չպետք է կաշկանդված լինի այդ պայքարն իրականացնող սուբյեկտի անձնական կամ այլ շահերով [129] : Այսինքն, ըստ էության հակակոռուպցիոն մարմնի անդամին վերագրվող անկախության չափանիշը հավասարազոր է արդարադատություն իրականացնող դատավորի անկախության չափանիշին:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը նույնպես վկայում է այն մասին, որ Կոնվենցիային միացող պետությունները տարբեր եղանակներով ուղղակիորեն փորձում են ապահովել հակակոռուպցիոն մարմնի անկախությունը: Վերջինիս կարևորությունը պայմանավորված է կոռուպցիայի դեմ պայքարի ապահովմամբ, հակառակ պարագայում՝ առանց անկախության, պայքարը արդյունավետ լինել չի կարող:

---

[129] Իրավական դոկտրինայում «շահ» եզրույթը մեկնաբանվում է որպես անձի նպատակասլաց վերաբերմունքը կոնկերտ օբյեկտի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորված հակակոռուպցիոն խորհրդի առաջնային թերությունը անկախության բացակայությունն է, քանի որ նույնիսկ եթե խորհուրդն անկախ է, այնուամենայնիվ այդ անկախությունը տեսանելի չէ երրորդ անձանց համար: Քանի որ ըստ էության հակակոռուպցիոն խորհրդում գերակայում են գործադիր և օրենսդիր իշխանության ներկայացուցիչները:

Մինչդեռ, **երբ Կոնվենցիան նշում է անկախության մասին, այն նկատի է ունենում ինստիտուցիոնալ անկախությունը:** Վերջինիս ապահովման հիմնարար երաշխիքն է, որ հակակոռուպցիոն խորհրդի անդամները չզբաղվեն որևէ այլ գործունեությամբ, բացի կոռուպցիայի դեմ պայքարելուց[130]: Այսինքն, կոռուպցիայի դեմ պայքարը պետք է լինի հիմնական գործառույթ, այլ ոչ թե ածանցվի անձի զբաղեցրած պաշտոնից: Ստացվում է, որ եթե հակակոռուպցիոն խորհրդի անդամ է նշանակվում ՀՀ ֆինանսների նախարարը, ապա վերջինիս անդամակցությունը խորհրդին բխում է նրա զբաղեցրած պաշտոնից:

Անկախության հետ է նաև **փոխկապակցված հակակոռուպցիոն մարմնի անդամների նշանակման կարգը:** Արտասահմանյան երկրներում, որտեղ ըստ ներկայացված վիճակագրության էականորեն ցածր է կոռուպցիայի մակարդակը՝ հակակոռուպցիոն խորհրդի գործունեության արդյունավետության պատճառով, հակակոռուպցիոն մարմնի անդամներն ընտրվում են բաց և թափանցիկ մրցույթների արդյունքում: Այդպիսի ընթացակարգը համապատասխանում է նաև Ջակարտայի հակակոռուպցիոն մարմնի վերաբերյալ սկզբունքներին՝ ընդունված 2012 թվականի նոյեմբերի 26–27–ը:

Հակակոռուպցիոն խորհրդի անկախության առաջնային գրավականներից է նաև այդ **մարմնի գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողական համակարգի ստեղծումը:** Արտասահմանյան երկրների որդեգրած մոտեցման համաձայն այդ խնդիրը դրվում է հասարակական սեկտորի վրա: Այսպես, սովորաբար, բացի հակակոռուպցիոն խորհրդից, ձևավորվում են նաև

---

[130] Հավելենք նաև, որ հակակոռուպցիոն մարմնի անդամը չպետք է զրկված լինի գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական գործունեությամբ զբաղվելուց:

հասարակական կազմակերպություններից բաղկացած խորհուրդներ, որոնց առաքելությունը վերահսկողություն իրականացնելն է։

ՀՀ որդեգրված մոտեցման համաձայն՝ հասարակական կազմակերպություններն անդամակցում են ձևավորված հակակոռուպցիոն մարմնին։ Սակայն, մեր համոզմամբ, այսպիսի մոտեցումն արդարացված չէ, քանի որ հասարակական կազմակերպությունը բացառապես պետք է զբաղվի վերահսկողությամբ։ Բացի այդ, վերջիններիս թիվն բավականին փոքր է և կազմում է ընդամենը 2 հասարակական կազմակերպության ներկայացուցիչ, որի պարագայում արդյունավետ վերահսկողության մասին խոսք չի կարող լինել։ Միևնույն ժամանակ, բավականին խիստ են հակակոռուպցիոն խորհրդի անդամ՝ թեկնածու հասարակական կազմակերպություններին, առաջադրվող պահանջները։

Ի հավելումն, միջազգային փորձը վկայում է այն մասին, որ հակակոռուպցիոն մարմնի գործունեությունը **ոչ թե պետք է կրի էպիզոդային (կարճաժամկետ) բնույթ, այլ պետք է իրականացվի մշտական հիմունքներով**։

ՀՀ–ում գործող հակակոռուպցիոն մարմինն իր գործունեությունը ծավալում է նիստերի միջոցով, որոնք որպես կանոն գումարվում են **երեք ամիսը մեկ անգամ**[131]։ Այդպիսի մոտեցումն արդարացված չէ, քանզի հակակոռուպցիոն գործունեությունը այդ դեպքում կրում է ֆակուլտատիվ բնույթ։

Բացի այդ, հակակոռուպցիոն մարմնի գործունեության **իրավական հիմքերը պետք է դրվեն օրենքի մակարդակով**, որը պետք է իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան կանոնակարգի հակակոռուպցիոն մարմնի ինչպես ձևավորման, այնպես էլ բուն գործունեության իրականացման կարգն ու պայմանները։

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ սովորաբար հակակոռուպցիոն մարմինների գործունեությունն ունենում է երեք ուղղություն՝ քննչական, կանխարգելիչ և կրթական, որոնցից յուրաքանչյուրն ունի անգնահատելի նշանակություն կոռուպցիայի դեմ պայքարում։

---

[131] Սակայն, այդ ժամկետն իմպերատիվ չէ և գրեթե չի պահպանվում։

ՀՀ–ում գործող հակակոռուպցիոն մարմնի գործունեությունն, ըստ էության, չի բովանդակում այդ տարրերից որևէ մեկը, որի գլխավոր պատճառներից է մշտական հիմունքներով իրականացվող գործունեության բացակայությունը:

2. ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը՝ որպես պետական ծառայության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործություններ քննող մարմին

Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունը իրավապահ մարմինների համակարգում համեմատաբար երիտասարդ կառույց է. կազմավորվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որը նույն թվականի նոյեմբերի 30-ին վավերացրել է ՀՀ Նախագահը:

Գործող քրեական դատավարության օրենսգրքի 190–րդ հոդվածով նախատեսված քննչական ենթակայության կանոնների համաձայն՝ Հատուկ քննչական ծառայությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:

Միևնույն ժամանակ, նույն հոդվածի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:

ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը պարունակում է՝

1. Կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչությունը,
2. Խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունը,
3. Ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչությունը:

Ինչպես տեսնում ենք, **կոռուպցիոն հանցագործությունների քննությունը ՀՀ հատուկ քննչական ծառայության գործունեության ուղղություններից մեկն է և ոչ միակը:**

2016թ. պետական **բյուջեով** ՀՀ հատուկ քննչական ծառայությանը հատկացվել է ընդամենը 648768.7 հազ. դրամ, որը նախատեսվել է ծառայության բոլոր գործառույթների համալիր կազմակերպման համար: Մինչդեռ, ինչպես սույն ուսումնասիրության շրջանակներում ցույց է տրվել միջազգային փորձի համաձայն՝ արտասահմանյան երկրները մի քանի անգամ ավելի մեծ բյուջե են նախատեսում, որը բացառապես միտված է լինում կոռուպցիոն հանցագործությունների քննությանը:

Բացի այդ, այն դեպքում, երբ կոռուպցիոն հանցագործությունների քննության գործառույթն իրականացվում է համալիր կերպով, այսինքն՝ զուգակցվում այլ գործառույթների իրականացման հետ, ապա նվազում է այդ գործառույթի իրականացման արդյունավետությունը: Այսինքն, անհրաժեշտ է ստեղծել մարմին, որն իր գործունեությունը կկենտրոնացնի բացառապես կոռուպցիայի դեմ պայքարելու համար կամ այդ նպատակով վերակազմավորել ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը:

3. Հայաստանի Հանրապետության դատախազությունը

ՀՀ դատախազությունը՝ որպես միասնական համակարգ, իր ռեսուրսները կենտրոնացնում է հանցագործությունների քննության նկատմամբ **վերահսկողություն իրականացնելով:**

ՀՀ դատախազության համակարգում կոռուպցիոն են համարվում միայն այն հանցագործությունները, որոնք համապատասխանում են ՀՀ գլխավոր դատախազի

2008 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 82 հրամանով (լրամշակվել 2013թ. մարտի 19-ի թիվ 12 հրամանով) սահմանված ցանկին[132]:

ՀՀ Գլխավոր դատախազությունն ունի **Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն**, որը որպես այդպիսին զբաղվում է այդ հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողության կատարմամբ:

Սակայն, ամբողջ խնդիրը կայանում է նրանում, որ որպես այդպիսին կոռուպցիայի դեմ պայքարը **զուգակցվում է դատախազության այլ գործառույթների կատարմամբ:** Մինչդեռ, այդ պայքարը պետք է կազմակերպվի համալիր կերպով, ամբողջ ռեսուրսները կենտրոնացնելով կոռուպցիայի դեմ պայքարին, հակառակ դեպքում այդ պայքարի արդյունավետության մակարդակը էականորեն ցածր է լինելու:

4. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը ստեղծվել է 2012 թվականի հունվարի 9-ին՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի ռեեստրի վարումը, դրանց վերլուծությունը և հրապարակումը, ինչպես նաև, օրենքով սահմանված դեպքերում, բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման և էթիկայի կանոնների խախտումների բացահայտումը և դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Հանձնաժողովը կազմված է 5 անդամներից, որոնց նշանակում է Հայաստանի **Հանրապետության Նախագահը**՝ Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, սահմանադրական դատարանի նախագահի, վճռաբեկ դատարանի նախագահի,

---

[132] Տե՛ս http://prosecutor.am/am/corruption/corruption/

գլխավոր դատախազի ներկայացմամբ՝ յուրաքանչյուրը մեկական անդամ սկզբունքով՝ վեց տարի ժամկետով: Իսկ հանձնաժողովի **նստավայրը** գտնվում է ՀՀ նախագահի նստավայրի շենքում, այն է՝ ք. Երևան, Բաղրամյան 26:

Վերոգրյալ իրավակարգավորումն ուղղակիորեն չի ենթադրում հանձնաժողովի լիակատար անկախություն, որը, որպես այդպիսին, հակակոռուպցիոն մարմնին ներկայացվող հիմնական պահանջներից է: **Հանձնաժողովը պետք է ունենա առանձին շենք, իսկ անդամները պետք է նշանակվեն հրապարակային մրցույթի արդյունքում:**

Բացի այդ, հանձնաժողովի էությունից բխում է, որ այն իրականացնում է կոռուպցիայի կանխարգելման գործառույթը: Սակայն, մեր համոզմամբ այն արդյունավետ չէ, քանի որ **բացակայում է համաչափությունը՝ ունեցած ռեսուրսների և առաջադրված խնդիրների միջև:**

Այսպես, հանձնաժողովն ունի ընդամենը 5 անդամ, սակայն ինչպե՞ս կարող են նրանք հասցնել վերլուծել տասնյակների հասնող գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերը: Միայն 2012–2015թթ–ին հանձնաժողովը ստացել է ավելի, քան 5000 հայտարարագիր[133]: Մինչդեռ, ըստ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների՝ հակակոռուպցիոն մարմինը իր կանխարգելիչ գործառույթի շրջանակներում պետք է իրականացնի պաշտոնատար անձանց ներկայացրած գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծություն, դրանք համադրի պաշտոնատար անձի կողմից ստացվող եկամուտներին՝ պարզելու համար դրանց միջև առկա անհամապատասխանությունները:

Միևնույն ժամանակ, բացակայում է հանձնաժողովի կողմից կայացված եզրակացության արդյունքում պաշտոնատար անձի նկատմամբ **ներազդելու գործուն մեխանիզմներ**: Այսպես, հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի 44–րդ հոդվածում սահմանված է. «Բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ եզրակացությունը և դրա հիման վրա համապատասխան պետական մարմնի լիազոր անձի որոշումը, եթե այդպիսին առկա է, տվյալ որոշումը կայացնելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է

---

[133] Տե՛ս http://www.ethics.am/files/legislation/246.pdf

տվյալ պետական մարմնի կայքէջում: Եթե ուսումնասիրության ընթացքում ի հայտ են գալիս հանցակազմի հատկանիշներ, ապա հանձնաժողովը բոլոր նյութերն ուղարկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն»:

Մինչդեռ, էթիկայի հանձնաժողովը, եթե դիտարկում ենք որպես հակակոռուպցիոն մարմնի կանխարգելիչ գործառույթն իրականացնող մարմին, պետք է գործուն ներազդեցություն ունենա հայտնաբերված կոռուպցիոն յուրաքանչյուր դեպքի կապակցությամբ, հակառակ պարագայում կոռուպցիայի մակարդակը ոչ թե կնվազի, այլ ընդհակառակը կաճի:

Էթիկայի հանձնաժողովի կողմից հրապարակված հաշվետվության համաձայն ստանում ենք հետևյալ պատկերը[134].

«2012–2013թթ. ստացված դիմումների[ց] (…) [է]թիկայի կանոնների խախտմանը կամ շահերի բախման իրավիճակներին են վերաբերել շուրջ տասը դիմումներ: Դրանց քննարկման արդյունքներով հարուցվել են չորս վարույթներ, որոնց կապակցությամբ ընդունված որոշումները հրապարակված են Հանձնաժողովի կայքէջում: Մեկ դիմում վերահասցեագրվել է ՀՀ կառավարության առընթեր ոստիկանությանը, ինչի արդյունքում ոստիկանության երկու ծառայողների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ: 2014 թվականին [մ]եկ դիմումի քննարկման արդյունքներով հարուցվել է վարույթ և արձանագրվել էթիկայի կանոնի խախտում: 2015 թվականին ստացվել է հինգ դիմումներ, որոնցից մեկի քննարկման արդյունքներով հարուցվել է վարույթ»:

Այսինքն, 2012–2015 թթ.–ի գործունեության արդյունքում հարուցվել է ընդամենը 6 վարույթ, որոնց արդյունքում ըստ հաշվետվության հստակեցված չէ, թե քանի՞ բարձրաստիճան պաշտոնատար անձ է ենթարկվել պատասխանատվության:

Արդյունքում, նվազում է այդ մարմնի գործունեության արդյունավետությունը և չի հաղթահարվում կոռուպցիան:

Հանձնաժողովի մյուս էական թերությունն է համապատասխան որակավորում ունեցող հանձնաժողովին կից փորձագիտական խմբի բացակայությունը: Այդ խումբը

---

[134] Տե՛ս նույն տեղում էջ 14

կարող էր իր աջակցել հանձնաժողովի աշխատանքներին՝ նպաստելով դրանց արդյունավետ կազմակերպմանը:

Բացի այդ, որպես այդպիսին, **հանձնաժողովը չունի ինքնուրույն բյուջե** (բացի հանձնաժողովի անդամների համար հատկացվող աշխատավարձից), որը հակակոռուպցիոն մարմնի կարևոր բաղադրիչներից մեկն է համարվում ըստ Հակակոռուպցիոն մարմնի վերաբերյալ սահմանված Ջակարտայի սկզբունքների:

5. Վերահսկիչ պալատ

Նորանկախ Հանրապետության պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինն է եղել ԱԺ վերահսկիչ պալատը: Արտաքին պետական վերահսկողություն իրականացնող այդ կառույցը հիմնադրվել է 1996թ. մայիսի 29-ին:

ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի վրա դրված էին մի քանի հիմնական խնդիրներ՝ իրականացնել բազմակողմանի եւ մասնագիտական վերահսկողություն պետական եկամուտների եւ միջոցների արդյունավետ ծախսման նկատմամբ՝ ապահովելով դրանց օգտագործման թափանցիկությունը:

Դեռևս 2005 թվականի նոյեմբերի 27–ի Սահմանադրական փոփոխությունների արդյունքում առաջացավ «ՀՀ վերահսկիչ պալատի մասին» նոր օրենքի անհրաժեշտություն. 2006 թվականի դեկտեմբերի 25-ին Ազգային ժողովն ընդունեց պալատի մասին նոր օրենք, որը վավերացվեց 2007 թվականի հունիսի 9-ին եւ ուժի մեջ մտավ ՀՀ Սահմանադրության 83.4 հոդվածն ուժի մեջ մտնելուն հաջորդող տասներորդ օրվանից՝ 2007 թվականի նոյեմբերի 5-ին:

ՀՀ վերահսկիչ պալատը, որը ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի իրավահաջորդն է, նախորդի համեմատությամբ ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք վերաբերում են պալատի կարգավիճակին, գործառույթներին, իրավասություններին:

2015 թվականի դեկտեմբերի 6–ին կայացած Սահմանադրական հանրաքվեի արդյունքում, նոր Սահմանադրության համաձայն՝ (դեռևս ուժի մեջ չմտած մասով) այն կոչվում է Հաշվեքննիչ պալատ:

Ներկայումս գործող Վերահսկիչ պալատի իրավասության շրջանակներն ընդգրկում են **բյուջետային և արտաբյուջետային միջոցների նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացումը:**

Սակայն, Վերահսկիչ պալատը, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նման, օժտված չէ գործուն ներգործության միջոցներով՝ կոռուպցիան հայտնաբերելու և այն կանխարգելելու համար։

Այսպես, իրականացված ստուգումների արդյունքում **Վերահսկիչ պալատն ընդունում է եզրակացություններ, որոնք Գլխավոր դատախազություն են ուղարկվում միայն համապատասխան անձի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար տվյալների առկայության դեպքում։**

Օրինակ, Վերահսկիչ պալատի 2015 թվականի տարեկան հաշվետվության համաձայն՝ պալատը ստուգումներ անցկացնելով 2014–2015 թթ.–ին՝ հայտնաբերել է, որ մարզում հաշվառված նպաստառու ընտանիքների 9912 գործերից ստուգվել է 6753–ը, հայտնաբերվել է 230 խախտում՝ 27,2 մլն դրամի չափով։

Նշված տեղեկատվությունից պարզ է դառնում, որ այն պետք է ուղարկվեր դատախազություն, սակայն այդ մասին կամ դրա արդյունքների մասին որևէ տեղեկատվություն առկա չէ։

Նույն եղանակով, Վերահսկիչ պալատն իր տարեկան հաշվետվությունում ամփոփել է 23 ընթացիկ հաշվետվություն, սակայն դրանցում առկա խախտումների և դրանց վերացմանն ուղղված քայլերի մասին տեղեկատվությունը բացակայում է։

Մինչդեռ, **ֆինանսական ոլորտում առկա կոռուպցիան վերացվում է հետևողական պայքարի արդյունքում, երբ պատասխանատվություն են կրում տվյալ ոլորտի համար պատասխանատու անձինք, հակառակ պարագայում իրականացված գործունեությունն արդյունավետ համարվել չի կարող։**

6. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն մարմնի բարեփոխման առաջարկություններ

Վերջին մի քանի տասնամյակում մի շարք պետություններ կոռուպցիայի դեմ պայքարի գործում առավել մեծ տեղ են տալիս կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմինների (հանձնաժողով, կոմիտե, գործակալություն, բյուրո և այլն) ստեղծմանը, քանի որ առաջավոր երկրների փորձը ցույց է տալիս հակակոռուպցիոն նման մարմինների արդյունավետությունը կոռուպցիայի դեմ տարվող պայքարի դժվարին և կարևոր գործում։

Մինչև պետության կողմից կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմնի (այսուհետ՝ Մարմին) ստեղծումը, անհրաժեշտ է, որպեսզի պետությունը ճիշտ գնահատի և վերանայի կոռուպցիայի դեմ պայքարի գործում իր քաղաքականությունը, գնահատի իր ներքին ռեսուրսները, կարողությունները և արդյունավետության չափանիշները:

Այդպիսի մարմինը չպետք է կրի ձևական բնույթ: Խոսքն այստեղ պետության մեջ նոր ինստիտուցիոնալ մարմնի ստեղծման մասին է, որը պետք է կատարի միանգամայն նոր գործառույթ:

Սակայն, ինչպես տեսնում ենք, Հայաստանի Հանրապետությունում բացակայում է միասնական մարմին կոռուպցիայի դեմ պայքարելու համար:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ արտասահմանյան առաջադեմ երկրների հակակոռուպցիոն մարմիններն իրականացնում են քննչական, կանխարգելիչ, կրթական գործառույթներ:

Եթե ներկայումս առկա են ՀՀ–ում մարմիններ, որոնք որոշակիորեն զբաղվում են քննչական գործառույթի իրականացմամբ, ապա կրթականը և կանխարգելիչն ըստ էության որևէ մարմին չի իրականացնում: Օրինակ՝ ՀՀ-ում հանրակրթական մակարդակում տարիքին համապատասխան մեթոդաբանությամբ մշակված հակակոռուպցիոն դասագրքեր չկան: Կոռուպցիայի թեմային հպանցիկ անդրադարձ է կատարվում միայն Հասարակագիտություն առարկայի շրջանակներում: Ինչ վերաբերվում է բարձրագույն կրթությանը, ապա հակակոռուպցիոն առարկաները ԲՈՒՀ-երում որպես դասավանդման պարտադիր առարկա նախատեսված չեն, և միայն հաշված ԲՈՒՀ-երում են դասավանդվում:

Սակայն, առաջադեմ երկրներում կարևորվում է կրթական գործունեության կազմակերպումը, որը կոռուպցիան հաղթահարելու առաջնային «զենքերից» մեկն է, քանզի դրա արդյունքում բարձրացվում է հասարակության իրավագիտակցության մակարդակը, կրթվում են պետության ապագան կերտող սերունդները:

Բացի այդ, այդպիսի մարմնի ստեղծումն ամրագրված է նաև միջազգային այնպիսի պայմանագրով, ինչպիսին է՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 6-րդ հոդվածը, որի համաձայն. «1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի մարմնի կամ, անհրաժեշտության դեպքում, մարմինների առկայությունը, որոնք

իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են.

ա) սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում նշված քաղաքականության իրականացումը և, համապատասխան դեպքերում, այդպիսի քաղաքականություն իրականացման հսկողությունը և համակարգումը.

բ) կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքներն ընդլայնելը և տարածելը:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմնին կամ մարմիններին պետք է ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառույթներն արդյունավետ և անհարկի ազդեցությունից ազատված: Կտրամադրվեն անհրաժեշտ նյութական պաշարներ և մասնագիտացված անձնակազմ, ինչպես նաև անձնակազմի այնպիսի դասընթացներ, որոնք կարող են պահանջվել նրանց գործառույթների իրականացման համար:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հայտնի այն մարմնի կամ մարմինների անվանումները և հասցեները, որոնք կարող են աջակցել մյուս Մասնակից պետություններին կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ որոշակի միջոցների մշակման և իրականացման գործում»:

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի» կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ անձինք կամ կազմակերպությունները մասնագիտանան կաշառակերության դեմ պայքարում: Նրանք պետք է ունենան անհրաժեշտ անկախություն, այդ Կողմի իրավական համակարգի հիմնական սկզբունքներին համապատասխան, որպեսզի հնարավորություն ունենան իրենց գործունեությունն իրականացնել արդյունավետորեն և առանց որևէ անհիմն ճնշման: Կողմը պետք է ապահովի, որ նման կազմակերպությունների աշխատակազմերը իրենց գործունեության համար ունենան բավարար պատրաստվածություն և ֆինանսական միջոցներ»:

Նույնիսկ, Կոռուպցիայի դեմ պայքարի հակակոռուպցիոն անկախ մարմնի ստեղծման անհրաժեշտության մասին խոսվում է Կոռուպցիայի դեմ պայքարի միջամերիկյան կոնվենցիայում և Աֆրիկյան տարածաշրջանային մակարդակում գործող համապատասխան միջազգային փաստաթղթերում:

Սակայն, ՀՀ–ում ներկայումս միջազգային վերը ներկայացված չափանիշին համապատասխան հակակոռուպցիոն մարմին դեռևս ստեղծված չէ:

Սույն վերլուծությամբ ներկայացված բացերը խոչնդոտում են կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարին, որի արդյունքում՝ ըստ միջազգային կազմակերպությունների հրապարակված տվյալների ՀՀ–ում կոռուպցիայի մակարդակը բավականին բարձր է՝ այլ պետությունների համեմատությամբ:

Այսպես, ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության հրապարակված վիճակագրական տվյալների, ստանում ենք հետևյալ պատկերը,որը ներկայացված է Աղյուսակ 40-ում:

Աղյուսակ 40. Կոռուպցիայի մակարդակը ՀՀ-ում ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի



Ինչպես տեսնում ենք, վերջին տասը տարիների ընթացքում ՀՀ–ում կոռուպցիայի մակարդակը գտնվել է բարձր հորիզոնականներում՝ այլ պետությունների համեմատությամբ:

Միևնույն պատկերն առկա է նաև Freedom house-ի կողմից հրապարակված 2006–2015թթ.–ի կոռուպցիայի մակարդակի վիճակագրությունը, որի արդյունքները ներկայացնում ենք ստորև՝ Աղյուսակ 41-ում[135]:

Աղյուսակ 41. Կոռուպցիայի մակարդակը ՀՀ-ում ըստ Freedom house-ի



Ինչպես տեսնում ենք, ՀՀ–ում վերջին տասը տարիների ընթացքում կոռուպցիայի մակարդակը նվազել է ընդամենը 0,5 միավորով, որը չափազանց փոքր ցուցանիշ է և առավելապես պայմանավորված է ոչ թե պետության կողմից որդեգրած քաղաքականության շրջանակներում իրականացվող կոռուպցիայի դեմ պայքարով, այլ գիտության, տեխնիկայի զարգացմամբ, որի պարագայում ոչ թե կոռուպցիայի մակարդակն է նվազում, ալ ընդհակառակը, աճում է վերջինիս լատենտայնությունը:

Ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով սույն աշխատության մեջ վկայակոչված Ջակարտայի սկզբունքները՝ հանգել ենք այն եզրակացության, որ Հայաստանում առավել նպատակահարմար է ստեղծել հակակոռուպցիոն ներքոգրյալ համակարգը՝ ձևավորել Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված անկախ ունիվերսալ մարմին՝ Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի բյուրո՝ օժտված ոչ միայն կրթական և կանխարգելիչ, այլ նաև իրավապահ մարմինների գործառույթներով՝ համապատասխան օրենքի հիման վրա: Միջազգային փորձի, մասնավորապես՝ Մոլդովա, Լատվիա, Լիտվա, Սինգապուր, ՀոնգԿոնգ, Մալազիա, Բութան, Ավստրալիա, Բոտսվանա, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս մոդելը լավագույն տարբերակն է Հայաստանի համար: Վերոնշյալ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան, ինչպես նշվեց, սահմանում է

[135] Տե՛ս https://freedomhouse.org/report/nations-transit/2015/moldova

ներածությունում, որ **համապարփակ և համակողմանի մոտեցումն անհրաժեշտ է կոռուպցիայի արդյունավետ կանխարգելման և դրա դեմ պայքարի համար:**

Թեև տեսության մեջ վիճելի է, որ կա կոռուպցիայի դեմ պայքարի միայն մեկ լավագույն մոդել, այնուամենայնիվ ունիվերսալ մարմինը նշվում է որպես առավել հաջողված, քանի որ՝

- Այն ավելի արդյունավետ է գործում, հաշվի առնելով, որ ռեսուրսները մեկ հարկի տակ են գտնվում, ինչն ավելի դյուրին է դարձնում բոլոր գործառույթների իրականացումը, որոնք փոխկապակցված են,
- Չեզոքանում է գերատեսչական շահերի ռիսկը և նվազում են շահերի բախման իրավիճակները,
- Նման մոդել որդեգրած երկրները ցույց են տալիս Transparency International ընկերության հակակոռուպցիոն ընկալման համաթվի բարձրացման դրական միտում,
- Այս մոդելը որպես կանոն չի իրականացնում դատախազական գործառույթներ, այն է՝ մեղադրանքի պաշտպանություն դատարանում, որը ՀՀ-ում իմպլեմենտացնելը ավելի նպատակահարմար կլինի:

Ստեղծել հակակոռուպցիոն մարմին, որը.

1.1 կլինի անկախ, չի գտնվի իշխանության որևէ թևի ենթակայության տակ և ապահովված կլինի ֆինանսական անկախությամբ: Հայաստանում վերջինիս ապահովման համար անհրաժեշտ է «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով առանձին տողով ֆինանսավորում հատկացնել հակակոռուպցիոն մարմնին (նման փորձ առկա է Ուկրաինայում):

1.2 Կգործի ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված հատուկ օրենքի հիման վրա, որով կկանոնակարգվեն այդ մարմնի ստեղծման նպատակը, գործառույթները, ձևավորման և գործունեության կարգը և այլն: Միջազգային փորձի, մասնավորապես՝ Մոլդովա, Լատվիա, Լիտվա, Սինգապուր, ՀոնգԿոնգ, Մալազիա, Բութան, Ավստրալիա, Բոտսվանա, ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այս պահանջը նույնքան անհրաժեշտ է մարմնի բնականոն գործունեության ապահովման համար, որքան՝ անկախությունը:

1.3 Կունենա հետևյալ կազմակերպաիրավական տեսքը. տնօրեն՝ անկախ հանձնակատար և աշխատակազմ: Վերոնշյալ առաջարկությունը ևս հիմնավորվում է միջազգային փորձով, մասնավորապես՝ Ռումինիա, Բոսնիա-Հերցեգովինա, Լեհաստան, Սլովենիա, Չեխիա, Խորվաթիա, Հունգարիա, Բրազիլիա, Կանադա, Սինգապուր, ՀոնգԿոնգ, Հարավային Կորեա, Ինդոնեզիա, Մալազիա, Թայլանդ, Ավստրալիա, Նոր Զելանդիա:

Բացի այդ, ՀՀ-ում արդեն նման կազմակերպաիրավական ձևով գործող համակարգերից կարելի է զուգահեռներ անցկացնել Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հետ:

Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման բյուրոն կազմված կլինի տնօրենից, նրա 3 տեղակալներից, աշխատակազմից և հասարակական խորհրդից:

1.4 Կունենա տնօրեն, որը կնշանակվի օրենսդիր մարմնի կողմից՝ ապահովելով վերջինիս անկողմնակալությունն ու անկախությունը: Նման կարգավորումներ են նախատեսված Մոլդովայում, Բոսնիա-Հերցեգովինայում, Լեհաստանում, Ալբանիայում, Ավստրալիայում և այլն: Փորձի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հակակոռուպցիոն մարմնի ձևավորման լավագույն ընթացակարգը դա բաց և թափանցիկ մրցույթի կազմակերպումն է, որի հաղթողը պետք է նշանակվի համապատասխան պաշտոնում:

Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման բյուրոի տնօրենին բաց հավաքագրման եղանակով կընտրի ՀՀ Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով: Բյուրոյի տնօրենը կարող է ևս մեկ անգամ վերընտրվել 6 տարի ժամկետով:

Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարում են հետևյալ դեպքերում.

1) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել.

2) նա հրաժարվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից կամ ձեռք է բերել այլ երկրի քաղաքացիություն.

3) նա Ազգային ժողովին հրաժարական ներկայացնելուց ոչ ուշ, քան 10 օր հետո կրկնում է իր հրաժարականը.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

5) նա մահացել է։

1.5 Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման բյուրոյի տնօրենը կունենա երեք տեղակալներ, որոնց նշանակում է Բյուրոյի տնօրենը՝ 6 տարի ժամկետով:

Բյուրոյի տնօրենի տեղակալները կարող են ևս մեկ անգամ վերանշանակվել 6 տարի ժամկետով: Բյուրոյի տնօրենի տեղակալները կհամակարգեն Բյուրոյի 3 հիմնական՝ Կոռուպցիոն գործերի քննության, Կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականության և պրակտիկայի (կոռուպցիոն սխեմաների վերլուծության/բարեփոխումների), և Հակակոռուպցիոն կրթության ստորաբաժանումների, ինչպես նաև այլ ստորաբաժանումների աշխատանքները:

Բյուրոյի գործունեությունը կարգավորող օրենքի հիման վրա տնօրենը կհաստատի Բյուրոյի աշխատակիցների վարվեցողության կանոններ և Բյուրոյի կազմում կգործի էթիկայի հանձնաժողով:

1.6 Կունենա աշխատակազմ, որի անդամները կընտրվեն բաց և հրապարակային մրցույթի արդյունքում: Օրենքով անհրաժեշտ է հստակ սահմանել, որ

- **թե՛ մարմնի տնօրենը և նրա տեղակալները, թե՛ աշխատակազմի մնացած անդամները պետք է ունենան աշխատանքային փորձառություն հակակոռուպցիոն ոլորտում: Հաշվի առնելով վերջիններիս առաքելության կարևորությունը, նպատակահարմար է նախատեսել ղեկավարի համար 7 տարվա, նրա տեղակալների համար 5 տարվա, իսկ մնացած անդամների համար՝ 2 տարվա փորձառություն հակակոռուպցիոն ոլորտում:**
- **թե՛ տնօրենը և նրա տեղակալները, թե՛ աշխատակազմի մնացած անդամները պետք է լինեն բարձր բարոյական հատկանիշներով, իդեալական հեղինակությամբ օժտված և հակակոռուպցիոն արժեքներ կրող անձինք:** Օրինակ նման պահանջներ են սահմանված Ուկրաինայի, **Մոլդովայի** (անկաշառելիության թեսթավորման կարգ, մարմնի աշխատակիցների վարվելակերպի մոնիթորինգ,), Լատվիայի, Լիտվայի, **Կանադայի** և այլ երկրների օրենսդրություններով:

1.7 Տնօրենը և նրա տեղակալները, աշխատակազմի անդամները պետք է լինեն անկախ, իրավունք չեն ունենա զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, չեն հանդիսանա որևէ կուսակցության անդամ: Աշխատակազմի հիմնական գործառույթները պետք է լինեն հակակոռուպցիոն մարմնի մասին օրենքի կենսագործումը: Նման կարգավորումն օրինակ նախատեսված է Կանադայի օրենսդրությամբ, որի համաձայն նույնիսկ բոլոր այլ հանրային ծառայողների նշանակումները պետք է զերծ լինեն որևէ քաղաքական միջամտությունից, և ապահովվի մասնագիտական և անկուսակցական հանրային ծառայություն:

1.8 Գործունեություն կծավալի մշտական հիմունքներով՝ ամենօրյա աշխատանքային ռեժիմով:

1.9 Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման բյուրոյին պետք է օժտել հետևյալ գործառույթներով.

- կոռուպցիոն հանցագործությունների քննում, որոնք կներառեն ՀՀ օրենքով նախատեսված բոլոր քննչական գործառույթները,
- կոռուպցիոն սխեմաների ուսումնասիրություն և հակակոռուպցիոն բարեփոխումների մշակում,
- հակակոռուպցիոն և բարեխղճությանը նվիրված կրթական ծրագրերի կազմում, հաստատում և իրականացում (դպրոցներում, համալսարաններում, հիվանդանոցներում, կրոնական կազմակերպություններում, տնտեսական ընկերություններում, հանրային ծառայության մարմիններում, նաև առցանց ուսուցումների, սեմինարների, հասարակության իրավագիտակցության և հակակոռուպցիոն ընկալման բարձրացմանն ուղղված հանրային իրազեկման միջոցառումների, ծրագրերի իրականացում, հակակոռուպցիոն բնույթի թատերական ներկայացումների, ֆիլմերի, համակարգչային խաղերի, հաղորդումների, մուլտֆիլմերի պատրաստում, դասամոդուլների ժողովածուների հրապարակում, որոնք կներառեն բազմաթիվ առաջարկություններ, թե ինչպես է հարկավոր դասավանդել հակակոռուպցիոն առարկաներ),

- դպրոցներում, ԲՈՒՀ-երում և այլ հաստատություններում հակակոռուպցիոն ակումբների ստեղծմանը նպաստում և վերջիններիս գործունեության համակարգում,
- կոռուպցիայի դեմ պայքարի ազգային ռազմավարության մշակում, հաստատում, նրա իրականացմանն աջակցում և նրա իրականացման նկատմամբ մոնիթորինգ,
- կոռուպցիայի ոլորտում վիճակագրական տվյալների հավաքագրում ու վերլուծություն,
- կոռուպցիոն թեմաներով հետազոտությունների իրականացում կամ դրանց պատվիրակում,
- օրենսդրության հակակոռուպցիոն վերլուծություն և համապատասխան առաջարկությունների մշակում,
- իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննություն,
- կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերում այլ պետական մարմինների հետ համագործակցություն,
- կոռուպցիայի կանխարգելմանը վերաբերող իրավական նորմերի կատարման նկատմամբ հսկողություն,
- համագործակցություն միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների հետ,
- միջազգային հակակոռուպցիոն նորմերից բխող պարտավորությունների իրականացման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում պետական մարմիններին,
- կոռուպցիայի դրա դեմ պայքարի և կանխարգելման ոլորտներում համագործակցություն ԶԼՄ-ների, գիտական, մասնագիտական և այլ ոչ պետական կառույցների հետ,
- խորհրդատվության տրամադրում պետական և մասնավոր ոլորտներում էթիկայի կանոնների մշակման և կիրառման վերաբերյալ, բիզնես էթիկայի օրինակելի կանոնների առաջարկում,
- բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծություն, շահերի բախման, ծախսերի, նվերների ընդունման և համանման այլ ասպեկտների վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների կազմում,

- **բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը ուշ լրացնելու, թերի լրացնելու, չլրացնելու կամ կեղծ տեղեկություններ պարունակող հայտարարագրեր ներկայացնելու համար բարձրաստիճան պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասություն,**
- **պետական և մասնավոր ոլորտներում հակակոռուպցիոն միջոցառումների իրականացում կամ աջակցություն դրանց իրականացմանը,**
- **հակակոռուպցիոն թեմաներով նյութերի հրապարակում,**
- **կառավարության կողմից դրամական միջոցներ ստացող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություն և կոռուպցիոն դրսևորումներ նկատելու դեպքում արդյունավետ քննության իրականացում,**
- **հանրային ծառայողների և հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների բարեխղճության մակարդակի գնահատում,**
- **քաղաքացիական խմբերին տեղական հակակոռուպցիոն կենտրոններ գործարկելու, մասնավորապես՝ մոնիթորինգներ, ուսուցումներ և բարեխղճության խթանման արշավներ իրականացնելու համար աջակցություն,**
- **կոռուպցիոն հանցագործությունների մասին հաղորդումներ տված անձանց և նրանց ընտանիքի անդամների պաշտպանության համար օրենքով երաշխիքների ամրագրում,**
- **այլ գործառույթներ:**

Նման գործառույթներ իրականացնում են Սլովենիայի, Ուկրաինայի, Մոլդովայի, Լատվիայի, Լիտվայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, ՀոնկԿոնգի, Հարավային Կորեայի, Բոտսվանայի, Արգենտինայի և մի շարք այլ երկրների հակակոռուպցիոն մարմինները:

2. **Ստեղծել հակակոռուպցիոն և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում մասնագիտական փորձառնություն ունեցող հասարակական կազմակերպություններից բաղկացած խորհուրդ, որը վերահսկողություն կիրականացնի հակակոռուպցիոն մարմնի գործունեության նկատմամբ: Ուկրաինա, Մոլդովա, Լատվիա** (Քաղաքացիական վերահսկողության խորհուրդներ՝ կազմված է մոտ 15 անդամ հասարակական կազմակերպություններից), **Հոնգ Կոնգ** (Հանձնաժողովի գործունեությունը դիտարկող խորհրդատվական գործառույթներ

ունեցող անկախ կոմիտեներ), **Պերու** (Հակակոռուպցիոն մարմնում հասարակական սեկտորի ներկայացուցիչների լայնածավալ մասնակցություն):

Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման բյուրոյին կից կգործի հասարակական խորհուրդ՝ բաղկացած 7 անդամներից: Հասարակական խորհրդի կազմում պետք է ընդգրկվեն կոռուպցիայի դեմ պայքարում նշանակալի ավանդ ունեցող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ՁԼՄ-ների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խորհրդի անդամները նշանակվում են Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման բյուրոյի տնօրենի կողմից վեց տարի ժամկետով՝ օրենքով սահմանված ընտրության չափանիշների հիման վրա:

3.**Ստեղծել Թեժ գիծ, որին կկարողանա զանգահարել յուրաքանչյուր անձ և հայտնել իր նկատմամբ կիրառված կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ մտահոգությունները՝** ՀՀ–ում Ուկրաինայի և Մոլդովայի երկրների օրինակով:

4. Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման բյուրոյի տնօրենը, նրա տեղակալները և աշխատակիցները իրենց լիազորությունների իրականացման շրջանակներում ձեռնարկված գործողությունների համար պետք է անձեռնմխելի լինեն քրեական և քաղաքացիական վարույթներից և պետք է պաշտպանված լինեն կեղծ քաղաքացիական, վարչական և քրեական գործերից:

Բյուրոն իր գործունեության իրականացման վերաբերյալ տարեկան մեկ անգամ հաշվետվություն կներկայացնի Ազգային ժողովին և հանրությանը: Բյուրոյի տնօրենը կարող է հանդես գալ նաև արտահերթ հաշվետվություններով:

2015թ. դեկտեմբերի 15-ի ՀՀ Սահմանադրական փոփոխությունների 202-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով: Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային փորձը ցույց է տալիս, որ հակակոռուպցիոն անկախ մարմինը արդյունավետ է աշխատում, երբ ունի տնօրեն՝ անկախ հանձնակատար և աշխատակազմ, որը ներկայացված է առավել մանրամասն 1.4 առաջարկությունում, գտնում ենք, որ հակակոռուպցիոն մարմի սահմանադրաիրավական հիմքերը պետք է զետեղել Սահմանադրության 178-րդ հոդվածի ներքո: Պետք է հստակ ամրագրել, որ հակակոռուպցիոն անկախ ունիվերսալ մարմինը ևս հանդիսանում է քննչական գործառույթներ իրականացնող մարմին, որն օժտված կլինի նաև կանխարգելիչ և կրթական գործառույթներով:

Քանի որ, համաձայն Սահմանադրության 202-րդ հոդվածի առաջին մասի, 178-րդ հոդվածը սահմանված չէ այն հոդվածների շրջանակում, որոնք պարտադիր պետք է փոփոխվեն հանրաքվեի արդյունքում, ուստի վերոնշյալ հոդվածի փոփոխության հնարավորությունը բխում է օրենսդիր կամահայտնությունից և հնարավոր է գործող իրավական նորմերի պարագայում:

Վերոհիշյալ տարբերակի իրականացման անհնարինության դեպքում միայն առաջարկվում է երկրորդ տարբերակը՝ ստեղծել անկախ հակակոռուպցիոն մարմին, որը կզբաղվի կրթական և կանխարգելիչ գործառույթների իրականացմամբ, որի հիմքում հնարավոր է դիտարկել նաև Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կարողությունների բազան, օրինակ՝ հայտարարագրերի վերլուծությունները, իսկ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը վերակազմավորել որպես կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննություն իրականացնող մասնագիտացված կառույցի: Սակայն կրթական և կանխարգելիչ գործառույթների իրականացմամբ զբաղվող անկախ հակակոռուպցիոն մարմնի վերոհիշյալ տարբերակը, հաշվի առնելով միջազգային առաջավոր և արդյունավետ փորձը, որով հիմնավորվում է, որ նման մարմնի կազմակերպչական կառուցվածքը պետք է լինի ոչ թե կոլեգիալ, այլ միանձնյա ղեկավարման տեսքով, հնարավոր չէ իրականացնել ներկայիս սահմանադրաիրավական կարգավորումների շրջանակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ նախագահի 2004 թվականի հունիսի 1–ի հրամանագիր,
2. ՀՀ Կառավարության 2015 թվականի փետրվարի 19–ի որոշումը Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը,

խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին,

3. 2014–2017թթ ռազմավարության խնդիրները և գործունեության ուղղությունները

4. The Anti-Corruption Authority Standards of the European Partners against Corruption (EPAC) Principle 1 ('the Rule of Law'),

5. Opinion on two draft anti-corruption laws of Ukraine, ODIHR,

6. OECD, Anti–Corruption Reforms in Ukraine, Round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action plan,

7. Jakarta Statement on Principles for Anti-Corruption Agencies, Jakarta, 26-27 November 2012

8. OECD, Anti–Corruption Reforms in Ukraine, Round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action plan, 24 March 2015,

9. The Georgian president's decree On Approving Composition and Charter of Interagency Coordination Council for Combating Corruption, Tbilisi, 26 December 2008

10. The Georgian Government's decree On Approving Composition and Charter of Interagency Coordination Council for Combating Corruption, Tbilisi, 30 December 2013

11. Georgia national integrity system assessment 2015, Transparency International Georgia

12. Georgian Anti-Corruption Action Plan 2014 – 2016, Strategic priorities

13. OECD ACN, Istanbul Anti-Corruption Action Plan, Third Round of Monitoring: Georgia, Monitoring Report, OECD, Paris, 25 September 2013,

14. National Integrity Commission, Annual activity report of 2013

15. Corruption prevention and combating bureau, 2002-2007,

16. Law On Corruption Prevention and Combating Bureau,

17. Corruption prevention and combating program 2009-2013,

18. Guidelines for the corruption prevention and combating 2015-2020,

19. hrase 2 report on implementing the OECD anti-bribery convention in Latvia, October 2015,

20. Progress and results in preventing and combating corruption in Latvia, Periodical update, 2014,

21. informative report On the Activities of the Corruption Prevention and Combating Bureau (KNAB) from 1 July 2015 till 31 December 2015,

22. GRECO 2012 Compliance Report in respect of Latvia, par. 22.

23. Opinion on the Law on the Bureau on Prevention and Combating of Corruption of Latvia,

24. Law on the special investigation service

25. Statute of the special investigative service of the Republic of Lithuania,

26. European commission, Estonia to the EU anti-corruption report,

27. Anti-corruption strategy 2013-2020 of Estonia,

28. Anti-corruption act of Estonia,

29. European Commission: COM (2015) final "Report from the Commission to the European Parliament and the Council on progress in Bulgaria under the co-operation and verification mechanism"

30. European Commission, COM (2014) 38 final, "Annex Croatia to the EU Anti-Corruption Report"

31. World Bank, 2015, "Asset disclosure and wealth assessment system in Romania: Lessons for Ukraine",,

32. Freedom House, 2015, "Nations in Transit: Serbia",

33. European Commission, COM (2014) 38 final, "Annex Czech Republic to the EU Anti-Corruption Report

34. Annex Slovakia to the EU Anti-Corruption Repor

35. Public Service Employment Act (S.C. 2003, c. 22, ss. 12, 13),

36. The 100 years of the Public Service Commission of Canada 1908-2008, Public Service Commission of Canada July 2008

37. ""Best Practices to Fight Corruption" Canada: Selected Programs - The Government of Canada

38. La Comisión de Alto Nivel Anticorrupción CAN Anticorrupción

39. Foreign Corrupt Practices Act (FCPA), in 1977.

40. Independent Commission Against Corruption Act 1988 No 35, 13A

41. 27.11.2014—Independent Commissioner Against Corruption Act 2012